

**ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ, ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ
ՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ Ն ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
1896-1921 ԹԹ.**

(հոդվածների ժողովածու)

**ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2024**

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Մ 741

Ժողովածուն տպագրության է երաշխավորել ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Հեղագրությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գրախոս՝ պ. գ. թ., դոցենտ Արման Մարտիրոսյան

Մ 741 Միսիոներական քարոզչությունը և հայ կաթոլիկ ու բողոքական հարանվանությունների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 1896-1921 թթ.: Հոդվածների ժողովածու / Ա. Հարությունյան, է. Հովհաննիսյան, Ա. Բալյան, Վ. Հարությունյան.- Եր.: Հեղ. հրատ., 2024, 148 էջ:

Պատմակեղեցագիտական բնույթի հետազոտության մեջ արխիվային վավերագրերի, հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուների, հոգևոր ու աշխարհիկ գործիչների հուշագրությունների, գիտատեսական ուսումնասիրությունների, պարբերական մամուլի նյութերի և սկզբնաղբյուրային այլ տեղեկությունների համակողմանի ուսումնասիրման և վերհանման միջոցով, թեմատիկ հաջորդականությամբ, անաչառության և համադրական վերլուծության սկզբունքներով, պատմաքննական և համեմատական մեթոդաբանության կիրառմամբ ուսումնասիրման է ենթարկվել 1896-1921թթ. Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում կաթոլիկ ու բողոքական քարոզչության առանձին դրսևորումները և հայ հարանվանությունների գործունեության պատմության դրվագները՝ այն ներկայացնելով ազգային-քաղաքական գործընթացների ընդհանուր համատեքստում:

ISBN 978-9939-0-5074-4 ՀՏԴ

© Հարությունյան Ա, 2024

© Հովհաննիսյան Է., 2024

© Բալյան Ա., 2024 ՀՏԴ 94(479.25)

© Հարությունյան Վ., 2024

94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐԵԱԿ ԲԱԼՅԱՆ, ԵՎՐՈՊԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ՔԱՐՈՁՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ4

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍՈՆԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1830-1831 ԹԹ. .29

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐ ՀԱՐԻՍՈՆ ԴՈՒԱՅԹԻ ՀԱՂՈՐԴԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ66

VAHAGN HARUTYUNYAN, EPISODES FROM THE HISTORY OF THE ACTIVITIES OF PTOTESTANT PREACHERS IN WESTERN ARMENIA (End of the 19th century – beginning of the 20th century).....92

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐԵԱԿ ԲԱԼՅԱՆ, ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ 1915 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ (ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ).....105

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐԵԱԿ ԲԱԼՅԱՆ, ՀՈԳԵՎՈՐ - ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍԿՁԲԻՆ.....130

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

ԵՎՐՈՊԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

Մուտք

14-րդ դարից սկսած նախ Եվրոպացի կաթոլիկական, իսկ ավելի ուշ նաև ամերիկացի բողոքական միսիոներները մուտք գործեցին Օսմանյան Թուրքիա և սկսեցին քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի ծանր վիճակն օգտագործել իրենց կրոնաքաղաքական ծածուկ նպատակներն ու շահերն իրականացնելու համար²: Միսիոներական վարդապետությունն ի տարբերություն այլ ազգությունների ներկայացուցիչների, գրկաբաց ընդունվեց հատկապես հայության կողմից, որը պայմանավորված էր հիմնականում Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր դժգույն իրավիճակով: Հենց միսիոներներն էին, որ առաջին անգամ հայերի շրջանում հուսադրեցին այն գաղափարը, որ Եվրոպան և Հռոմի պապը կարող էին օժանդակել Հայաստանի ազատագրության գործին՝ սակայն միայն կաթոլիկություն ընդունելու պայմանով: Նրանց անմիջական ազդեցությամբ էր, որ հայ կաթողիկոսները 16-17-րդ

¹ Հերագրությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 93, թ. 18:

դդ. ձեռնունայն ճանապարհորդություններ կատարեցին դեպի եվրոպական մի շարք երկրներ:

Երկար ժամանակ բողոքական միսիոներներն այն համոզմանն էին, որ Հայ Եկեղեցին գործում էր «կռապաշտական» համակարգով³: Սակայն արևմտահայ իրականության մեջ ժողովրդի հետ երկար շփումներից հետո, կամաց-կամաց փոխվեց նրանց թյուր կարծիքը և նրանք ավելի մերձեցան Հայ Առաքելական Եկեղեցուն:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին բողոքական քարոզիչները Կ. Պոլսում հաստատվելուց հետո փորձեցին հիմնավորվել նաև Վանի նահանգում⁴: Նրանց կարողություններն օգտագործելու նպատակադրությամբ էր, որ Արամ Մանուկյանը 1913 թ. սեպտեմբերի 6-ի իր նամակում Ս. Վրացյանից խնդրում էր աջակցել ԱՄՆ տեղափոխված դոկտոր Ռեյնոլդսին՝ Վանում ամերիկյան քոլեջ բացելու նպատակով հանգանակություն կատարելու գործում⁵:

Գերմանական միսիոներություն

Առաջին աշխարհամարտը և արևմտահայության տեղահանությունը Վանում կասեցրին միսիոներական աշխա-

³ **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), Պոսթոն, 1950 էջ 293:

⁴ Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Հարությունյան Վ.**, Արևմտյան Հայաստանում բողոքական միսիոներության քարոզչական գործունեության պատմությունից (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ), Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք 2-րդ, Երևան, 2016, էջ 142-151:

⁵ **Վրացյան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 36:

տանքները: Սակայն ինչպես գերմանացի միսիոներ Էռնստ Ջոմմերն է նշում՝ «առանձնապես մեծացավ և կարևորվեց 22 տարի առաջ մեզ Արևելք տանող կանչի նշանակությունը: Որովհետև խոսքն այստեղ միայն մարդասիրական բարեգործության մասին չէ»⁶:

Թուրքական կառավարությունը՝ հավատարիմ մնալով իր գործելակերպին, ամենուրեք, ուր հնարավոր էր, քրիստոնեական եկեղեցիները վերածում էր մահմեդական մզկիթների: Այսպիսի պայմաններում էլ ավելի էր կարևորվում գերմանացի միսիոներների աշխատանքը:

Դեռևս 1914 թ. դեկտեմբերից օրիորդ ՄաքԼարենը և գերմանական որբանոցի քույր Մարթան վիրավորներն էին խնամում թուրքական զինվորական հիվանդանոցում⁷: Գերմանական կառավարության ճնշման շնորհիվ նրանք հասան այն բանին, որ իրենց օժանդակության ներքո աշխատող բոլոր հայ քրիստոնյաները ցուցակներում գրանցվեցին որպես գերմանական առաքելության ներկայացուցիչներ և խուսափեցին աքսորի կործանարար հետևանքներից⁸:

Հետաքրքրական և արժեքավոր են հատկապես գերմանական միսիոներների տեղեկությունները Վանի ինքնապաշտպանության վերաբերյալ: Այդ մասին Արևելքում քրիստոնեական

⁶ **Ջոմմեր Է.**, Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մարկարյան, Երևան, 2002, էջ 52:

⁷ **Knapp G.**, *The tragedy of Bitlis*, New York, Chicago, London, Edinburg, 1919, p. 21-28.

⁸ **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 38:

բարեգործական գերմանական օժանդակության միության ղեկավար, ծագումով շվեյցարացի քարոզիչ Յ. Շայրրին, որը նաև Վանի գերմանական որբանոցի տնօրենն էր, Յ. Լեփսիուսին ուղղած իր՝ 1916 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում հայտնում էր հետևյալը. «Երբ 20.4.1915 թ. իմ աչքի առաջ սկսվեցին մարտերը և մեր վրա սոսկալի կրակում էին, ես ստիպված էի գրել վալիին: Ես նրան պատմեցի, թե ինչպես են սկսվել մարտերը, տեղեկացրի, մեզ վրա գնդակների անձրև է տեղում և խնդրեցի կասեցնել նման գործողությունները, քանի որ, իմ կարծիքով, անհնար է, որ նման բան կարող է վայրի ցանկությամբ լինել: Նաև խնդրեցի վեճերը հարթել խաղաղ ճանապարհով: Իմ գրությամբ գնացի դոկտոր Ուշերի մոտ (ճանապարհը շատ վտանգավոր էր, քանի որ անընդհատ կրակում էին), ընթերցեցի նրան իմ գրությունը և խնդրեցի նույնը անել: Զևդերի ապրիլի 23-ի նամակը մեր գրությունների պատասխանն էր:

Բացի այդ, ինքնապաշտպաններին խնդրեցի ետ քաշվել մեր կայանի ճակատից, որպեսզի կրակը մեզ վրա չհրավիրեն: Ի գոհունակություն ինձ, իմ խնդրանքը կատարվեց: Սակայն դրանից հետո էլ մեր դեմ կրակը չդադարեց»⁹:

Ամերիկյան միսիոներություն

Ամերիկյան միսիոներական առաքելությունը Յ. Լեփսիուսի հավաստմամբ գտնվում էր Վանի Այգեստան թաղամասի կենտրոնական մասի հարավ-արևելյան բարձունքին և բաղկացած էր մեկ եկեղեցուց, դպրոցական երկու մեծ ու երկու փոքր

⁹ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, Երևան, 2008, էջ 308:

նոր շենքերից, մեկ դպրոց-արհեստանոցից, հիվանդանոցից, բուժական հաստատությունից և միսիոներների համար նախատեսված չորս կացարաններից: Ամերիկյան առաքելության անդամներն էին՝ տիկին Ռեյնոլդսը (դոկտոր Ռեյնոլդսը ժամանակավորապես գտնվում էր Ամերիկայում), հիվանդանոցի գլխավոր բժիշկ Քլարենս Ըշըրը, արհեստանոցի տնօրեն տիկին Ըշըրը, տղաների դպրոցի տնօրեններ տեր և տիկին Յարրոուները¹⁰, աղջիկների դպրոցի տնօրեն՝ օրիորդ Ռոջերսը, նախակրթարանի տնօրեն՝ օրիորդ Սիլիմանը, երաժշտության ուսուցչուհի՝ օրիորդ Ըշըրը, հիվանդանոցի ավագ քույր՝ օրիորդ Բոնդը և միսիոներուհի Քլարենը: Վանում էր գտնվում նաև օրիորդ Քնապը, որը հյուր էր եկել Բիթլիսից¹¹:

Ամերիկյան միսիոներները շատ դիպուկ և կարևոր դիտարկումներ են կատարել ցեղասպանության պատճառների ու բնույթի մասին: Այսպես, 1917 թ. մարտին ամերիկյան միսիոներ Ք. Ըշըրը գրում է, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության ոչնչացումը ծրագրված է եղել Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց շատ ավելի առաջ: Ըստ նրա՝ «նրանցում (խոսքը

¹⁰ Հետագայում՝ 1915թ. դեկտեմբերի 20-ին Էռնեստ Ալբերտի Յարրոուն տրվում է գաղթականության օգնության ամերիկյան կոմիտեի թիվ 1405 վկայականը, որը նրան հնարավորություն էր ընձեռում բնակվելու և գործելու Երևանում: Տե՛ս ՀԱԱ ֆ.50, ց. 1, գ.127, թ. 25:

¹¹ **Պրայս Ճ. Դերկոմս.**, Անգլիական կառավարության կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ. Պոլիս, 1919, էջ 56-57, նաև՝ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 304:

ջարդերի մասին է, - Ա. Հ.) կրոնական մոլեռանդությունը հպան-
ցիկ դեր է ունեցել, այն էլ՝ կոտորածները սկսելուց հետո միայն՝
իրականում այդ ծրագրի հետ կապ չունենալով»¹²:

Առավել կարևոր են ամերիկյան միսիոներների տեղեկութ-
յունները Վանի նահանգի կոտորածների, ինքնապաշտպանա-
կան կոիվների և Վանի 1915 թ. հերոսամարտի վերաբերյալ, որը
անմիջական պատկերացում է տալիս տիրող մահասարսուռ ի-
րավիճակի և հայ բնակչության տառապանքների մասին, մաս-
նավորապես՝ 1915 թ. ապրիլին Վանի կոիվների ժամանակ:

Վանի հերոսամարտի ժամանակ ամերիկյան առաքելության
անդամներն ակամայից հայտնվել էին թուրքական և հայկական
ինքնապաշտպանական դիրքերի միջնամասում և անմիջակա-
նորեն շփվել են ինչպես Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի,
այնպես էլ ինքնապաշտպանության հայ ղեկավարների հետ: Ե-
թե հաշվի առնենք այն հանգամանքը, որ, Վանը 1915թ. դեպքե-
րի բերումով, փաստորեն, մեկուսացել էր արտաքին աշխարհից,
ապա միսիոներների հաղորդած ճշգրիտ տեղեկություններն ա-
ռաջիններից էին, որ մանավանդ ԱՄՆ-ում օգնեցին
բացահայտելու Վանի հայության մտացածին «ապստամբութե-
յան» իրական պատկերը¹³:

¹² **Somakian M. J.**, *Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920*, London, New York, 1995, pp. 76-77.

¹³ Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. հայոց
ցեղասպանության մասին, կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան
Զաքարյան, Երևան, 2002, էջ 6:

Ամերիկացի միսիոներ, բժիշկ Ք.Ըշըրի հավաստիացմամբ՝ Վանի վալի Ջնդեթը ծրագրել էր Վանի նահանգի քաղաքի հայերի համընդհանուր կոտորած: Սակայն նրա եղկելի մտահղացումը քաղաքի գրավման առումով ի դերև եղավ՝ մասամբ այն պատճառով, որ ամերիկյան միսիոներներն ամեն կերպ ընդդիմացան Ջնդեթի պահանջ-սպառնալիքներին՝ թույլ չտալով «միսիոներների պաշտպանության նպատակով» թուրքական զինվորներ տեղակայել ռազմավարական կարևորագույն դիրք զբաղեցնող ամերիկյան առաքելության տարածքում¹⁴:

Բավականին արժեքավոր են 18 տարի Վանում ապրած Ք.Ըշըրի տեղեկությունները Վանի Ապրիլյան հերոսամարտի մասին: Այդ առումով հատկանշական է ԱՄՆ-ի Փութաքեթ քաղաքում Վանի հերոսամարտին նվիրված նրա ելույթի հետևյալ հատվածը. «Հայ ժողովուրդին չարչարանքները ներկայացնելու համար ամբողջ շաբաթներ պետք է խօսիլ անընդհատ: Բայց ես կ'ուզեմ ձեզ ներկայացնել անոր հերոսներուն հայրենասիրութիւնը՝ քանի մը գծերու մէջ, ցոյց տալու համար, թէ տակաւին այս ցեղը ապրելու յոյս կը ներշնչէ և պիտի ապրի: Երբ Խարբերդի, Տիգրանակերտի, Մալաթիայի և ուրիշ վայրերու տեղահանութեան լուրերը կը հասնէին, Վասպուրականի հերոսները գործի վրայ էին: Վանի կուսակալը (Ճէվտէդ) հրաման արձակեց, որպէսզի պատրաստ ըլլան գաղթելու: Վանի ժողովուրդը, փախան գաղթի պատրաստութեան, ինքնապաշապանութեան

¹⁴ **Clarence Douglas. Ussher, M. D., Grace H. Knapp**, *An American Physician in Turkey: A Narrative of Adventures In Peace and in War*, Boston and New York, 1917 (November), pp. 236, 239-240, 242-243, 261.

դրօշը պարզեց յաջորդ օրը... Թրքական կանոնաւոր զօրքը, ղեկավարութեամբ գերման սպաներու, ամբողջ ամիս մը կռուելէ յետոյ, չարաչար կերպով պարտուեցաւ և քաղաքը թողուց Արամներու և ուրիշ հերոսներու: Ասոնք այն հերոսներն են, որ այս ինքնապաշտպանութեան փառաւոր յաղթանակին գործը կազմակերպեցին... Հապա Իշխանը... այդպիսի հերոս քիչ անգամ կը գտնուի ազգերու հերոսացանկին մէջ: Վանի այս փառաւոր յաղթանակը եզակի պիտի մնայ հայ պատմութեան մէջ: Այսպէս եղած է պատկերը նաև ներքին շատ մը գաւառներու մէջ, որոնք դիմադրեցին թուրք բարբարոս բանակին և սուղ ծախսեցին իրենց կեանքը, բայց արտաքին օգնութիւն չի կրնալով ստանալ, ընկճուեցան վերջապէս»¹⁵:

Իր հերթին, Ք.Ըշըրի կինը Վանի ամերիկյան միսիոներութեան ղեկավար Ռեյնոլդսին ուղղված իր նամակում ներկայացնում է վանեցիների «հրաշալի տաղանդը» և կորովը քաղաքում ապաստանած 20, 000 թշվառներին և կարոտյալներին օգնելու գործում¹⁶:

Բացի այդ, Վանում ամերիկյան միսիոներական առաքելութեան անդամներից մեկը խոսելով 1915 թ. ապրիլին Շատախում ծավալված դեպքերի մասին, վկայակոչում է անձամբ իր լսած այն կարևոր փաստարկը, թե ինչպես Ջևդեթն իր մոտ էր կանչել «քեսաբ թաբուրի» (մսագործների գունդ- Ա. Հ.) կոչված գնդի հրամանատարին և բառացիորեն հրամայել՝ գնալ Շատախ ու

¹⁵ «Յուսաբեր», Կահիրե, 1916, դեկտեմբերի 24:

¹⁶ **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, Խ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 120, նաև «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, հունիս, թիւ 8:

«ջնջել տեղի բնակչությանը»: Ապա դառնալով ամերիկացի միսիոներին ասել էր, որ «կենդանի չեմ թողնի ծնկից բարձր և ոչ մեկին»¹⁷:

Առաջին միսիոներական կազմակերպություններն էին, որ հոգ տարան Այգեստանից իրենց մոտ ապաստանած շուրջ 4000 վանեցիների պաշտպանության հարցը: Այդ մասին ամերիկացի միսիոները հիշում է. «Կիրակի օրը՝ 25-ին, քաղաք մտավ փախստականների առաջին խումբը՝ իրենց վիրավորներով: Մեր հիվանդանոցը, որտեղ սովորաբար 50 մահճակալ է տեղավորվում, ստիպված էր 142 հիվանդների համար տեղ պատրաստել: Փոխառնվեց սպիտակեղեն, և ամենուրեք հատակին անկողիններ պատրաստվեցին: Ամեն օր վիրակապում էինք թեթև վիրավորներին: Այգեստանից 4000 մարդ իր ունեցվածքով տեղափոխվեց քաղաք: Նրանք տեղավորվեցին մեր եկեղեցում, դպրոցական շենքերում և մեր առաքելության տների բոլոր ազատ տարածություններում: Մի կին տիկին Սիլիմանին ասաց. «Ի՞նչ էինք անելու, եթե միսիոներները չլինեին: Սա արդեն երրորդ կոտորածն է, որի ժամանակ ես ապաստան եմ գտնում այստեղ»¹⁸:

Միսիոներների ուշադրության կենտրոնում էին նաև բնակչության սննդի և առողջապահության խնդիրները, որոնք լուծելու համար կապահանջվեց կենցաղվարության և վարչական

¹⁷ **Clarence D. Ussher, M. D., Grace H. Knapp**, *An American Physician in Turkey: A Narrative of Adventures In Peace and in War*, **pp. 237-238**:

¹⁸ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309:

կարողության մեծ հմտություններ¹⁹: Այդ մասին նշվում է. «Այս մարդկանց մեծ մասին պետք էր կերակրել, որովհետև նրանք այնքան աղքատ էին, որ իրենց հացը ամեն օր գնում էին հացթուփից, իսկ հիմա այդ հնարավորությունը չկար: Հայերը, մեծ մասամբ, իրենք են թխում իրենց հացը և հոգ տանում, որպեսզի ամբողջ տարվա անհրաժեշտ ցորենի պաշար ունենան: Այսքան շատ մարդկանց տեղավորելը, նրանց առողջության, սննդի և կարգապահության համար հոգ տանելը խնդիրներ էին, որոնք ամբողջովին կլանել էին մեզ: Պարոն Յարոուն այս գործի համար կոմիտեներ կազմակերպեց: Ամեն մի փոքրիշատե ընդունակ մարդու մի դեր հանձնարարվեց: Բոլորը հիսնալի նախաձեռնություն և անձնուրացություն ցուցաբերեցին: Մի մարդ տվեց իր ունեցած ողջ ցորենը՝ իր ընտանիքի համար թողնելով միայն մեկ ամսվա պաշար: Հիմնեցին հանրային փուռ՝ բաշխելու համար ցորեն և ալյուր գնվեց, տրվեցին հացի կտրոններ, իսկ ավելի ուշ բացվեց մի ճաշարան: Օրիորդ Ռոջերսը և օրիորդ Սիլիմանը ապահովեցին անհրաժեշտ օրաբաժին կաթը, իրենց դպրոցի աղջիկներին հանձնարարեցին եփել այդ կաթը և բաժանել փոքրիկներին: Այս ձևով սնվում էին 190 հոգի»²⁰:

Ըստ ամենայնի, Վանում ամերիկացի միսիոներների «անհարմար» ներկայությունն այնքան էր զայրացուցրել Ջևդեթին,

¹⁹ **Պրայս Ճ. Դերկոմս**, Անգղիական կառավարության կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ.Պոլիս, 1919, էջ 61:

²⁰ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309-310:

որ վերջինս քաղաքի պաշարման ժամանակ, համաձայն օսման-
յան բանակում ծառայած վենետուելացի սպա Ռաֆայել դե Նո-
գալեսի վկայության, հրամայել է հրետակոծության ենթարկել
նաև քաղաքի ամերիկյան առաքելությունը²¹:

Ամերիկյան միսիոներների արժեքավոր վկայությունները
յուրատեսակ պատկերացում են տալիս թուրք բժիշկների ան-
մարդկային վերաբերմունքի և հայերի ֆիզիկական տառա-
պանքների մասին: Այսպես, ըստ գթության քույր, գերմանուհի
Մարթայի հաղորդման, երբ Ռ. դե Նոգալեսը 1915 թ. մայիսի 1-
ին շրջայց էր կատարում նրանց զինվորական հոսպիտալում, նա
տեղեկացնում է, որ գլխավոր բժիշկ Իզզեթ բեյն «ազատվել» էր
բոլոր հայերից, ովքեր աշխատում կամ բուժվում էին հոսպիտա-
լում: Ըստ նրա՝ Իզզեթ բեյը վիրահատություններն իրականաց-
նում էր առանց վիրաբուժական գործիքների ախտահարման, ո-
րի արդունքում շատերը մահանում էին փտախտից²²:

Վանի Ապրիլյան հերոսամարտի ժամանակ բժիշկ Քլարենս
Ըշըրը հրաժարվում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը
հանձնել իշխանություններին և իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ, ո՛չ
միայն դեղորայք է բաժանում հայերին, այլ վիրահատում և բժշ-
կում է վիրավորներին ու հիվանդներին²³:

Թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին, որպես-
զի ամերիկացի միսիոներներն ականատես չլինեն զանգվածա-
յին սպանություններին: Այդ նպատակով, նախևառաջ, նրանց

²¹ **Де Ногалес Р.**, Четыре года под полумесяцем, Москва, 2006, с. 66:

²² Անդ, էջ 74:

²³ Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, Հ. Ավագյանի ֆ., գ. 8, թ. 6:

արգելվում էր արքայազն հայերի հետ որևէ շփում՝ ընդհուպ մինչև ամերիկյան շինությունների մուտքերի մոտ զինված պահակների տեղակայումը՝ խոչընդոտելով հայերին՝ օժանդակության համար դիմել ամերիկացի միսիոներներին:

Հաշվի առնելով Վանում անհրաժեշտ ուտելիքի հոգածության անհրաժեշտությունը և բարձր գները՝ ամերիկացի միսիոներներ՝ Էռնեստ Յարրոուն և Ք. Ըշըրը Արամին ուղղված 1915 թ. հունիսի 8-ի իրենց նամակում խնդրում էին Անդրանիկի կողմից բռնագրավված հազարավոր ոչխարներից Վանում գտնվող հոսպիտալի հայ կամավորականների և ռուս զինվորների համար տրամադրել օրը 1 ոչխար, իսկ միսիոներական կացարանում ապաստանած 1000 մահմեդական գաղթականների համար՝ օրը 5 կամ ամսական 150 ոչխար: Այդ նպատակով նախնական հոգածության համար նրանք պահանջում էին 100-200 ոչխար:²⁴

1915 թ. Հուլիսյան գաղթի ժամանակ Ք. Ըշըրը և մյուս միսիոներները տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

Միսիոներների հաղորդած տեղեկություններն ուշագրավ են հատկապես Վանի 1915-1917 թթ. պատմության լուսաբանման առումով, քանի որ նրանք որոշակի ներդրում են ունեցել Վան--Վասպուրականի վերաշինության և գաղթականների օգնության կազմակերպման գործում: Ամերիկյան միսիոներները որոշակի դեր են խաղացել Վանում հայերին ու ասորիներին դրամական և տնտեսական բազմատեսակ օգնություն կազմակերպելու և

²⁴ ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 34, թ. 1:

բարեգործական աշխատանքներ կատարելու գործում: Այդ մասին է վկայում Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսության բժիշկ Ֆ. Ու. Մաքալլումի զեկուցագիրը՝ ուղղված ԱՄՆ-ի պետական քարտուղարին²⁵:

Վանում 1916 թ. ապրիլի 15-ից մայիսի 15-ը միսիոներների կատարած բարեգործական աշխատանքների մասին պատմող զեկուցագրի համաձայն՝ Գրեյսին, Սամուել Գրահամ Ուիլսոնը²⁶ և Ֆ. Մաքալլումը ձեռնամուխ են լինում գաղթականների օգնության կազմակերպման գործին: 1916 թ. ապրիլի 15-ին Գրեյսին և Մաքալլումը Պարսկաստանից ժամանում են Վան, իսկ Ս. Գ. Ուիլսոնը մնում է Խոյում՝ Վանի բնակչության համար եզներ, կովեր, սերմացու գներու և ուղարկելու գործով²⁷:

Ռուսական քաղաքացիական և զինվորական իշխանությունները չափազանց բարյացակամ էին տրամադրված միսիոներների հանդեպ և ստեղծում էին անհրաժեշտ բոլոր հնարավորությունները աշխատանքները հաջողությամբ ի կատար ածելու համար: Միսիոներական գործունեությանը մեծապես նպաստում են նաև նրանցից առաջ գործունեություն ծավալած հայկական և ռուսական բարեգործական այլ ընկերությունները, որոնք

²⁵ Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 274-278:

²⁶ Սամուել Գրահամ Ուիլսոնը մինչ այդ պաշտոնավարել էր Թավրիզում: 1915թ. նոյեմբերի 19-ին նա տեղափոխվում է Էջմիածին և ներկայանում կաթողիկոսին: Տե՛ս ՀԱԱ ֆ.1289, ց. 2, գ.57, թ. 72:

²⁷ Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 275:

հիմնադրել էին որբանոց, հիվանդանոց, սննդամթերքի պահեստ²⁸:

Ամենահրատապ խնդիրը՝ եզների, գութանների ու սերմացուի ապահովումն էր, քանի որ բանակի կարիքների պատճառով Վանի նահանգում արգելված էր անասուն և սերմացու գնելը: Հայոց Ձորի շրջանում միսիոներներին հաջողվեց գոմեշներ գնելու թույլտվություն ստանալ, քանի որ դրանք որպես սննդամթերք չէին օգտագործում: Արդյունքում՝ դոկտոր Ս. Գ. Ուիլսոնի միջոցով միսիոներները Պարսկաստանի նախարապաններից գնեցին մեծ քանակությամբ եզներ, կովեր և գոմեշներ: Գրեյսիի և նրա թիկնապահ ամերիկացի մի հայ կամավորի կողմից բաժանված կտրոնների դիմաց յուրաքանչյուր երեք ընտանիքի տրվում էր մի զույգ եզ: Ընդ որում, խմբում ընդգրկված էին միայն այն ընտանիքները, ովքեր կաշխատեին համաձայնեցված ձևով: Սակայն անասունները տրվում էին ոչ թե որպես նվեր, այլ դրամական փոխհատուցման պայմանով: Յուրաքանչյուր գյուղացի ձեռքբերելով անասուն՝ ստացական էր տալիս այն մասին, որ նա խոստանում էր սկսած 1917 թ. նոյեմբերի 1-ից կոմիտեին կամ ներկայացուցչին տարեկան եռակի մուծումով վճարել ստացած կենդանու իրական արժեքի 25-50%-ը, քանի որ այդ ժամանակ եզները 3-6 անգամ ավելի թանկ էին²⁹:

Կովերը բաժանվում էին հիմնականում որբերին, այրիներին և այն ընտանիքներին, որտեղ կային փոքր երեխաներ: Բացի այդ,

²⁸ Անդ:

²⁹ Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 276:

Վանի նահանգապետի և գլխավոր հրամանատարի կողմից անասուն ստացողներին տրվեց նաև պաշտոնական մի փաստաթուղթ, որը հաստատում էր անասունների պատկանելիությունը և արգելում դրանց օգտագործումն այլ նպատակներով:

Նշված ժամանակահատվածում 600 ընտանիքների տրվեց 400 եգ, 200 այրիներին, որբերին, հաշմանդամներին ու մանուկներին՝ 100 կով, 75 ընտանիքներին՝ 50 գոմեշ: Նախատեսվում էր միջին հաշվով հատկացնել նաև 150 ռ.³⁰ գոմեշներ, 120 ռ.³¹ եզներ, և 80 ռ.³² կովեր ձեռք բերելու համար:

Քանի որ անհնարին եղավ Պարսկաստանից ձեռք բերել մեծ քանակով սերմացու հացահատիկ, միսիոներները որոշակի գրությունների դիմաց ֆերմերներին տրամադրեցին գոմար՝ շրջակա գյուղերից սերմացու գնելու և բերքահավաքին այն վերադարձնելու պայմանով: Արդյունքում՝ 10000 ռ. դիմաց Խոյից ձեռք բերվեց 3000-4000 բուշեյ ցորեն ու գարի և Վանի շրջանի գյուղացիներին բաժանվեց նաև բավարար քանակությամբ կարտոֆիլի, լոբու, ոսպի, եգիպտացորենի և տարբեր տեսակի բանջարեղենների սերմեր³¹:

Խոյից հացահատիկի, հագուստի և այլ իրերի տեղափոխումը կազմակերպելու համար՝ միսիոներները ձեռք բերեցին եզասայլեր և ավանակներ³²:

Մինչև 1916 թ. հունիսի սկիզբը Վանի 60 գյուղերում միսիոներները գյուղացիներին են բաժանում 1700 գլուխ անասուն, 2176

³⁰ Անդ, էջ 276-277:

³¹ Անդ, էջ 277:

³² Անդ, էջ 278:

փուօ ցորեն, 3298 փուօ գարի, 4914 փուօ տարեկան և 258 փուօ կորեկ, մեծ քանակությամբ զանազան բանջարեղենի սերմ, 470-ական խոփ և բահ, 400 մանգաղ³³: Միաժամանակ, Կովկասից բերվեց և բաժանվեց 30000 կտոր անկողին ու հագուստ³⁴:

Քանի որ Վանի պտղատու և խաղողի այգիների մի մասը պատկանում էր թուրքերին, որոնք չէին կարողացել վերադառնալ Վան, իսկ մյուս մասը հայերին, ովքեր գաղթերի ժամանակ մնացել էին Կովկասում, կամ մահացել էին, միսիոներները յուրաքանչյուր այգուց կառավարությանը տրվելիք 2-5 ռուբլի նոմինալ վարձի դիմաց իրականացնում են Ծվստանի ու Արտամետի պտղատու և խաղողի այգիների խնամքը³⁵:

Միսիոներների օգտաշատ գործերից մեկն էլ այն էր, որ նրանք ամերիկյան առաքելության շենքում աշխատանքի են տեղավորում բազմաթիվ մարդկանց՝ քաղաքի ավերածությունները վերացնելու, այգիներ տնկելու և այլ գործեր իրականացնելու համար: Նրանք՝ նահանգապետի համաձայնությամբ 50 հոգու

³³ ՀԱԱ ֆ.314, ց. 1, գ.176, թ.88 շրջադ., նաև «Աշխատանք», Երեւան, 1916, սեպտեմբերի 14, թիվ 39, նաև «Վան-Տոսպ», Վան, 1916թ.հունիսի 26, թիւ 31:

³⁴ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918 թթ.). Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատ. գիտ. դոկտոր Լ. Բարսեղյան, հ. 2-րդ, Երևան, 2011, էջ 373:

³⁵ Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 277-278:

տեղավորում են աշխատանքի՝ փողոցները բարեկարգելու և Զրային առուները մաքրելու համար³⁶: Բացի այդ, Վան է գործուղվում բուժակ Կարապետ Թորգոմյանը՝ քաղաքի բուժական գործը կազմակերպելու նպատակով:

1917 թ. սեպտեմբերի 23-ին Պարսկաստանից Վան են ժամանում ամերիկացի երկու գործիչներ՝ դոկտոր Մ. Ի. Էլիսը և ամերիկյան մեծահարուստ գերդաստաններից մեկից սերող Չ. Ի. Բյուրին, որոնց ընկերակցում էր Գրեյսին³⁷: Հայտնի լրագրող Մ. Էլիսը, որն աշխատակցում էր բազմաթիվ ամերիկյան թերթերին, ինչպես նաև Չ. Ի. Բյուրին Արևմտյան Հայաստան էին գործուղվել Ամերիկյան կառավարության հանձնարարությամբ՝ մոտիկից ծանոթանալու Ռուսաստանի ներքին գործերին, Կովկասյան ռազմաճակատում տիրող կացությանը և ռուսական զորքերի դասավորվածությանը:

Վանի «Ազատության լույս» գրադարան-ընթերցարանում կայացավ հանդիպում ամերիկացի հյուրերի հետ, որտեղ նրանք իրենց սերն ու համակրանքն արտահայտեցին հայերի նկատմամբ: Հյուրերը եղան նաև Դատվանում:

Այդուհանդերձ, կատարված որոշակի ի գնահատելի աշխատանքներին զուգահեռ ժամանակակիցների աչքից չի վրիպել նաև ամերիկյան միսիոներների հակահայկական և սուտ մարդասիրական կեցվածքը: Այսպես, դեպքերի ականատես և ժամանակակից Եղիշե Բուրանյանը հայտնում է, որ իր

³⁶ Անդ, էջ 278:

³⁷ «Արես», Բաքու, 1917, հոկտեմբերի 7, թիվ 211:

հիշողության մեջ տպավորվել է մի եկքան հանգամանք, մի ցավալի իրողություն, որ կատարվեց Վանի 1915թ. ահավոր կոռիվների ընթացքում: Երբ թուրքական թնդանոթները որոտում էին քաղաքի հայկական թաղամասերի գլխավերևում հայ կանայք և երեխաներն ապաստան գտնելու հույսով սարսափահար դիմում են Վանի ամերիկյան բողոքական առաքելության ներկայացուցիչներին: Սակայն ամերիկյան միսիոներ՝ «այժամորուք հրեշ» դոկտոր Ռեյնոլդսը, որը միշտ մարդասիրություն էր քարոզում բնակչության շրջանում, անգթաբար և առանց խղճի խայթ գզալու մերժում է նրանց և վռնդում: Նույնը կատարում են նաև անգլիական և գերմանական հյուպատոսները³⁸:

Ֆրանսիական միսիոներություն

Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալ Ժ. Սպորտոնի 1915 թ. մայիսին 30-ի նամակն՝ ուղղված Պետրոգրադի ֆրանսիական դեսպանին լույս է սփռում 1914 թ. օգոստոսից մինչև 1915 թ. մայիս ընկած ժամանակահատվածում Վանում ֆրանսիական Դոմինիկյան միաբանության վիճակի վրա:

Վանի ֆրանսիական դերհյուպատոս Սանֆոռը 1914 թ. նոյեմբերի 8-ին Վանից մեկնելու ժամանակ, քաղաքում ամերիկյան հյուպատոսության բացակայության պատճառով, ֆրանսիական շահերի պաշտպանությունը հանձնում է իտալացի հյուպատոս Ժ. Սպորտոնին, որի մասին նա տեղեկացնում է Կ. Պոլսի ԱՄՆ-ի դեսպանին և Վանի նահանգապետին: Սակայն, պատերազմը

³⁸ **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013, էջ 26:

սկսվելուն պես, Ժ. Սպորտոնը, ճանապարհների անապահովության պատճառով անկարող է լինում այդ մասին տեղյակ պահել ինչպես Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանին, այնպես էլ՝ Տրապիզոնի իտալական հյուպատոսին³⁹:

Ըստ Ժ. Սպորտոնի վկայության՝ Վանի կուսակալության քարտուղարը և հանրային կրթության տնօրենը ոստիկանական պաշտոնյաների հետ՝ առանց ֆրանսիական հյուպատոսության գործակալության ներկայացուցչի, Սանֆոռոի մեկնումից մեկ շաբաթ անց՝ 1914 թ. նոյեմբերի 15-ին ներկայանում են Վանի Դոմինիկյան միաբանություն (որի մի մասը գտնվում էր Վանի հայկական, մյուս մասը՝ մահմեդական թաղամասում) և պահանջում իսկույն Օսմանյան կառավարությանը հանձնել միաբանության վանքերը, դպրոցները, բարեգործական հաստատությունները և հեռանալ Վանից: Ֆրանսիայի միսիոներների արտաքսումը կատարվեց 1914 թ. նոյեմբերի 20-ին՝ Բաղեշ-Տիգրանակերտ-Հալեպ-Մերսին ճանապարհով:

Հիվանդության պատճառով Վանում մնաց միայն միաբանության ղեկավար Հ. Բեռնար Կորթմադթիզը:

Ֆրանսիական միսիոներների հեռանալուց հետո դոմինիկյան հայրերի և քույրերի շենքերը բռնազավթվեցին, թալանվեցին ու վերաճվեցին համապատասխանաբար, արական և իգական մեդրեսեների⁴⁰:

³⁹ Պառայի Հ., Սարսափի երկրին մեջ. Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 150-151:

⁴⁰ Անդ:

Վանի Ապրիլյան հերոսամարտի ժամանակ Դոմինիկյան հայրերի շենքը դարձավ թուրքական, իսկ դոմինիկյան քույրերի շենքը՝ հայկական դիրք։ Ինչպես Ժ. Սպորտոնեն է վկայում. «Մէկ ամսուան իրենց բնակութեան միջոցին, թուրք և քիւրտ պաշտպօզութները, որոնք Տոմինիկեաններու շէնքին մէջ դիրք բռնած էին, թալլեցին ինչ որ խուսափած էր թուրք պաշտօնատարներու ասարէն, և երբ Հայերը յաջողեցան հոն մտնել, այնտեղ գտան միայն մէկ քանի կարասիներու խլեակները։ Քոյրերու հաստատութիւնները, Հայերու հսկողութեան ներքև ըլլալով, զերծ մնացին թալանէ»⁴¹։

Ռուսական զորքերի և հայ կամավորների կողմից 1915թ. մայիսի 6-ին Վանի գրավումից հետո Դոմինիկյան քույրերի շենքը դարձավ Վանի նահանգապետության կառավարչատունը։

Միսիոներության դրական և բացասական դրսևորումները

Անշուշտ հարց է առաջանում, թե՛ կաթոլիկ և թե՛ բողոքական միսիոներությունը Վանում ավելի շատ վնաս, թե օգտակարություն է ունեցել։ Եթե բողոքականության գործունեությանը նայենք Հայ Առաքելական Եկեղեցու բարոյական շենքի նախանձախնդրության տեսանկյունից, նկատվում է, որ մեր եկեղեցին վնասվել է նրանց գործունեությունից, քանի որ բնակչության մեջ առաջացել էր դավանական պառակտում։ Նոր վարդապետության հետևորդները, ներկայանալով իբրև «վերանորոգուած, սրբացած և երկնքի յաւիտենական թագաւորութեան փառքը վայելելու միակ արժանիք ունեցողներ», իրենց

⁴¹ **Պառպի Հ.**, Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, էջ 152։

«անուղղայ, խաւարի մէջ խարխափող, ամբարիշտ» հայրենակիցների վրա նայում էին իբրև «գեհենի արժանի ժառանգների վրա»⁴²: Այս առումով մատնանշելի է նաև ՀԲԸՄ-ի Ամերիկայի Շրջանային հանձնաժողովի ատենադպիր Տ. Վ. Մ. Քյուրքջանի 1915թ. նոյեմբերի 19-ի նամակը, որտեղ նա ներկայացնելով Նպաստամատույց ընկերության հետ համագործակցող Սամուել Ուիլսոնի միսիոներական նպատակները մտավախություն է հայտնում որ «մենք վստահ ենք թէ Կովկասի նպաստամատույց մարմինը պիտի գործէ սուկ կարոտեալներու պէտքերը հոգալու, առանց յարանուանական պրօպականտի, որովհետև Ամերիկայի նուիրատու ժողովորդը աչքի առջեւ ունի միմիայն քրիստոնեայ հայերու և այլ ցեղերու տառապանքը և երբեք պիտի չը յօրարի, որ ուղղապէս կամ անուղղապէս վիրաւորուին տեղական հոգևոր իշխանութեանց զգացումները»⁴³:

Վանի հերոսամարտի ավարտց հետո, երբ Վանի նորաստեղծ նահանգում ծավալվեց վերաշինության քաղաքականություն, կաթոլիկական կղերը և բողոքական միսիոներներն իրենց կեղծ մարդասիրության անվան տակ՝ որպես «դավանանքի գող որսորդներ» և օգտվելով ստեղծված հանգամանքներից, դրամանակ օժանդակության անվան տակ փորձեցին իրենց կողմը գրավել հայկական այն ընտանիքներին, որոնք կորցրել էին իրենց անդամներին, տունը, կայքը և

⁴² **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXV, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 61:

⁴³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 71:

կարոտ էին օգնության: Եվ կաթոլիկ կղերները «լեշի սովոր ուրուրների նման» սկսեցին թափառել հայկական գյուղերում: Նրանք, ինչպես Վարազդատ Տերոյանն է նկատում նախնադարյան առաքյալների նման «Աստուծո խոսք» կամ «կենդանի խոսք» էին բերում մոլորության, տգիտության, թշվառության և բարբարոսության մեջ թաղված ժողովուրդներին և կոչ էին անում նրանց, ովքեր կարոտ էին օգնության⁴⁴:

Կաթոլիկ անամոթ և սրտմտած կղերականները փողով որսում էին հայ չքավոր և արյունաքամ ժողովրդին՝ առանց ամոթի ու խայտառակության⁴⁵: Նրանք իրենց զոհերին շահագրգռում էին «Փարա վար, կաթոլիկ վար, փարա յոխ, կաթոլիկ յոխ»՝ «Փարա [փող] կա, կաթոլիկ կա, փարա չկա, կաթոլիկ չկա» կարգախոսով: Նույնը սկզբունքը կիրառվում էր նաև բողոքական քարոզիչների կողմից: Արդյուրքում գտնվեցին գյուղացիական բազմաթիվ ընտանիքներ, որոնք նյութական կարիքից դրդված ընդունեցին կաթոլիկական կեղծ գաղափարները, բայց երբ բարելավեցին իրենց բարեկեցությունը, հեռացան միսիոներական քարոզչությունից և հետ վերադարձան իրենց նախնյաց լուսավորչական եկեղեցի:

Բացի այդ, միսիոներները հանդես էին գալիս որպես լրտեսներ՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդելով իրենց

⁴⁴ **Տերոյան Վ.**, Իմպերալիստական ծիծեռնակներ. միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Երևան, 2008, էջ 25:

⁴⁵ **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, էջ 25-26:

երկրներին: Այսպես, ցարական հետախուզությունը Փարիզից ուղարկված 1916 թ. հունիսի 1/14-ի միանգամայն գաղտնի № 583 հեռագրում տեղեկացնում էր, որ Յյուրիխում բնակվող, գերմանական ծագումով շվեյցարահպատակ միսիոներ Սպորին, որը Վանի միսիոներական դպրոցի նախկին վարիչն էր և Ֆրանկֆուրտում գտնվող «Դեոյչ-Արմենիե Վեյզենհաուզեն» միսիոներական ընկերության գործակալը, մտադրվել էր մեկնել Վան: Ընկերության ղեկավար պաստեոր Լոմանը 1916 թ. մայիսին Յյուրիխում գերմանական կառավարության հանձնարարությամբ կազմակերպել էր միսիոներների ջոկատ՝ ռուսական զորքերի կողմից գրավված Վանի, Բիֆլիսի, Էրզրումի, Տրապիզոնի շրջաններում քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով: Սակայն ջոկատի բուն նպատակը հայ բնակչության մեջ հոգուտ Գերմանիայի գաղափարախոսական աշխատանք կատարելն էր⁴⁶:

Միսիոներության մասին հետաքրքրական է դեռևս 1908 թ. Արամ Մանուկյանի հնձեցրած տեսակետը: Վեր հանելով ամերիկյան միսիոներության գործունեության ինչպես լավ կողմերը, որ «անոնք արեան ու արցունքի օրերին փողոցներից հաւաքելով անտէր մանուկներ ապաստանարան տուին», նա միաժամանակ մատնանշում է նաև նրանց արտահայտման զգվելի դրսևորումները. «Ի հարկէ, երբէք չէ կարելի մոռնալ միսիոնարների այն ստրկացուցիչ և ռէակցիօն դերը, որ խաղացին ազատ երկրների ստրուկ ներկայացուցիչներ մեր թշուառ երկրին

⁴⁶ «Ազդակ» շաբաթաթերթ, Բեյրութ, 1980, ապրիլի 27, թիւ 15, էջ 323-324:

մէջ. ամբողջ սերունդներ անոնք ստրկացուցին, քամեցին անոնցից այն՝ ինչ կենսունակ էր ու հիւթող և միայն կմախք թողուցին, ըմբոստ ուժերն հալածեցին, վռնդեցին, և ստրկութեան պաշտամունքը հաստատեցին. ազատ և ուժեղ խոսքը բռնաբարեցին և աղաչանք ու լացը միայն թողին»⁴⁷:

Միսիոներների գործունեությունն իրավամբ ճիշտ է գնահատել միսիոներական պաշտոնաթերթ «Աւետաբերը»: Խոսելով միսիոներության ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումների մասին՝ պարբերականը գրում է. «Ահա մինչ ասկէ 20-30 տարի առաջ Ամերիկ-միսիոնարները սուտ առաքեալներու և Բողոքականութիւնը անաստուածութեան արժէք ունէին յաջս Վանի Հայ ժողովրդեան մէկ ստուարագոյն մասին, այսօր, շնորհիւ ուսման և կրթութեան պարգևած լուսաւորութեան, այն հին համոզումներն ու ըմբռնումները իսպառ տեղի տուած են նոր գաղափարներու առջև, ինչպէս վերջերս նոյն ժողովրդի կողմէն եղած պատուի ու երախտագիտական ցոյցերով ապացուցեցաւ հանդէպ Վանի երեք բազմարդիւն միսիոնարներու»⁴⁸:

Եզրակացություն

Այսպիսով, չնայած միսիոներները Վանում ներդրեցին նյութական, հոգևոր և բարոյական զգալի միջոցներ և բացեցին կրթական որոշակի հաստատություններ, այդուհանդերձ, նրանց այդպես էլ չհաջողվեց ձեռք բերել անհրաժեշտ համակիրներ:

⁴⁷ «Գործ», Թիֆլիս, 1908, սեպտեմբերի 23, թիւ 10:

⁴⁸ «Աւետաբեր, Կ. Պոլիս, 1912, նոյեմբերի 16, թիւ 46:

Հոդվածը տպագրվել է «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու» հանդեսում, Երևան, 2022 թ., թիվ Ը, էջ 239-256:

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍՈՆԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ
ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1830-1831 ԹԹ.⁴⁹**

Ճամփորդական ուղեգրություններն ու հուշագրություններն ունեն կարևոր աղբյուրագիտական նշանակություն պատմական այս կամ այն ժամանակաշրջանը ուսումնասիրելու համար: Դրանք պատմաբանների կողմից օգտագործվում են պատմական իրադարձությունների լուսաբանման, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնելու, պատմական առանձին դրվագների շուրջ ճշգրտումներ, լրացումներ կատարելու նպատակով: Ուղեգրություններն ու հուշագրություններն ունեն մի առանձնահատկություն, դրանք հաճախ աչքի են ընկնում իրենց սուբեկտիվությամբ: Սակայն նման աշխատանքների նկատմամբ քննական մոտեցման պայմաններում դրանք կարող են հանդիսանալ անփոխարինելի սկզբնաղբյուր պատմության հետազոտման համար:

19-րդ դարի ողջ ընթացքում տասնյակ եվրոպացի և ամերիկացի ճանապարհորդներ, առևտրականներ, միսիոներ և

⁴⁹ Հեղափոխությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 217-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

պետական ու ռազմական գործիչներ այցելել են պատմական Հայաստանի տարբեր բնակավայրեր, որոնք այդ շրջանում գտնվում էին Օսմանյան, Պարսկական կամ Ռուսական կայսրությունների կազմում: Վերջիններս իրենց հուշագրություններում և ճանապարհորդական նոթերում կարևոր տեղեկություններ են հաղորդում հայերի, նրանց սոցիալ-տնտեսական վիճակի, կենցաղի, սովորույթների, զբաղմունքի և զանազան այլ հարցերի վերաբերյալ:

1830-1831 թվականներին երկու ամերիկացի բողոքական միսիոներներ՝ Էլի Սմիթի (Eli Smith) և Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթը (Harrison Gray Otis Dwight), ճամփորդում են Հայաստանում և կատարում ուսումնասիրություններ, որոնք հետագայում հրատարակվում են: Այդ աշխատությունը, որին նվիրված է սույն հոդվածը, պարունակում է ոչ միայն հետաքրքրական տեղեկություններ ամերիկացի բողոքական միսիոներների և հայերի առաջին շփումների վերաբերյալ, այլ նաև հանդիսանում է կարևոր աղբյուր Հայաստանի 19-րդ դարի առաջին տասնամյակների պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման համար:

Բողոքականությունը հայության շրջանում հիմնականում տարածվել է ամերիկյան միսիոներների միջոցով և արդեն 19-րդ դարում վերջերին հայ բողոքականների թվաքանակը, հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում, զգալի աճում է: Առաջին բողոքական միսիոներները Մերձավոր Արևելյան

տարածաշրջանում հայտնվել են դեռևս 16-րդ դարում⁵⁰: Սակայն վերջիններիս ակտիվ և մշտական գործունեության մեկնարկը ողջ աշխարհում սկիզբ է առնում 19-րդ դարի առաջին տասնամյակներից⁵¹: Մերձավոր Արևելքում միսիոներական շարժումը հիմնականում համակարգվում էր «Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի» (կամ ուղղակի «Ամերիկյան խորհուրդ») կողմից, որը ստեղծվել էր 1810 թ. Բոստոնում⁵²: 1829 թ. Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն հաստատելու վերաբերյալ այդ կառույցի կողմից կայացվում է հատուկ որոշում⁵³: 1830 թ. ԱՄՆ-ը և Օսմանյան կայսրության միջև պաշտոնական հարաբերությունների հաստատումը զգալիորեն նպաստեց կասրության տարածքում ամերիկացի միսիոներների գործունեության ծավալմանը⁵⁴: Անգլիացի սպաներից մեկը, որը 1830-ական թթ. կեսերին ճամփորդություն է կատարել Հայաստանում, իր հուշերում նշում է, որ թեև Արևելքում իր ծառայության ընթացքում տարբեր ազգերի շատ միսիոներների է հանդիպել, բայց ամերիկացիները լավագույնս են համապատասխանում այդ դժվարին գործին և իրենց

⁵⁰ **Կիրակոսյան Ա.**, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914թ.), Երևան, 2014, էջ 56-62:

⁵¹ Նույն տեղում, էջ 54-63, տե՛ս նաև Charles C. Creegan, *Pioneer Missionaries of the Church*, New York, 1903.

⁵² **William E.**, *Strong, the story of the American board*: The Pilgrim Press, Boston, 1910, էջ 6:

⁵³ **Vahan H. Tootikian**, *The genesis of Armenian Evangelism*, Հայկազեան հայագիտական հանդես, հատոր ԺԴ, Պեյրուֆ, 1994, էջ 174-175:

⁵⁴ **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 51-52:

պարտականությունները կատարում են այդ առաքելությանը համապատասխան⁵⁵: Ամերիկացի միսիոներները կարևոր դերակատարում ունեցան նաև ԱՄՆ-Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների զարգացման գործում⁵⁶:

Ամերիկացի միսիոներների առաջին շփումները հայերի հետ տեղի ունեցան դեռևս 1820-ական թթ. սկզբներին: Սակայն վերջիններս որևէ համակարգված և խորքային պատկերացումներ չունեին բուն Հայաստանում ապրող հայերի վիճակի վերաբերյալ: Միսիոներների առաջին այցերը նպատակ ունեին տեղում ծանոթանալ տիրող իրավիճակին և փնտրել հնարավորություններ իրենց գաղափարները հայության շրջանում տարածելու համար: Էլի Սմիթի և Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի ուղևորությունը առաջին նման շփումն էր ամերիկացի միսիոներների և հայերի ու Հայաստանում ապրող շատ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ: Այդ մասին փաստում են նաև հենց իրենք իրենց աշխատության մեջ: Վերջիններս վկայում են, որ տեղացիները իրենց հանդիպումների ժամանակ, որպես կանոն անգամ չգիտեին թե ովքեր են ամերիկացիները, տեղի թուրքերը, ինչպես նաև մյուս ազգությունների շատ ներկայացուցիչներ, չէին լսել անգամ Ամերիկայի և ընդհանրապես Արևմտյան կիսագնդի գոյության

⁵⁵ **Richard Wilbraham**, *Travels in the Trans-Caucasian Provinces of Russia: And Along the Southern Shore of the Lakes of Van and Urumiah, in the Autumn and Winter of 1837*, London, 1839, էջ 373:

⁵⁶ **Grabill, Joseph L**, *Protestant diplomacy and the Near East; missionary influence on American policy, 1810-1927*, Minneapolis, University of Minnesota Press, 1971, էջ 35-58.

մասին: Քանի որ միսիոներները խոսել են անգլերեն նրանց հաճախ համարել են անգլիացիներ, երբեմն նաև ֆրանսիացիներ, անգամ ռուսներ⁵⁷: Այդ իմաստով Տաթևի վանք այցելության ժամանակ միսիոներներին հաճելիորեն զարմացնում է այն հանգամանքը, որ հայ հոգևորականներից մեկը ոչ միայն գիտեր ամերիկացիների մասին, այլ նաև մանրամասների էր տիրապետում Ամերիկայի վերաբերյալ առհասարակ:

Հայ հոգևորականների հետ միսիոներների հանդիպումները ցույց են տալիս, որ Հայաստանում գրեթե տեղեկություններ չունեին նաև բողոքականների, նրանց դավանանքի, դրա առանձնահատկությունների մասին: Վերջիններիս հաճախ շփոթում էին կաթոլիկ միսիոներների հետ:

Սկզբնական շրջանում միսիոներական գործունեության թիրախ դիտարկվում էին մահմեդականները և հրեաները, սակայն աստիճանաբար բողոքական քարոզիչները հասկացան, որ վերջիններիս շրջանում հաջողություններ արձանագրելու հնարավորությունները քիչ էին կամ գրեթե չկային, ուստի աստիճանաբար սկսեցին միսիոներական գործունեություն իրականացնել Օսմանյան կայսրության քրիստոնյաների շրջանում: Շուտով բողոքական միսիոներների

⁵⁷ **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, *Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, 1834*, George Wightman, London, էջ 69-70:

առաքելությունը իր գործունեության հիմնականում սկսեց իրականացնել հայերի շրջանում⁵⁸: Այդ մասին վկայում են նաև ոչ միայն բողոքական միսիոներների պաշտոնական զեկուցագրերը, այլ նաև այլ ժամանակակիցներ⁵⁹: Պատճառներից մեկն այն էր նաև, որ Օսմանյան կայսրությունում խստորեն արգելվում էր մահմեդականների շրջանում որևէ այլ կրոնական քարոզչություն կատարելը: Կովկասյան մահմեդականների շրջանում միսիոներների գործունեությունը ևս խիստ անարդյունավետ գտնվեց: Դրա ապացույցներից է Շուշիի միսիոներների գործունեությունը, ովքեր սկզբնական շրջանում, բացի հայերից, փորձում էին քարոզչություն իրականացնել նաև տեղի մահմեդականների շրջանում:

1831 թ. «Ամերիկյան խորհրդի» որոշմամբ Արևելքի քրիստոնյական եկեղեցիների հետևորդների շրջանում գործունեություն իրականացնելու նպատակով սկսեցին հիմնվել միսիոներական կայաններ: Օսմանյան կայսրության հայերի շրջանում միսիոներական գործունեություն իրականացնելու նպատակով նման կայան հիմնվեց Կոստանդնուպոլսում: Սկիզբ է առնում ամերիկացի բողոքական միսիոներների և Օսմանյան կայսրության հայերի առնչությունների ակտիվ շրջանը:

Բողոքականության աճող ազդեցության պայմաններում արդեն 1846 թ. հուլիսի 1-ին Կ.Պոլսի Բերա թաղամասում 40 հայ

⁵⁸ Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 70:

⁵⁹ Eli Smith, Harrison Gray Otis Dwight, նշվ. աշխ., էջ 198, տե՛ս նաև Richard Wilbraham, նշվ. աշխ., էջ 388-389:

ավետարանականների կողմից հիմնադրվում է Հայ Ավետարանական եկեղեցին⁶⁰։ Չորս տարի անց՝ 1850 թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը, հատուկ ֆերմանով այն ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք՝ «միլլեթ», որով սկիզբ առավ հայ ավետարանականների պաշտոնական գործունեությունը⁶¹։ Նշենք, որ Արևելյան Հայաստանում ավետարանական առաջին շարժումը սկիզբ էր առել դեռևս 1823 թ. Շուշիում Շվեցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» գործունեությամբ⁶²։ Վերջիններիս շուրջ 15 տարվա գործունեության արդյունքում Շուշիում ձևավորվեց փոքրաթիվ հայ ավետարանական համայնք։

«Ամերիկյան խորհուրդը» 1819 թվականից սկսում է տարբեր միսիոներական առաքելություններ ուղարկել Մերձավոր Արևելք բողոքականության տարածման հնարավորություններն ուսումնասիրելու, ինչպես նաև տեղում գործող Արևելյան քրիստոնեական եկեղեցիները հետազոտելու նպատակով⁶³։ Այցելությունների արդյունքները որպես կանոն տպագրվում էին։ Դրանք պարունակում էին կարևոր տեղեկություններ տարածաշրջանում ապրող ժողովուրդների ոչ

⁶⁰ **Թութիկեան Վ.**, Նոր յայտնութիւններ Հայաստանեայց ավետարանական եկեղեցիին հիմնադրութեան եւ հիմնադիր անդամներուն մասին, Հայկազեան հայագիտական հանդես, Հատոր ԺԸ, Պեյրուֆ, 1998, էջ 253-259։

⁶¹ **Leon Arpee**, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, 1946, New York, էջ 36-37։

⁶² **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.**, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 81-88։

⁶³ **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, նշվ. աշխ., Նախաբան։

միայն հոգևոր-կրոնական կյանքի, այլ նաև սոցիալ-տնտեսական վիճակի, սովորությունների, կրթական-մշակութային կյանքի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Միսոններների և տարբեր ճանապարհորդների ուղեգրություններն ու հուշերը ԱՄՆ-ում տպագրվել են նաև «The Modern Traveller» խորագիրը կրող շարքով:

Սկզբնական շրջանում ամերիկացի միսիոներները հիմնականում գործում էին Օսմանյան կասրության մայրաքաղաքում և ծովափնյա խոշոր քաղաքներում: Սակայն ժամանակի ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» խնդիր դրեց թափանցել երկրի խորքերը այնտեղ ապրող քրիստոնյա ժողովուրդներին անմիջապես ծանոթանալու և ուսումնասիրելու նպատակով: «Ամերիկյան խորհրդի» Prudential Committee-ին 1830 թ. հունվարի 19-ին հրահանգում է նախաձեռնել միսիոներական ճամփորդություն և կատարել համապատասխան հետազոտություններ բուն Հայաստանի տարածքում⁶⁴: Այդ առաքելությունը պետք է կազմակերպվեր Մալթայի միսիոներական կայանի կողմից: Առաջին ամերիկացի միսիոներները, ովքեր հայերին ուսումնասիրելու նպատակով ստանձնեցին ճանապարհորդել ողջ Հայաստանով, ինչպես արդեն նշվեց, ամերիկացի միսիոներներ էլի Սմիթն (1801-1857 թթ.) ու Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթն (1803-1862 թթ.) էին:

⁶⁴ *Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and In to Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, in 2 vols., Boston: Crocker and Brewster, New York: Jonathan Leavitt, 1833, Preface, էջ V.

Նշենք, որ ամերիկացի միսիոներներից առաջ Արևմտյան Հայաստան, մասնավորապես Կարս, Բայազետ, Էրզրում, այցելել էին Շուշիում տեղակայված շվեցարացի միսիոներները վերապատվելի Զարեմբայի (Zaremba) գլխավորությամբ⁶⁵: Առաջին բողոքական միսիոներների գործունեությանը անդրադարձել են Ղևոնդ Ալիշանը և Մաղաքիա արք. Օրմանյանը⁶⁶:

Էլի Սմիթը միսիոներ գիտնական էր, որն աշխատել է Մալթայում և Բեյրութում, ազատ տիրապետել է արաբերենին, որոշ չափով նաև թուրքերենին: Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթն համարվում է Օսմանյան կայսրությունում հայ բողոքական առաքելության հիմնադիրներից և «հայկական առաքելության հայրը»: Վերջինս իր կյանքի 30 տարիները նվիրել է Օսմանյան կայսրությունում բողոքական գաղափարների տարածմանն ու բողոքական համայնքի կազմավորմանը⁶⁷:

Վերջիններս իրենց ուղևորությունը սկսում են 1830 թ. մարտի 17-ին Մալթա կղզուց: Մարտի 26-ին միսիոներները հասնում են Զմյուռնիա, որտեղից էլ մեկնարկում նրանց երկար ճանապարհորդությունը ողջ Հայաստանի տարածքով⁶⁸: Միսիոներներն իրենց հետ ունեին տեղացի ուղեկցորդներ: Ի դեպ, վերջիններիս ուղեկցուղ թարգմանիչը ազգությամբ հայ

⁶⁵ Eli Smith, Harrison Gray Otis Dwight, նշվ. աշխ., էջ 72:

⁶⁶ Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց Վեներտիկ, 1890, էջ 23: **Մաղաքիա արք. Օրմանյան**, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, հատոր Գ., էջ 2541:

⁶⁷ Leon Arpee, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, New York, 1946, էջ 49-50:

⁶⁸ Eli Smith, Harrison Gray Otis Dwight, նշվ. աշխ., էջ 1-2:

էր: Իրենց ողջ ուղևորության ընթացքում միսիոներներն անցնում են շուրջ 2408 մղոն տարածություն: Իրենց ուղևորությունը սկսելով Զմյուռնիայից՝ անցնում են Կոստանդնուպոլիս, որտեղից էլ Փոքր Ասիայի տարածքով ճանապարհվում են դեպի Թոքաթ, Էրզրում, Կարս, այնուհետև հատելով ռուս-թուրքական սահմանը՝ մտնում են Գյումրի, որտեղից էլ ուղևորվում են Թիֆլիս: Միսիոներները Թիֆլիսից դեպի հյուսիս չեն շարունակում ճամփորդությունը և կրկին վերդառնում են դեպի Հայաստան՝ ուղղություն վերցնելով դեպի Շուշի: Խրամ գետի վրայի հայտնի Կարմիր կամուրջն անցնելուց հետո՝ վերջիններս նշում են, որ կրկին մուտք են գործել Հայաստան⁶⁹: Շուշիից անցնելով դեպի Սյունիք՝ միսիոներները ժամանում են Նախիջևան, ապա Երևան, Էջմիածին, որից հետո ճանապարհվում են դեպի Պարսկաստան՝ Խոյ, Թավրիզ, Ուրմիա, հետո, հատելով պարսկա-թուրքական սահմանը, հասնում են Բայազետ, այնուհետև կրկին Էրզրում, որտեղից էլ ուղևորվում են Տրապիզոն: Այստեղ էլ ավարտելով իրենց ուղևորությունը՝ 1831 թ. մայիսի 14-ին նավով ճանապարհվում և տասն օր անց հասնում են Կ. Պոլիս: Այստեղ մի քանի շաբաթ անցկացնելուց հետո միսիոներները վերադառնում են Մալթա: Միսիոներների ողջ ճամփորդությունը տևում է 15 ու կես ամիս⁷⁰:

Բացի խոշոր քաղաքներից միսիոներները այցելում են նաև բազմաթիվ հայրենակ գյուղեր: Այսինքն երկու բողոքական միսիոներները իրենց ուղեկցող խմբով լինում են երեք

⁶⁹ Նույն տեղում, էջ 164:

⁷⁰ Նույն տեղում, էջ 459-460:

կայսրությունների՝ Օսմանյան, Ռուսական և Պարսկական, կազմում գտնվող հայկական հիմնական բնակավայրերում:

1833 թ. ամերիկացի միսիոներների Հայաստանում կատարած ճամփորդության արդյունքում կատարած ուսումնասիրությունները երկու հատորով տպագրվում են ԱՄՆ-ում⁷¹, իսկ մեկ տարի անց մեկ ամբողջական հատորով Լոնդոնում⁷²: Ամերիկացի միսիոներների ճամփորդական ուսումնասիրությունները հրատարակություններում ներկայացված են 24 նամակ-զեկուցագրերի տեսքով:

Միսիոներները իրենց նամակները ուղարկել են «Ամերիկյան խորհրդի» քարտուղարներից մեկին՝ վերապատվելի Ռուֆուս Անդերսոնին (Rufus Anderson), որի միջոցով էլ դրանք ուղարկվել են վերադաս մարմիններին⁷³: Միսիոներներին տրված հրահանգների համաձայն Հայաստանով ճանապարհորդող երկու միսիոներներից յուրաքանչյուրն պետք է առանձին գրի առներ ականատես եղած դեպքերն ու ներկայացներ սեփական կարծիքը: Դա արվում էր հետազայում սխալներից և բացթողումներից խուսափելու համար: Բացի այդ յուրաքանչյուրը ներկայացրել է առանձին

⁷¹ *Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and In to Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, in 2 vols. , Boston: Crocker and Brewstar, New York: Jonathan Leavitt, 1833.

⁷² **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, *Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, London, 1834.

⁷³ Նույն տեղում, Preface, էջ IX.

զեկուցագիր: Հետագայում երկուսի ներկայացրած առանձին զեկույցների հիման վրա պատրաստվել է հրատարակությունը⁷⁴:

Ձեկուցագրերը, թեև պատրաստվել են երկու միսիոներների օրագրային դիտարկումների հիման վրա, սակայն աշխատանքի շարադրանքից հասկացվում է, որ այն հիմնականում պատրաստել է Էլի Սմիթը: Իսկ Հարիսոն Դուայթը Հայաստան կատարած իր ուղևորությունից մոտ երկու տասնամյակ անց իր սեփական հիշողություններն ու հայերի շրջանում կատարած հետազա ուսումնասիրությունները ամփոփում է երկու տարբեր աշխատություններում, որոնք ևս հանդիսանում են հետաքրքիր աղբյուրներ հայոց պատմության մի շարք հարցերի, հատկապես հայության շրջանում բողոքականության տարածման պատմության ուսումնասիրման համար⁷⁵: Դուայթի տրամադրած տեղեկությունները հետագայում հիմք են հանդիսացել նաև ամերիկացի այլ հեղինակների հայոց եկեղեցուն նվիրված տարբեր աշխատությունների ստեղծմանը⁷⁶:

Աշխատության մեջ ընդգրկված 24 զեկուցագրերը պարունակում են բազմաթիվ հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ այդ ժամանակաշրջանում հայության

⁷⁴ Նույն տեղում, Preface, էջ VII-VIII.

⁷⁵ **Harrison Gray Otis Dwight**, *Christianity Revived in the East, Or, A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey*, Baker and Scribner, 1850. **և Harrison Gray Otis Dwight**, *Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church*, London: J. Nisbe, 1854.

⁷⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս «Հայոց եկեղեցու մասին» (փոխադրությունը՝ Արշակ Գ. Մադոյանի), «Էջմիածին» կրոնագիտական եւ հայագիտական ամսագիր, Էջմիածին, հուլիս, 2018, էջ 31-46:

վիճակի, թվաքանակի, սովորույթների, հայոց եկեղեցու և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Բացի այդ թե՛ ամերիկյան և թե՛ անգլիական հրատարակությունները ունեն ընդարձակ Ներածություն, որտեղ հնարավոր մանրամասն ժամանակի աղբյուրագիտական և պատմագիտական նյութի հիման վրա ներկայացվում են հայոց պատմության հիմնական իրադարձությունները, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհն ու Հայաստանի պատմաշխարհագրական միջավայրը: Նշենք, որ ամերիկյան և անգլիական հրատարակությունների ներածական մասերը բովանդակային առումով որոշակ տարբերություններ ունեն: Անգլիական հրատարակության Ներածության մեջ Հայաստանը համարվում է «սրբազան աշխարհագրության» երկիր («Armenia is a country belonging to sacred geography»)⁷⁷: Հեղինակները Ներածությանը կից տեղադրել են նաև բառարան, որտեղ ընթերցողներին են ներկայացնում տարածաշրջանում կիրառվող բազմաթիվ տերմինների բացատրություններ: Կան տեղեկություններ նաև տարածաշրջանում կիրառվող տարբեր չափման ու դրամական միավորների վերաբերյալ: Այսինքն հեղինակների կողմից արվել է հնարավորը ներկայացված նյութը ընթերցողին մատչելի և հասկանալի դարձնելու համար:

Էլի Սմիթը հրատարակության Նախաբանում նշում է, որ իրենք փորձել են տալ հնարավորինս ճշմարիտ տեղեկություններ, հաճախ նույն փաստի կամ տեղեկության

⁷⁷ **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, *Missionary Researches in Armenia...*, Նախաբան, էջ XIII:

վերաբերյալ փորձելով համադրել տարբեր աղբյուրներ: Աշխատության մեջ միսիոներները հաճախ օգտագործում են նաև տարբեր պատմական աղբյուրներ և իրենցից առաջ տարածաշրջան այցելած եվրոպացի ճանապարհորդների աշխատություններ և ուղղեգրություններ: Հավաքած տեղեկությունների համար հիմք են հանդիսացել ոչ միայն իրենց տեսած, այլ նաև տարբեր անձանց հետ ունեցած խոսակցություններն ու զրույցները: Կարևոր է նաև, որ այս կամ այն տեղեկությունները հայտնելիս հեղինակները հիմնականում նշում են աղբյուրը՝ ընդգծելով թե այդ մասին կարդացել են, տեսել անձամբ, թե լսել որևէ մեկից: Պետք է նշել, որ աշխատանքում երբեմն տեղ են գտել նաև ոչ ամբողջապես ճիշտ տեղեկություններ, պատմական սխալ փաստեր, սուբյեկտիվ մեկնաբանություններ:

Էլի Սմիթի հաղորդմամբ, հավաքված տեղեկությունները ճամփորդությունից հետո Մալթայում ճշգրտվել են, Սմիթի բնորոշմամբ, հայկական եկեղեցական հարցերում լավագույնս տեղեկացված Դիոնիսիոս անունով մի եպիսկոպոսի հետ, որը նաև բազմաթիվ նոր տեղեկություններ է տրամադրել: Այնուամենայնիվ, Սմիթը չի բացառում, որ որոշ ոչ ճիշտ տեղեկություններ կարող են տեղ գտած լինել իրենց ուսումնասիրություններում: Վերջինս հատկապես մտահոգիչ է համարում բնակչության թվի հետ կապված տեղեկությունները, քանի որ հնարավոր չի եղել հայտնաբերել կանոնավոր մարդահամարի տվյալներ, իսկ հիմնական տվյալերը

հավաքագրվել են բանավոր հարցումների միջոցով⁷⁸: Միսոներների Շուշիում գտնվելու ընթացքում տեղեկություններ հավաքելու հարցում մեծապես օգտակար է եղել տեղի բողոքական առաքելության ղեկավար վերապատվելի Դիտրիխը (Dittrich)⁷⁹:

Հրատարակության համար հատուկ այդ նպատակով ստեղծվում և գրքի մեջ ներառվում է նաև Հայաստանի քարտեզ, քանի որ հեղինակաների վկայությամբ հնարավոր չի եղել գտնել արդեն իսկ գոյություն ունեցող քիչ թե շատ իրենց հրատարակության համար պատշաճ քարտեզ երեք կայսրությունների միջև բաժանված Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ: Վերջիններիս բնորոշմամբ ժամանակի քարտեզագիրների համար Հայաստանը հադիսանում էր «terra incognita»⁸⁰:

Ինչպես արդեն նշվեց ամերիկացի միսիոներների գլխավոր նպատակը Հայաստանում ուսումնասիրություններ կատարելն էր: Հայաստան հասնելու համար վերջիններս, ճանապարհվելով Կոստանդնուպոլսից, ցամաքային ճանապարհով անցնում են ողջ Փոքր Ասիան:

Միսիոներները Թոքաթ՝ պատմական Եվրոկիա, մտնելուց հետո համարում են, որ արդեն գտնվում են Փոքր Հայքում և իրենց խոսքերով, պատրաստվում են հաղորդել

⁷⁸ *Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia* . . . , Preface, էջ VI-VII.

⁷⁹ Նույն տեղում, Preface, էջ VI.

⁸⁰ Նույն տեղում, Preface, էջ IX.

ավելի մանրամասն տեղեկություններ⁸¹: Մատնանշենք մի կարևոր հանգամանք, որ միսիոներները իրենց զեկուցագրերում մշտապես փորձում են օգտագործել Հայաստանի տարբեր բնակավայրերի, նահանգների, գավառների, աշխարհագրական վայրերի պատմական ճիշտ հայկական անվանումները՝ երբեմն միաժամանակ նշելով դրանց փոփոխված օտար տարբերակները:

Ամերիկացի միսիոներները զեկուցագրերում հսկայական տեղ է հատկացված բնակչության կենցաղի, ապրելակերպի, սովորույթների, ավանդույթների նկարագրությանը, քրիստոնյաների և մուսուլմանների միջև հարաբերություններին: Վերջիններս հաճախ մանրամասն նկարագրում են մարդկանց տները, պաշտամունքային կառույցները, եկեղեցիները, բերդերը և այլն: Երբ համեմատում ենք վրջիններս կողմից հայերի տների նկարագրությունները պարզ է դառնում, որ գյուղական վայրերում հայկական տները Քսենոֆոնի նկարագրած ժամանակներից գրեթե չէին փոփոխվել: Մարդիկ հաճախ ապրում էին իրենց կենդանիների հետ մեկ հարկի տակ⁸²: Նկարագրություններում հաճախ կարելի է հանդիպել հազարաշեն տանիքներին, հայկական թռնրի գործածությանը, լավաշի պատրաստմանը: Նկարագրում են նաև աթարի պատրաստումն ու օգտագործումը, որը Հայաստանի անտառազուրկ վայրերում

⁸¹ **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, նշվ. աշխ., էջ 42:

⁸² Նույն տեղում, էջ 56, 57 և այլն:

հանդիսանում էր հիմնական վառելիքի միջոց⁸³: Միսիոներները Արաքսի հովտում տեսնելով գյուղատնտեսության զարգացման համար դժվար պայմանները, արհեստական ոռոգման համակարգերի անհրաժեշտությունը և գյուղացիների դժվար կյանքը՝ գրում են, որ ոչ մի վայրի համար ավելի ճիշտ չի հնչում այն միտքը, թե մարդը «հացը վաստակում է սեփական քրտինքով»⁸⁴: Ամերիկացիները տեղեկություններ են հաղորդում նաև այս կամ այն տարածաշրջանի եղանակի, ջերմաստիճանի, բնակլիմայական պայմանների, ինչպես նաև զբաղմունքի, ստացված բերքի, դրա տեսակների, մշակաբույսերի, կենդանական աշխարհի մասին և այլն:

Արցախում և Սյունիքում գտնված ժամանակ անդրադառնում են հայկական ընտանեկան սովորույթներին, ամուսնության հետ կապված ավանդույթներին, ընտանիքում կանանց դերին և մի շարք այլ հարցերին⁸⁵: Միսիոներները Ղարաբաղից Տաթև գնալու ճանապարհին գիշերում են Տեղ գյուղի մելիքի տանը: Վերջիններս այստեղ անդրադառնում են նաև հայկական ազնվականական դասին, կարճ անդրադարձ կատարում իշխանական տներին և մելիքներին՝ նշելով, որ նրանք հիմա չունեն նախկին փառքն ու հզորությունը, ինչպես անցյալում, բայց նրանց թիվը բավականին շատ է: Ցավոք

⁸³ Նույն տեղում, էջ 60:

⁸⁴ Նույն տեղում, էջ 270:

⁸⁵ Նույն տեղում, էջ 248-249 և այլն:

միսիոներները չեն հիշատակում որևէ մելիքի անուն, անգամ Տեղ գյուղի այն մելիքի անունը, որի տանը գիշերել են⁸⁶:

Որպես կանոն ամերիկացի միսիոներները փորձել են իրենց այցելած բնակավայրերի վերաբերյալ հայտնել հնարավորինս ճիշտ տեղեկություններ նաև բնակչության էթնիկ կազմի և թվի վերաբերյալ: Փոքր Ասիայի տարածքով անցնելու ընթացքում վերջիններս հաճախ են հանդիպում բնակավայրերի, որտեղ հայերը բնակչության զգալի մասն են կազմում: Բուն Հայաստանի տարածքում հայաբնակ բնակավայրերի թիվը շատանում է, թեև հաճախ են հանդիպում կիսով չափ հայերով բնակեցված, կամ ամբողջությամբ այլազգիներով բնակեցված բնակավայրեր: Թեև աշխատանքի նախաբանում նշվում է, որ իրենց հաղորդած վիճակագրական տվյալներին բնակչության թվի վերաբերյալ պետք է որոշակի զգուշությամբ վերաբերվել, այնուամենայնիվ միսիոներների հաղորդած տվյալները Հայաստանի տարբեր բնակավայրերի էթնիկ կազմի և բնակչության թվի վերաբերյալ⁸⁷ կարող են հանդիսանալ կարևոր աղբյուր տվյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական պատկերի ուսումնասիրման համար: Այդ տեղեկություններից պարզ է դառնում, որ, չնայած օտար ներթափանցումներին, Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր շարունակում էին ամբողջությամբ հայաբնակ լինել կամ հայերը կազմում էին մեծամասնություն: Նրանց տվյալների համաձայն

⁸⁶ Նույն տեղում, էջ 224-225:

⁸⁷ Նույն տեղում, էջ 2, 5, 36, 37, 42, 43, 44, 47, 50, 55, 79, 90, 119, 138, 272-274, 358, 415 և այլն:

տվյալ ժամանակաշրջանում հայահոծ էին նաև Փոքր Ասիայի, Վրաստանի բազմաթիվ բնակավայրեր:

Ամերիկացի միսիոներները հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև Հայաստանի տարածքում բնակվող տարբեր էթնոկրոնական խմբերի՝ թուրքերի, քրդերի, հույների, եզդիների, հրեաների, վրացիների, ասորիների, կովկասյան թաթարների⁸⁸, վերաբերյալ: Օրինակ, աշխատանքի ութերորդ գլուխը հիմնականում նվիրված է Վրաստանին, վրացիներին ու կովկասյան մյուս ժողովուրդներին: Երկու ամբողջական գլուխներ՝ 20-րդը և 21-րդը, նվիրված են Ատրպատականում՝ Սալմաստում և Ուրմիայի շրջանում, ապրող ասորիներին և նրանց տարբեր դավանական ուղղությունների՝ նեստորականներ, քաղկեդոնականներ, ներկայացմանը⁸⁹: Վերջիններս բացառիկ հետաքրքիր և հնարավոր մանրամասն տեղեկություններ են հաղորդում ասորիների, հատկապես նեստորականների, նրանց պատմական անցյալի, դավանանքի ու դրա առանձնահատկությունների, կրոնական հաստատությունների, հոգևորականների, ծեսերի, սովորությունների, կենցաղի, թվաքանակի վերաբերյալ:

Զեկուցագրերից մեկում ամերիկացի բողոքականները առաջարկում են հետագա միսիոներական առաքելությունը սկսել հենց նեստորականների շրջանում: Դա հիմնավորվում էր նախ նրանով, որ Թավրիզում գտնվում է անգլիական

⁸⁸ Նույն տեղում, էջ 100, 119, 144-159, 261-262, 357, 452-456 և այլն:

⁸⁹ Նույն տեղում, էջ 351-412:

հյուպատոսություն, որը կարող է իրենց տարբեր հարցերով աջակցել և հետո միսիոներները ենթադրում էին, որ գահաժառանգ Աբաս Միրզան, որի նստավայրը Թավրիզ քաղաքն էր, ևս կաջակցի իր ենթակա քրիստոնյաների շրջանում միսոներական գործունեություն իրականացնելու հարցում: Իսկ մահմեդականների շրջանում միսիոներական գործունեությունը դիտարկվում էր որպես երկրորդ ուղղություն⁹⁰: Ճամփորդության վերջում, երբ ամերիկացի միսիոներները ժամանում են Տրապիզոնում, վերջիններս եզրակացնում են, որ այդ քաղաքը կարող է լինել լավագույն տարբերակը միսիոներական կայան հիմնելու տեսակետից հույների, ինչպես նաև հայերի շրջանում բողոքականություն տարածելու նպատակով: Վերջիններս համարում են, որ վաղ թե ուշ էրզրումը կրկին կդառնա հայերով բնակեցված հիմնական կենտրոնը և Տրապիզոնի միսիոներական կայանը միջնորդ դեր կկատարի բուն Հայաստանի տարծքներ թափանցելու, ինչպես նաև Արևելյան Հայաստանի միսիոներների հետ կապ պահպանելու համար⁹¹:

Ամերիկացի միսիոներների ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացված հայ առաքելական եկեղեցուն: Վերջիններս պարբերաբար անդրադառնում են հայոց եկեղեցու դավանաբանական առանձնահատկություններին, ծեսերին ու ավանդույթներին, քրիստոնեական խորհրդանիշներին՝ մասնավորապես խաչին, խաչակնքման ձևին, խաչի

⁹⁰ Նույն տեղում, էջ 410-411:

⁹¹ Նույն տեղում, էջ 458:

պաշտամունքի հետ կապված առանձնահատկություններին, ծոմապահությանը և այլն⁹²: Ներկայացնում են հայոց եկեղեցու հոգևոր դասի և աստիճանակարգի հետ կապված առանձնահատկությունները⁹³:

Միսիոներները իրեն ուղևորության ընթացքում այցելում են նաև Էջմիածին, որին էլ նվիրված է աշխատության 15-րդ և 16-րդ գլուխները, որտեղ նկարագրում են Մայր Աթոռը և հայոց եկեղեցու մի շարք ծեսեր և արարողություններ, անդրադառնում են խոստովանության կարգին, մյուռոնի օրհնությանը, մկրտությանը, եկեղեցու յոթ խորհուրդներին, եպիսկոպոսների ձեռնադրությանը, Մայր Աթոռի եկամուտներն, թեմերին և մի շարք այլ հարցերին⁹⁴: Վերջիններս մասնակցում են Մայր Աթոռում տեղի ունեցած պատարագին, որին ներկա է լինում Եփրեմ կաթողիկոսը և Հայկական մարզի կառավարիչ, գեներալ Վ. Բեհրոթովը⁹⁵: Միսիոներների վկայությամբ իրենց այցի ընթացքում Մայր Աթոռի միաբանությունում եղել են 14 եպիսկոպոսներ, 45-50 վարդապետներ և 7-8 սարկավագներ⁹⁶:

Միսիոներները նշում են, որ սկզբում Մայր Աթոռում իրենց որոշակի սառն են ընդունում, քանի որ տեղեկությունն էր տարածվել, որ իրենք Հայաստան են ժամանել հայությանը դավանափոխ անելու նպատակով: Էջմիածնի միաբանության անդամները հիմնականում խուսափել են հարցազրույցներ տալ,

⁹² Նույն տեղում, էջ 86-89, 96-99, 106-110:

⁹³ Նույն տեղում, էջ 231-236:

⁹⁴ Նույն տեղում, էջ 280-310:

⁹⁵ Նույն տեղում, էջ 283-287:

⁹⁶ Նույն տեղում, էջ 301:

հնարավոր չի եղել նաև առանձին գրույց ունենալ կաթողիկոսի հետ: Միսիոներներին հաջողվում է էջմիածնի միաբաններից հանդիպել կաթողիկոսի քարտուղար Հովհաննես վարդապետ Սուրենյանի հետ, որից ջերմ տպավորություններ են ստանում: Վերջինիս հետ քննարկում են քրիստոնեական հավատքի և եկեղեցու հետ կապված մի շարք հարցեր: Հովհաննես վարդապետը միսիոներներից հետաքրքրվել է իրենց այցի նպատակը, որին ի պատասխան միսիոներները հայտնում են, որ իրենց գլխավոր նպատակը Հայաստանի և նրա բնակիչների, հատկապես վերջիններիս կրոնական վիճակի, ուսումնասիրումն է: Այստեղ միսիոներներին իրազեկում են նաև, որ իրենք առաջին ամերիկացիներն են, որ երբևէ այցելել են Մայր Աթոռ⁹⁷:

Մայր Աթոռում միսիոներներին վերջիվերջո հաջողվում է տեսնել կաթողիկոսին վերջինիս ձեռնադրման 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառման ժամանակ, սակայն առանձին գրույց նրա հետ այդպես էլ տեղի չի ունենում: Միջոցառմանը ներկա է լինում նաև իշխան Բեհբույթովը կնոջ հետ: Միսիոներները հայտնում են, որ Մայր Աթոռի այգում կազմակերպած հուրասիրության ժամանակ կաթողիկոսի կենացը ներկաները խմում են կոնյակով (brandy), որին հաջորդում է այդտեղ գտնվող զինված գյուղացիների հրացանային համազարկով ողջույնը⁹⁸: Եթե միսիոներներ իրենց հանդիպած խմիչքը չեն շփոթում կոնյակի հետ, ապա

⁹⁷ Նույն տեղում, էջ 282, 303-304:

⁹⁸ Նույն տեղում, էջ 294-295, 298:

կարծում ենք, սա Հայաստանի տարածքում կոնյակի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունն է հանդիսանում: Նույն աշխատության մեջ վերջիններս մի քանի տեղ ևս հիշատակում են տեղի ժողովուրդների կողմից կոնյակի օգտագործման մասին:

Աշխատանքում կան հետաքրքրական տվյալներ նաև կաթոլիկ հայերի մասին: Միսիոներների վկայությամբ կաթոլիկների թիվն ավելացել էր վերջին մի քանի տարվա ընթացքում և վերջիններս բավական լուրջ աջակցություն էին ստանում եվրոպական տերությունների կողմից: Օրինակ, նշվում է, որ Զմյուռնիայում ապրող 8 հազար հայերից 2-3 հազարը հայ կաթոլիկներ էին, իսկ Կ.Պոլսում վերջիններիս թիվը 27 հազար էր⁹⁹: Սա ցույց է տալիս, որ կաթոլիկ քարոզիչները ևս ակտիվ գործունեություն էին իրականացնում Օսմանյան կայսրության հայերի շրջանում: Տեղեկություններ են հաղորդվում նաև բուն Հայաստանի տարածքում գտնվող հայ կաթոլիկ գյուղերի, նրանց նիստուկացի, հայոց եկեղեցու հետ ունեցած հարաբերություններ մասին¹⁰⁰:

Մեծ թվով կաթոլիկ հայեր՝ 645 անձ, եղել են նաև Էրզրումում, որը հանդիսացել է հայերի շրջանում քարոզչություն իրականացնող ճիզվիտների կենտրոնը, ովքեր այստեղ էին հաստատվել դեռևս 1688 թ.¹Ֆրանսիական դեսպանի միջոցով սուլթանից ստանալով ապահովության ֆերմաններ: Սակայն միսիոներների այցի ընթացքում Էրզրումի ճիզվիտների

⁹⁹ Նույն տեղում, էջ 2, 19, 33:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 428-433:

կենտրոնը այլևս չէր գործում: Իսկ հայ կաթոլիկների քահանան սկսված հալածանքների պատճառով վտարվել էր Կ.Պոլիս¹⁰¹: Հատկանշական է, որ միսիոներները կաթոլիկներին անվանում են ուղղակի պապականներ, աշխատանքում երբեք չի օգտագործում կաթոլիկ անվանումը:

Ամերիկացի միսիոներները չափազանց հետաքրքրական տեղեկություններ են հայտնում նաև Արևմտյան Հայաստանում՝ Ակնում և Էրզրումից ոչ հեռու գտվող մի քանի հայկական գյուղերում ապրող հայ ուղղափառների մասին, որոնք ենթարկվում էին Կ.Պոլսի ուղղափառ պատրիարքին: Վերջինիս կողմից այդ գյուղերում նշանակված է եղել ուղղափառ եպիսկոպոս: Ուղղափառ հայերը խոսել են հայերեն, նրանց եկեղեցական գրքերը ևս եղել են հայերենով: Միսիոներներին տեղում պատմել են, որ երբ այս ուղղափառ հայերը ուխտի են գնում Երուսաղեմ, մասնակցում են Հայոց եկեղեցու պատարագներին, քանի որ հունարեն ոչինչ չեն հասկանում: Միսիոներների վկայությամբ Ակնի ուղղափառ հայերից շատերը բանկիրներ էին և նրանցից որոշները Կ. Պոլսում իրենց բնագավառի ամենակայացած ու հարուստ գործիչներից էին, որոնցից մեկի հետ էլ միսիոներները հանդիպել են Էջմիածնում¹⁰²: Միսիոներները նշում են, որ բացի վերը նշված գյուղերից նրանք չեն լսել որևէ այլ ուղղափառ հայկական համայնքի գոյության մասին: Մեզ ևս չհաջողվեց այլ

¹⁰¹ Նույն տեղում, էջ 64-66, 99:

¹⁰² Նույն տեղում, էջ 418-419:

տեղեկություններ գտնել միսիոներների կողմից հիշատակված հայ ուղղափառների վերաբերյալ:

Իրենց ուսումնասիրություններում ամերիկացի միսիոներները պարբերաբար անդրադառնում են նաև տարածաշրջանում բողոքական միսիոներների գործունեությանը և արդեն իսկ գոյություն ունեցող առաքելություններին ու համայնքներին: Մասնավորապես Շուշի այցի ժամանակ միսիոներները հաղորդում են խիստ հետաքրքրական տեղեկություններ Գանձակից ոչ հեռու գտնվող գերմանական Անեֆելդ, ինչպես նաև Վրաստանի տարածքում հաստատված մի քանի այլ բողոքական գաղութների մասին, որոնք հաստատվել էին այստեղ, քանի որ այդ տարիներին տարածված լուրերի համաձայն 1836 թ. տեղի էր ունենալու աշխարհի կործանումը՝ Ապոկալիպսիսը¹⁰³:

Աշխատանքի 11-րդ գլուխն էլ ամբողջությամբ նվիրված է Շուշիում հաստատված միսիոներների գործունեությանը և վերջիններիս Կովկասում հաստատվելու պատմությանը: Աշխատանքի այս հատվածում անդրադարձ կա նաև բողոքական միսիոներների և Հայոց եկեղեցու հարաբերություններին, նրանց միջև գոյություն ունեցող հակասություններին¹⁰⁴:

¹⁰³ Նույն տեղում, էջ 166-171:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 195-217:

Միսիոներները թեև չեն լինում Համշենում, սակայն որոշ տեղեկություններ են հաղորդում նաև այդ տարածաշրջանի իսլամացած հայերի և հույների մասին¹⁰⁵:

Հետաքրքրական են միսիոներների անդրադարձները հայերի կրթական կյանքին: Որպես կանոն վերջիններս իրենց այցելած բնակավայրերում հետաքրքրվել են դպրոցների գոյության մասին: Դպրոցները հիմնականում եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցներ էին, որոնք ուսուցանում էին տարրական գրագիտություն¹⁰⁶: Գյուղական բնակավայրերի հիմնական մասը զրկված են եղել անգամ նման դպրոցներից, ինչը բազմիցս փաստում են միսիոներները:

Դպրոցները հիմնականում գործել են քաղաքներում: Օրինակ, գյուղական վայրերում դպրոցներ չլինելու պատճառով Էրզրումի շրջանի հայեր իրենց երեխաներին ուղարկում էին Էրզրում: Միսիոներների վկայությամբ Էրզրումի հայկական դպրոցը եղել է բավականին զարգացած, տնօրենը եղել է աշխարհիկ անձնավորություն՝ ունենալով 5-6 օգնական ուսուցիչներ: Դպրոցն ունեցել է 500-600 աշակերտ, որը բավական մեծ թիվ է ժամանակի համար: Նշվում է նաև, որ Էրզրումի հայերի շրջանում գրագիտության մակարդակը բավականին բարձր է եղել, գրագետ են եղել նաև քաղաքի որոշ կանայք, ովքեր դպրոց չէին հաճախում, քանի որ դպրոցը նախատեսված էր միայն արական սեռի համար: Էրզրումի հայկական դպրոցը միսիոներների այցի ժամանակ չի գործել,

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 456-457:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 43:

տեղի հայերի մեծ մասի Արևելյան Հայաստան գաղթելու պատճառով¹⁰⁷:

Միսիոներները Կարսում, որտեղ Արևելյան Հայաստան գաղթից հետո դեռ կար 600 տուն հայ, հանդիպում են մինչ այդ իրենց պատահած գործող առաջին դպրոցին¹⁰⁸:

Թիֆլիսում միսիոներները այցելում են հայտնի Ներսիսյան դպրոց: Վերջիններս բարձր են գնահատում Ներսես Աշտարակեցու գործունեությունը, հատկապես նրա ջանքերը կրթության կազմակերպման հարցում: Ըստ միսիոներների, որկյալ դպրոց ունենալու համար անհրաժեշտ շենքային պայմաններից բացի, խիստ դժվար էր որակյալ մասնագետների հարցը: Ներսես Աշտարակեցուն հաջողվել էր լուծել երկու խնդիրներն էլ: Գեղեցիկ և հարմարավետ շենքից բացի դպրոցը կահավորված է եղել ժամանակի կրթական պահանջներին համապատասխան: Այս ամենից բացի դպրոցը համալրված է եղել տարբեր տեղերից հրավիրված բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Այդ շրջանում դպրոցն ուներ 10-11 ուսուցիչներ և մոտ 200 աշակերտ: Միսիոներները տպավորվելով Ներսիսյան դպրոցով՝ նշում են, որ այն չէր տարբերվում ժամանակի եվրոպական նմանատիպ կրթական հաստատություններից¹⁰⁹:

Իրենց աշխատության էջերում միսիոներները պարբերաբար տեղեկություններ են հաղորդում տղաների

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 65, 77, 95:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 94:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 132-135:

համար նախատեսված այլ դպրոցների մասին, որոնք գործել են Շուշիում, Արցախի սուրբ Հակոբավանքում, Գանձակում, Շամախիում, Շաքիում, Տաթևում, Գյումրիում, Երևանում, Աշտարակում, Տրապիզոնում¹¹⁰: Հատկապես հետաքրքրական են միսիոներների անդրադարձները Շուշիի կրթական կյանքին: Վերջինների վկայությամբ 1827 թ. այնտեղ հիմնադրվել էր արական դպրոց, ինչպես նաև մեկ մասնավոր դպրոց, որի աշակերտների թիվը հասնում է 130-ի: Հայտնի է, որ Շուշիում կրթական գործունեություն էին իրականացնում այնտեղ հաստատված բողոքականները, որոնց ջանքերով 1831 թ. դրությամբ Շուշիում և շրջակայքում գործել է հինգ դպրոց, ինչպես նաև տապրան¹¹¹:

Միսիոներների ուշադրության կենտրոնում են հայտնվում նաև կանանց կրթության հարցերը: Վերջիններս նշում են, որ իգական սեռի համար նախատեսված որևէ դպրոց իրենց հայտնի չէ ողջ Հայաստանի տարածքում, բացի մեկից, որը գործել է Ագուլիսում իրենց այցից մոտ 20 տարի առաջ այնտեղ գտնվող կուսանոցում և ունեցել է շուրջ 60 աշակերտ: Արցախ այցելության ընթացքում միսիոներները հիշատակում են մի հետաքրքրական դեպք այն մասին, որ Գանձակում և Շամախիում 2-3 աղջիկների թույլատրվել է կարդալ սովորել տղաների տեղի արական դպրոցում¹¹²: Փաստորեն սա երկու սեռերի աշակերտների նույն դպրոց հաճախելու առաջին

¹¹⁰ Նույն տեղում, էջ 192, 279, 456:

¹¹¹ Նույն տեղում, էջ 205-206, 208, 214:

¹¹² Նույն տեղում, էջ 191:

հիշատակություններից է հայկական կրթական կյանքի պատմության մեջ: Իսկ Շուշիում դպրոցներից մեկում տղաներին դասավանդել է իգական սեռի ներկայացուցիչ կուսանոցից, որը կրկին բացառիկ երևույթ էր:

Իրենց տեղեկությունների հիման վրա միսիոներները նշում են, որ Թուրքիայաստանում, Ռուսահայաստանում և Պարսկահայաստանում միասին վերցրած գործել են 14 հայկական դպրոցներ: Փաստենք, որ հայկական դպրոցների թիվը շատ ավելին է եղել, ուղղակի միսիոներներին հասանելի չի եղել ամբողջական տեղեկատվությունը դրանց վերաբերյալ:

Միսիոներները Արևմտյան Հայաստանում գտնվելու ընթացքում ականատես են լինում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայերի գաղթին դեպի Արևելյան Հայաստան և հետաքրքրական տեղեկություններ են հայտնում այդ մասին: Միսիոներները հասնում են Էրզրում այն ժամանակ, երբ մի քանի օրից ռուսական զորքերը պետք է լքեին քաղաքը: Վերջիններս ականատես են լինում Էրզրումից, այնուհետև նաև Կարսից հայերի գաղթին: Նկարագրում են գաղթականների սարսափելի ծանր վիճակը, որոնց, ըստ միսիոներների, Ամերիկայում ուղղակի մուրացկաններ կհամարեին իրենց տեսքի պատճառով¹¹³: Միսիոներները նկարագրում են հայերի կողմից լքված Էրզրումը, Կարսը, Բայազետը և բազմաթիվ այլ գյուղեր, ամայի ու անմշակ դարձած դաշտերը: Հայտնում են, որ հայերի գաղթից հետո Էրզրումում մնացել էին ընդամենը 120

¹¹³ Նույն տեղում, էջ 62-75:

առաքելական և 48 կաթոլիկ հայ ընտանիքներ: Քաղաքում եղած 6000 խանութներից կեսը փակվել էին, չէին գործում նաև արհեստանոցները¹¹⁴: Ամերիկացի միսիոներներին հանդիպած մի հայ եպիսկոպոս տեղեկացնում է, որ գաղթել են շուրջ 15 հազար հայ ընտանիքներ, կամ 75 հազար անձ, որից 7 հազար ընտանիք Էրզրումից, 4 հազարը՝ Կարսից և 4 հազարը՝ Բայազետից: Գաղթից հետո երկրորդ անգամ Էրզրումում գտնվելու ժամանակ տեղացի հարկահաններից մեկն էլ միսիոներներին տեղեկացրել է, որ միայն Էրզրումից հեռացել են 97 հազար հայեր:¹¹⁵ Այս թիվը խիստ չափազանցված է: Միսիոներները վկայում են, որ թուրքերն ակնհայտորեն զոջում էին հայերի գաղթի համար, քանի որ Էրզրում քաղաքը և շատ այլ բնակավայրեր գրեթե ամբողջությամբ լքյալ վիճակում էին հայտնվել¹¹⁶: Հայերի հեռանալուց հետո հատկապես մեծ էր տնտեսական վնասները, ուստի պատահական չէ, որ թուրքական իշխանությունները իրավիճակը ավելի չվատթարացնելու համար չգաղթած հայերին վերցրել էին իրենց պաշտպանության տակ մոլեռադ ամբոխի վրեժխնդրությունից պաշտպանելու նպատակով:

Միսիոներները Էրզրումում գտնված ժամանակ նկարագրում են մի հետաքրքրական դեպք: Երբ մոտենում են ռուսների կողմից գրավված քաղաքին, միսիոներների հետ գտնվող թուրք ուղեկցորդը, տեսնելով ռուս զինվորներին, իր

¹¹⁴ Նույն տեղում, էջ 441:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 94:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 68:

վրայի զենքերը արագ հանում և տալիս է ազգությամբ հայ ուղեկցորդին: «Հաղթական ռուսական բանակը փոխել էր թուրքի և ռայայի դիրքերը»¹¹⁷ -գրում են դեպքին ականատես միսիոներները:

Միսիոներները Ատրպատականում գտնվելու ժամանակ անդրադառնում են նաև պարսկահայերի գաղթին և կրկին հաղորդում հետաքրքրական տեղեկություններ, վիճակագրական տվյալներ հայերի հեռանալուց հետո Ատրպատականի հայաշատ բնակավայրերում ստեղծված վիճակի վերաբերյալ: Վերջիններիս վկայությամբ 60-70 հայ ընտանիքներ գաղթից հետո, չհարմարվելով նոր պայմաններին, կրկին վերադարձել էին Ատրպատական¹¹⁸: Աշխատության մեջ տեղեկություններ կան նաև Ատրպատականից գաղթած և Արարատյան դաշտի գյուղերում հաստատված հայության վերբերյալ¹¹⁹:

Ամերիկացի միսիոներները հատկապես հնարավոր մանրամասն տեղեկություններ են հաղորդում նաև մի շարք խոշոր քաղաքների վերաբերյալ՝ Էրզրում, Կարս, Թիֆլիս, Շուշի, Երևան, Թավրիզ, Տրապիզոն¹²⁰:

Մասնավորապես, վերջիններս կարևորում են Էրզրումի դերը Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի հարցում, որում հսկայական էր հայերի դերը: Քաղաքն ունեցել է 36

¹¹⁷ Նույն տեղում, էջ 61:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 315, 324-325:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 272-274:

¹²⁰ Նույն տեղում, էջ 62-70, 91-92, 121-138 և այլն:

քարավանատներ: Միսիոներների բնութագրմամբ, անգամ Բարեհուսո հրվանդանի հայտնագործման և ծովային առևտրի զարգացման պարագայում Էրզրումը չէր կորցրել իր նշանակությունը: Սակայն, ինչպես արդեն ասվեց, հայերի գաղթից հետո տեղի առևտուրն ու արհեստները գրեթե ամբողջությամբ դադարել էին¹²¹:

Հետաքրքրական են միսիոներների հաղորդած տեղեկությունները Թիֆլիսի և այնտեղ ապրող հայերի վերաբերյալ: Աշխատության 5-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Թիֆլիսին: Հաղորդած տվյալների համաձայն 1825 թ. դրությամբ Թիֆլիսում ապրել են 2500 ընտանիք հայեր, 1500 վրացիներ, 500 մուսուլման ընտանիքներ: Իսկ արդեն 1830 թ., մի հայ եպիսկոպոսի հայտնած տեղեկությունների համաձայն, Թիֆլիսի հայ ընտանիքների թիվը հասնում է 4000-ի: Այս թիվը միսիոներները համարում են փոքր-ինչ չափազանցություն, քանի, որ ըստ նրանց, Թիֆլիսում ընդհանուր բանկչությունը այդ շրջանում կազմում էր 30 հազար մարդ: Թիֆլիսի ողջ առևտուրն ու արհեստները գտնվել են հայերի ձեռքում: Միսիոներները քաղաքում հանդիպել են ընդամենը մեկ վրացի, երկու-երեք հյուն և մեկ շվեցարացի առևտրականների: Սակայն վերջիններս զարմանքով նշում են, որ թեև հայերը մեծամասնություն էին կազմում Թիֆլիսում, սակայն հաճախ խոսում էին վրացերեն: Միսիոներները հիշատակում են Թիֆլիսի հայկական 10 եկեղեցիների մասին, որոնցից մեկը հատկացված է եղել կուսանոցին և մեկը չի գործել և ևս 5-ը եղել

¹²¹ Նույն տեղում, էջ 66-67:

են Թիֆլիսի արվարձաններում: Վերջիններս բերում են նաև Ժան Շարդենի Թիֆլիսի հայկական եկեղեցիների վերաբերյալ հաղորդած տեղեկությունները, ըստ որի հայկական եկեղեցիների թիվը հասել է 20-ի, որից 12-ը կենտրոնում, 8-ը արվարձաններում: Այն դեպքում, որ, ըստ ականատես միսիոներների, Թիֆլիսում եղել է ընդամենը 8 կամ 10 վրացական եկեղեցի¹²²:

Աշխատության երկու գլուխներ՝ 10-րդը և 11-րդը, նվիրված են Շուշիին: Այս գլխում հեղինակներն անդրադառնում են ոչ միայն Շուշի քաղաքին, այլ նաև ողջ Ղարաբաղին ընդհանրապես: Միսիոներները նկարագրում են Շուշի քաղաքը, նրա աշխարհագրական դիրքը, շենքերը, բնակչությունը, կրթական և մշակութային կյանքը, բնակիչների սովորույթները: Շուշիում հայերին են պատկանել 2 մեծ և 2 փոքր եկեղեցիներ: Քաղաքում եղել է նաև 2 մզկիթ: Նշվում է, որ Ղարաբաղի բնակչությունը մոտ 50 հազար է, որի կեսը հայեր են, կեսը՝ մուսուլմաններ: Հետաքրքիր է, որ Ղարաբաղի և շրջակայքի եկվոր մուսուլման բնակիչներին միսիոներները հավաքական ձևով անվանում են ուղղակի մուսուլմաններ: Միսիոներները նշում են, որ Ղարաբաղի և շրջակա նահանգների մուսուլմաններին ռուսներն ու եվրոպացիները անվանում են թաթար, հայերը՝ թուրք, իսկ իրենք իրենց անվանում են ուղղակի մուսուլմաններ: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվում նաև վերջիններիս սովորույթներին,

¹²² Նույն տեղում, էջ 128-153:

լեզվին, գրագիտության մակարդակին¹²³: Միսիոներները փաստում են, որ տեղացի մուսուլմանների լեզուն գրավոր լեզվի մակարդակի չի հասել և տեղական թուրքական լեզվով իրենց հայտնի չէ մինչ այժմ գրված կամ հրատարակված որևէ գիրք: Ղարաբաղի և շրջակայքի թուրքալեզու մահմեդականները գրագետ չէին և որևէ ցանկություն չունեին համագործակցելու միսիոներների հետ: Վերջիններիս համար տարբեր գրքերի թարգմանության հարցում Շուշիում հաստատված միսիոներներին օգնում է բռնի իսլամացած, հետագայում ռուս-պարսկական պատերազմից հետո կրկին քրիստոնեությանը վերադարձած Հարություն անունով մի հայ, որը փայլուն տիրապետում էր տեղական լեզուներին: Վերջինս ամբողջությամբ տեղական թուրքերենով է թարգմանում նաև Նոր Կտակարանը: Սակայն համապատասխան տառատեսակների բացակայությունը դժվարացնում էր թարգմանված գրքերի և քարոզչական նյութերի տպագրությունը տեղացի մահմեդականների լեզվով, թեև առաջին նման փորձերը կատարվում են, սակայն քարոզչական իմաստով, ինչպես արդեն նշվել է, դրանք որևէ օգուտ չեն տալիս¹²⁴:

Շուշիին նվիրված գլխում նկարագրում են նաև Ղարաբաղի հայերի սովորույթները, կրթության նկատմաբ վերաբերմունքը, դպրոցները, դասագրքերը: Անդրադառնում են նաև տարբեր բնակավայրերի բնակչության թվին: Օրինակ,

¹²³ Նույն տեղում, էջ 179-189:

¹²⁴ Նույն տեղում, էջ 186, 200-202:

Շիրվանում, վերջիններիս վկայությամբ, կար 50 հայկական գյուղ և 200 հայ ընտանիք բուն քաղաքում, իսկ Բաքու քաղաքում, որն ունեցել է մոտ 5000 բնակիչ, եղել են 80 հայ ընտանիքներ¹²⁵: Նշենք, որ Ղարաբաղի և շրջակա շրջանների հայերի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես միսիոներներն են վկայում, հիմնականում տրամադրում են Շուշիի բողոքականները: «Շուշի» վերանգրված 11-րդ գլուխը հիմնականում նվիրված է Շուշիի բողոքական միսիայի գործունեության ներկայացմանը:

Այսպիսով, խիստ կարևորելով ամերիկացի միսիոներների Հայաստանում կատարած ուսումնասիրությունների և դրանց արդյունքների հրատարակման նշանակությունը՝ նշենք որ, ինչպես յուրաքանչյուր նման աշխատության դեպքում, այստեղ ևս պետք է ցուցաբերել որոշակի քննադատական մոտեցում: Պետք է հաշվի առնել նաև նման աշխատանքներին բնութագրական սուբյեկտիվության հանգամանքը, թեև ամերիկացի միսիոներները, ինչպես իրենք են վստահեցնում, փորձել են հնարավորինս մնալ օբյեկտիվության շրջանակում:

Առանձին դեպքերում հեղինակների հաղորդած տեղեկությունները ոչ ամբողջական են ճշգրիտ, տեղեկությունների աղբյուրը երբեմն այս կամ անձի կողմից ներկայացված տվյալներն են, որոնք կարող են լինել սխալ կամ ոչ լիարժեք: Որոշ դեպքերում միսիոներների մտքերի և տեսակետների հետ կարելի է չհամաձայնվել: Միսիոներները

¹²⁵ Նույն տեղում, էջ 183-194:

հաճախ իրենց հաղորդած տեղեկությունները ներկայացնում են իրենց կրոնադավանական աշխարհընկալումների տեսանկյունից, փաստերին ավելացնում են սեփական դատողությունները, վերլուծությունները, հաճախ նաև քննադատությունը: Վերջիններս, հասկանալի պատճառներով, հատկապես քննադատաբար և որոշակի կողմնակալությամբ են ներկայացնում Հայ առաքելական եկեղեցու, նրա ծեսերի, դավանաբանական առանձնահատկությունների, հոգևորականների վերաբերյալ տեղեկությունները:

Այս ամենով հանդերձ, ամերիկացի միսիոներների առաջին այցելությունը Հայաստան ինքնին հանդիսանում է խիստ հետաքրքրական պատմական փաստ: Վերջիններիս Հայաստանում կատարած ուսումնասիրությունները կարևոր աղբյուր են ոչ միայն հայություն շրջանում բողոքականության տարածման պատմության ուսումնասիրման, այլ նաև 19-րդ դարի առաջին տասնամյակների հայոց պատմության մի շարք հարցերի հետազոտման համար:

Հոդվածը տպագրվել է «Էջմիածին» կրոնագիտական եւ հայագիտական ամսագրում, Ս.Էջմիածին, ՁԱ տարի (2024), համար Ա, էջ 120-132, (առաջին մաս), (Doi: 10.56737/2953-7843-2024.01120:

<https://arar.sci.am/dlibra/publication/400799/edition/370900/content>

ՁԱ տարի (2024), համար Բ, էջ 93-104, (երկրորդ մաս), (Doi: 10.56737/2953-7843-2024.01-120):

<https://arar.sci.am/dlibra/publication/402773/edition/372829/content>

**ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐ ՀԱՐԻՍՈՆ ԴՈՒԱՅԹԻ
ՀԱՂՈՐԴԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹²⁶**

Բողոքականությունը արևմտահայության շրջանում հիմնականում տարածվել է ամերիկյան միսիոներների միջոցով 19-րդ դարի առաջին տասնամյակներից: Արդեն դարի վերջերին հայ բողոքականների թվաքանակը, հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում, զգալի աճում է: Առաջին բողոքական միսիոներները Մերձավոր Արևելյան տարածաշրջանում հայտնվել են դեռևս 16-րդ դարում¹²⁷: Սակայն վերջիններիս ակտիվ և մշտական գործունեության մեկնարկը ողջ աշխարհում սկիզբ է առնում 19-րդ դարի սկզբներից¹²⁸: Մերձավոր Արևելքում միսիոներական շարժումը հիմնականում համակարգվում էր «Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի» (կամ

¹²⁶ *Հեղազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

¹²⁷ Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914թ.), Երևան, 2014, էջ 56-62:

¹²⁸ Նույն տեղում, էջ 54-63, տե՛ս նաև **Charles C. Creegan**, *Pioneer Missionaries of the Church*, New York, 1903.

ուղղակի «Ամերիկյան խորհուրդ») կողմից, որը ստեղծվել էր 1810 թ. Բոստոնում¹²⁹: 1829 թ. այդ կառույցի կողմից կայացվում է հատուկ որոշում Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն հաստատելու վերաբերյալ¹³⁰: 1830 թ. ԱՄՆ-ը և Օսմանյան կայսրության միջև պաշտոնական հարաբերությունների հաստատումը զգալիորեն նպաստեց կասրության տարածքում ամերիկացի միսիոներների գործունեության ծավալմանը¹³¹:

Ամերիկացի միսիոներների առաջին շփումները հայերի հետ տեղի ունեցան դեռևս 1820-ական թթ. սկզբներին: Սակայն վերջիններս որևէ համակարգված և խորքային պատկերացումներ չունեին բուն Հայաստանում ապրող հայերի վիճակի վերաբերյալ:

Ամերիկացի միսիոներներ Էլի Սմիթի (1801-1857 թթ.) և Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի (1803-1862 թթ.) մասնակցությամբ 1830-1831 թթ. կազմակերպվում է առաջին ուղևորությունը ուղջ Հայաստանի տարածքում, որը նպատակ էր հետապնդում մոտիկից ծանոթանալ հայությանը¹³²: 1833 թ.

¹²⁹ **William E., Strong**, *The story of the American board*, The Pilgrim Press, Boston, 1910, էջ 6:

¹³⁰ **Vahan H. Tootikian**, *The genesis of Armenian Evangelism*, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԺԴ, Պեյրուֆ, 1994, էջ 174-175:

¹³¹ **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 51-52:

¹³² Այդ ուղևորության մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Ամերիկացի բողոքական քարոզիչների առաջին ճամփորդությունը եւ ուսումնասիրությունները Հայաստանում 1830-1831 թթ., «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր, Ս.Էջմիածին, ՁԱ տարի

ամերիկացի միսիոներների Հայաստանում կատարած ճամփորդության արդյունքում կատարած ուսումնասիրությունները երկու հատորով տպագրվում են ԱՄՆ-ում¹³³, իսկ մեկ տարի անց մեկ ամբողջական հատորով Լոնդոնում¹³⁴:

1831 թ. «Ամերիկյան խորհրդի» որոշմամբ Արևելքի քրիստոնեական եկեղեցիների հետևորդների շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու նպատակով սկսեցին հիմնվել միսիոներական կայաններ: Նման առաջին կայանը հիմնվեց Կոստանդնուպոլսում: Սկզբնական շրջանում ամերիկացի միսիոներները հիմնականում գործում էին Օսմանյան կասրության մայրաքաղաքում և ծովափնյա խոշոր քաղաքներում: Սակայն ժամանակի ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» խնդիր դրեց թափանցել երկրի խորքերը այնտեղ ապրող քրիստոնյա ժողովուրդներին անմիջապես ծանոթանալու և ուսումնասիրելու նպատակով:

Սկիզբ է առնում ամերիկացի բողոքական միսիոներների և Օսմանյան կայսրության հայերի առնչությունների ակտիվ

(2024), համար Ա, էջ 120-132, (առաջին մաս), ՁԱ տարի (2024), համար Բ, էջ 93-104, (երկրորդ մաս) (Doi: 10.56737/2953-7843-2024.01-120):

¹³³ *Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, in 2 vols., Boston: Crocker and Brewstar, New York: Jonathan Leavitt, 1833.

¹³⁴ **Eli Smith, Harrison Gray Otis Dwight**, *Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and Into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, 1834, London

շրջանը: Բողոքականության աճող ազդեցության պայմաններում արդեն 1846 թ. հուլիսի 1-ին Կ.Պոլսի Բերաթաղամասում 40 հայ ավետարանականների կողմից հիմնադրվում է Հայ Ավետարանական եկեղեցին¹³⁵: Չորս տարի անց՝ 1850 թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը, հատուկ ֆերմանով այն ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք՝ «միլլետ», որով սկիզբ առավ հայ ավետարանականների պաշտոնական գործունեությունը¹³⁶: Նշենք, որ Արևելյան Հայաստանում ավետարանական առաջին շարժումը սկիզբ էր առել դեռևս 1823 թ. Շուշիում Շվեցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» գործունեությամբ¹³⁷: Վերջիններիս շուրջ 15 տարվա գործունեության արդյունքում Շուշիում ձևավորվեց փոքրաթիվ հայ ավետարանական համայնք:

Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթ 1832 թ. հունիսից իր ընտանիքի հետ հաստատվում է Պոլսում¹³⁸: Վերջինս համարվում է Օսմանյան կայսրությունում հայ բողոքական առաքելության հիմնադիրներից և «հայկական առաքելության հայրը»: Վերջինս իր կյանքի 30 տարիները նվիրել է Օսմանյան

¹³⁵ **Թուֆիկեան Վ.**, Նոր յայտնութիւններ Հայաստանեայց ավետարանական եկեղեցիին հիմնադրութեան եւ հիմնադիր անդամներուն մասին, Հայկազեան հայագիտական հանդես, Հատոր ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 253-259:

¹³⁶ **Leon Arpee**, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, New York, 1946, էջ 36-37:

¹³⁷ **Ղազարյան Ա.**, Լևոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 81-88:

¹³⁸ **Dwight Harrison Gray Otis**, *Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church*, London: J. Nisbe, 1854, էջ 33:

կայսրությունում բողոքական գաղափարների տարածմանն ու բողոքական համայնքի կազմավորմանը¹³⁹:

Հարիսոն Դուայթը Հայաստան կատարած իր ուղևորությունից մոտ երկու տասնամյակ անց իր սեփական հիշողություններն ու հայերի շրջանում կատարած հետազա-
ուսումնասիրությունները ամփոփում է 1850 թվականին հրատարակված աշխատությունում, որը կրում է «**Վերածնված քրիստոնեությունը Արևելքում կամ պատմություն Աստծո գործի Թուրքիայի հայերի շրջանում**» («Christianity Revived in the East, Or, A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey») խորագրը և հրատարակվում է Նյու-Յորքում¹⁴⁰: Աշխատանքը ժամանակագրական առումով ընդգրկում է 1830-ական թթ. սկզբներից մինչև 1848-1849 թթ.: Հարիսոն Դուայթի գրքի երկրորդ հարատարակությունը՝ «**Քրիստոնեությունը Թուրքիայում. Հայոց եկեղեցու բողոքական բարեփոխումների պատմություն**» («Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church»)¹⁴¹ խորագրով, հրատարակվում է 1854 թ. Լոնդոնում: Այս աշխատանքը նախորդի խմբագրված տարբերակն էր, որտեղ ներկայացված շատ տեղեկություններ կրկնվում են, սակայն կան նաև նոր ավելացումներ, փաստեր, իսկ

¹³⁹ **Leon Arpee**, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, 1946, էջ 49-50:

¹⁴⁰ **Dwight Harrison Gray Otis**, *Christianity Revived in the East, Or, A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey*, Baker and Scribner, New York, 1850.

¹⁴¹ **Dwight H. G. O.**, *Christianity in Turkey...*, 1854.

իրադաճությունների նկարագրությունը հասցվում է մինչև 1854 թվական:

Սույն հոդվածում հիմնականում անդրադառնում ենք Դուայթի հեղինակած առաջին՝ 1850 թ. հրատարակված գրքին, առանձին դեպքերում ներկայացնելով տեղեկություններ նաև գրքի երկրորդ հրատարակությունից:

Դուայթի աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում, ոչ միայն Հայաստանում բողոքական հարանվանության տարածման պատմության, այլ նաև 19-րդ դարի առաջին կեսի Հայոց պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման տեսանկյունից:

Այս աշխատանքը մանրամասնորեն ցույց է տալի ամերիկացի բողոքականների ջանքերն ու իրականացրած քայլերը, որի արդյունքում բողոքականությունը 19-րդ դարի 30-ական թթ. աստիճանաբար տարածվեց հայ իրականության մեջ՝ ունենալով որոշակի թվով հետևորդներ:

Դուայթի հեղինակած այս աշխատությունը հատկապես հետաքրքրական տեղեկություններ է պարունակում արևմտահայության հասրակական, կրթական, հոգևոր-կրոնական, մշակութային կյանքի, կենցաղի վերաբերյալ: Բնականաբար փաստերն ու իրադարձությունները ներկայացված են բողոքական միսոներներին հատուկ, այսպես ասած, քննադատական տեսանկյունից: Հասկանալի պատճառներով այդ «քննադատության» հիմնական թիրախում հաճախ հայտնվում է հայոց եկեղեցին, մասնավորապես Պոլսո հայոց

պատրիարքությունը, որի հետ էլ եղել է ամերիկացի միսիոներների հիմնական շփումները:

Դուայթի աշխատանքը իր բնույթով նման է հուշագրությունների ժանրին, քանզի վերջինս հանդիսանում է իր նկարագրած իրադարձությունների կամ անմիջական մասնակիցն ու ականատեսը կամ էլ ներկայացված տեղեկատվության առաջնային կրողը:

Դուայթը մանրամասնոր անդրադառնում է ամերիկացի միսիոներների Օսմանյան կայսրության տարածքում հաստավելու գործընթացին: Վերջինս փաստում է, որ «Ամերիկայն խորհուրդը» դեռևս 1829 թ. որոշում էր Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն բացելու վերաբերյալ¹⁴²:

Հեղինակն անդրադառնում է միսիոներների ծավալած առաջին գործողություններին՝ ներկայացնելով Արևմտյան Հայաստան ժամանած բոլոր միսիոներներին: Առաջիններից մեկը 1831 թ. Կ.Պոլսում հաստատվում է վերապատվելի Ռ. Գուդելը, որը սկզբնական շրջանում գործել է Բեյրութում ու Մալթայում, իսկ այնուհետև սկսում է համակարգել ամերիկացի միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրության տարածքում¹⁴³: Այնուհետև աստիճանաբար ժամանող միսիոներների թիվը սկսում է ավելանալ:

Դուայթի ներկայացրած փաստերը վկայում են, որ միսիոներներն իրենց գաղափարների տարածման հիմնական

¹⁴² **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 19:

¹⁴³ Նույն տեղում, էջ 20:

միջոց ընտրել էին քարոզչությունն ու կրթությունը: Այդ նպատակով վերջիններս հսկայական կարևորություն էին հատկացնում Աստվածաշնչի և այլ կրոնական գրականության հրատարակությանը: Հայտնի է նաև, որ վերջիններիս ջանքերով է առաջին անգամ աշխարհաբար թարգմանվում Աստվածաշունչը, որը սկսվում է լայնորեն տարածվել հայության շրջանում¹⁴⁴:

Կարևորելով հրատարակչական գործունեությունը 1833 թ. Մալթայից Զմյուռնյա են տեղափոխվում վերապատվելի Դ. Թեմփլը (D. Temple), բողոքական հրատարակիչ Հոման Հալոկը (Homan Hallock) և հայազգի եպիսկոպոս Դիոնիսիոսը որպես թարգմանիչ, որը ի հակառակ հայոց եկեղեցու օրենքների, ամուսնացել էր և անցել բողոքականների շարքը: Միսոներների կողմից Զմյուռնիայում տպարան հիմնադրելու հանգամանքը վրդովեցնում է թե՛ կաթոլիկներին և թե՛ հայոց եկեղեցու ներկայացուցիչներին: Ընդլայնելու համար ժամանակակից հայերենով և, ինչպես Դուաթն է ասում, «թուրքահայերենով» Աստվածաշնչի և քարոզչական նյութերի հրատարակումը՝ միսոներների մջոցներով Նյու-Յորքում հայերեն տառատեսականներ են պատրաստվում և տեղափոխվում Զմյուռնիա¹⁴⁵: 1838 թ. հունվարի դրությամբ արդեն Զմյուռնիայի տպարանում տպագրվել էր մոտ 2,5 միլիոն էջ հայերեն նյութ,

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 20:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 38-39:

իսկ 1840 թ. 6 մլն էջ¹⁴⁶: Միսիոներները աշխարհաբար հայերեն են թարգմանում նաև Հնգամատյանը, սաղմոսները և այլն¹⁴⁷:

Վերապավելի Գուդելի ջանքերով 1841 թ. ավարտին է հասցվում Հին կտակարանի հայատառ թուրքերեն թարգմանությունը, որը 1842 թ. տպագրվում է Զմյուռնիայի տպարանում: Դրան հաջորդում է նույն Գուդելի կողմից Նոր կտակարանի վերանայումն ու հրատարակումը, ինչպես նաև Նոր կտակարանի հրատարակումը ժամանակակից հայերենով¹⁴⁸:

Իրենց հրատարակչական գործունեության առաջին երկու տասնամյակների ընթացքում՝ 1835 թ. սկսած, բողոքականների կողմից հայերեն թարգմանվում և հրատարակվում են 81 գրքեր և քարոզչական ձեռնարկներ¹⁴⁹:

Միսիոներների հրատարակած կրոնական գրականությունը ոչ միայն բաժանվում էր, այլ նաև վաճառվում: Դրա մի մասն էլ ուղարկվում էր նաև կայսրության խորքերը, ինչպես նաև Պարսկաստան, Ռուսաստան և Կովկաս¹⁵⁰:

Դուայթը նշում է, որ հայերի շրջանում իրենց քարոզչական գործունեությունը հիմնականում որոշում են իրականացնել կրթության միջոցով: Ինչպես նշվեց ամերիկացի բողոքականները Մալթայում գտնվող իրենց տպարանում Աստվածաշունչը թարգմանաել էին հայերի «խոսակցական»

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 60, 110:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 101-102:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 124-125:

¹⁴⁹ **Dwight H. G. O.**, *Christianity in Turkey*, էջ 356-358:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 123:

լեզվով¹⁵¹, որպեսզի այն ավելի հասանելի դառնա մարդկանց, բացի այդ Ջմյունիայի տպարանը սկսել էր ակտիվ հրատարակչական գործունեություն: Սակայն քանի որ կարդալ շատերը չգիտեին, ուստի միսիոներները որոշում էին զարկ տալ դպրոցների հիմնադրմանը արևմտահայության շրջանում, որոնք էլ պետք է հանդիսանային բողոքական քարոզչության հիմնական կենտրոնները:

1834 թ. հոկտեմբերին ամերիկացի միսիոներների ջանքերով Կ. Պոլսի Բերա թաղամասում բացվում է դպրոց, որի գլխավոր նպատակը հայոց եկեղեցին, ասպես ասած, «բարեփոխելու» համար կադրեր պատրաստելն էր, դպրոցի աշակերտների թիվը կարճ ժամանակում 3-ից հասնում է 30-ի, հետո 40-ի¹⁵²: Դույաթի իսկ խոստովանությամբ իրենց հիմնադրած դպրոցը ոչ այնքան կրթական հաստատություն էր, որքան որ երկրում բողոքականության «լայն և խորը» տարածման կենտրոն¹⁵³: Հետագա տասնամյակներում, հատկապես 1850 թ. հետո, բողոքական կրթական հաստատությունների թիվը ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում զգալիորեն ավելանում է¹⁵⁴:

Դույաթի սուբյեկտիվ կարծիքով Պոլսի հայկական համայնքում հայոց եկեղեցու կողմից դպրոցներ բացելը, հատկապես խոսքը Սկյութարի հայկական դպրոցի մասին է,

¹⁵¹ **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 22:

¹⁵² Նույն տեղում, էջ 30, 34, 54:

¹⁵³ Նույն տեղում, էջ 170:

¹⁵⁴ **Ատալանյան Կ.**, Հուշարձան Հայ Ավետարանականաց և Ավետարանական եկեղեցվո, Ֆրեզնո, 1952, էջ 472-474:

կատարվում էր ի հակադրություն միսիոներների կրթական գործունեության, որը կարծում ենք չի համապատասխանում իրականությանը¹⁵⁵:

Միսիոներները ուշադրություն են դարձնում նաև կանանց շրջանում քարոզչությանը կրթության միջոցով: 1836 թ. վերջիններս կողմից Ջոյունիայում բացվում է դպրոց աղջիկների համար: Կ. Պոլսում ևս մի փոքր խումբ աղջիկների համար կազմակերպվում են ընթերցանության դասընթացներ¹⁵⁶, իսկ 1845 թ. Բերա թաղամասում բացվում է փոքր դպրոց աղջիկների համար¹⁵⁷: Սակայն այս դպրոցները մեծ չէին, հաճախ աշակերտների թիվը չէր գերազանցում մեկ տասնյակը: Բողոքականները դժգոհում են, որ Արևելքի սովորույթների սահամանափակումների պատճառով իրենք հնարավորություն չունեին ազատ քարոզչություն իրականացնելու կանանց շրջանում, սակայն անընդհատ փորձում են ստեղծել նման հնարավորություններ: Օրինակ հատուկ կանանց համար առանձնացվում են քարոզչության ժամեր¹⁵⁸: Բացի այդ կային նաև կին միսիոներներ: Արդեն 1840-ական թթ. Դուայթի վկայությամբ իրենց քարոզներին այցելող կանանց թիվը զգալիորեն աճում է:

Վերջինս փաստում է նաև, որ Պոլսում և շրջակայքում աստիճանաբար ավելանում է այն հայերի թիվը, ովքեր իրենց

¹⁵⁵ **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 52-53:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 47:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 144:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 123:

բացահայտ համարում էին բողոքական: Դուայթը գրքում մանրամասն ներկայացնում է իրենց քարոզչության առաջին քայլեն ու այն առաջին հայերին, ովքեր միանում են իրենց¹⁵⁹: 1833 թ. դրությամբ անձամբ Դուայթի մոտ ամենշաբաթյա քարոզների էին գալիս մոտ 8 հայեր և մի քանի հույներ¹⁶⁰: Սրանք միոսոներների քարոզչության առաջին արդյունքներն էին: Բողոքականները աստիճանաբար յուրացնելով տեղական լեզուները՝ քարոզչությունը կատարում էին տեղացիների համար հարազատ լեզուներով:

Հսկայական ջանքերի և միջոցների ներդրման արդյունքում հայտնի է, որ բողոքականությունը հայության շրջանում սկսում է աստիճանաբար որոշակի աճ գրանցել: Միսիոներների գործունեության թիրախում էին նաև կայսրության այլ քրիստոնյա ժողովուրդները: Հետաքրքիր է, որ վերջիններս իրենց քարոզչական ջանքերն աստիճանաբար կենտրոնացնում են հայերի ուղղությամբ և ոչ թե հույների, ասորիների կամ հրեաների¹⁶¹: Պատահական չէ, որ 1854 թ. դրությամբ «Ամերիկյան խորհրդի» շուրջ 110 միսիոներներից միայն 45-ը գործում էին հայկական առաքելությունում, որոնցից 21-ը տղամարդ էին, 24-ը կին: Նրանց հետ գործում էին նաև 8 տեղացի, այսինքն հայ բողոքական քարոզիչներ¹⁶²:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 23-33:

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 29:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 141:

¹⁶² **Dwight H. G. O.**, *Christianity in Turkey*. . . , էջ 360:

Հայտնի է, որ ամերիկացի միսիոներները Արևելքում իրենց առաքելության սկզբնական շրջանում, իրենց հիմնական թիրախ համարում էին մահմեդականներին: Սակայն հետագայում վերջիններս հրաժարվեցին այդ գաղափարից, նախ և առաջ այն պատճառով, որ Օսմանյան կայսրության օրենքներով կրոնափոխ մահմեդականները ենթակա էին մահվան: Դուայթը նկարագրում է Թուրքիայում մահմեդականություն ընդունել ցանկացած, այնուհետև հրաժարված մի հայի փողոցում գլխատման դեպքը, որպես պատիժ մահմեդականությունից հրաժարման: Դուայթի վկայությամբ այդ դեպքը առաջացնում է եվրոպական դեսպանների վրդովմունքը: Այդ դեպքից հետո, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների ջանքերով հնարավոր է դառնում սուլթանից ստանալ երաշխավորագիր, որ այլևս նման դեպքերում մահապատժի որոշումներ չեն կայացվի¹⁶³: Սակայն մահմեդականների կրոնափոխության դեպքում անձին մահապատժի ենթակելու օրենքը Օսմանյան կայսրությունում դեռ երկար մնաց գործողությամ մեջ:

Ամերիկացի միսիոներները իրենց գործունեության ընթացքում կարողանում են իրենց շարքերը ներառել նաև որոշ հոգևորականների, անգամ բարձրաստիճան, ովքեր բավականին հանդուրժող են եղել բողոքականների նկատմամբ¹⁶⁴:

¹⁶³ **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 136-139:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 27-28, 34, 147-153

Միսիոներների գործունեության ակտիվ մեկնարկին խանգարում է 1832 թ. Թուրքիայում բռնկված խոլերան ու ժանտախտը և միայն հաջորդ 1833 թվականին են միսոններները սկսելում որոշակի ակտիվություն ցուցաբերել¹⁶⁵:

Աստիճանաբար միսիոներական կայաններ են հաստատվում նաև Կ.Պոլսիս դուրս: 1834 թ. կայաններ են հինադրվում Տրապիզոնում և Բուրսայում, որտեղ որպես կանոն փորձում են հիմնել նաև դպրոցներ: Դուայթի վկայությամբ Տրապիզոնի 15 հազար բնակիչներից հայեր էին 1250-ը, իսկ Բուրսայի 8-9 հազար բնակչությունից՝ 5-6 հազար¹⁶⁶: Տրապիզոնից միսիոներները 1839 թ., արդեն անցան են Էրզրում և հաստատվում այնտեղ¹⁶⁷: Գրքի տարբեր հատվածներում Դուայթը Պոլսից բացի անդրադառնում է նաև Բուրսայում, Տրապիզոնում, Էրզրումում, Նիկոմեդիայում և այլուր հիմնադրված միսիոներական կայանների գործունեությանը, դրանց արձանագրած հաջողություններին: Վերջինս հատկապես մեծ ոգևորությամբ է խոսում Այնթապում իրենց արձանագրած հաջողությունների մասին¹⁶⁸:

Գնալով ավելանում է նաև Ամերիկայից ժամանած միսոններների թիվը, նրանցից շատերը ժամանում են ընտանիքներով և հաստատվում Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում, որտեղ կար հայ բնակչություն:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 22-23:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 31-32:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 85:

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 250-252:

Միսիոներները հաճախ տարբեր շրջայցեր էին կազմակերպում երկրի խորքերը տեղում վիճակին ծանոթանալու և իրենց գաղափարների տարածման հնարավորությունը պարզելու նպատակով: Այդ այցերի ընթացքում վերջիններս հաճախ ունենում էին հայ ուղեկցորդներ: Հետաքրքիր է, որ նման այցեր կազմակերպվում էին նաև Օսմանյան կայսրության եվրոպական տարածքներում¹⁶⁹:

Դուայթն իր գրքում մեծ տեղ է հատկացնում նաև Պոլսո հայոց պատրիարքության հետ ունեցած հարաբերություններին:

Սկզբնական շրջանում հայոց եկեղեցու և միսոներների հարաբերությունները լարված չէին կամ առնվազն երկու կողմերը արտաքնապես այդպես էին ցույց տալիս: Սակայն հետագայում միսոներների գործունեության ընդլայնմանը զուգահեռ հարաբերությունները սկսեցին սրվել: Սակայն աստիճանաբար պատրիարքարանը սկսել է ուղղակի պայքարել միսիոներների դեմ: Միսիոներները հակազդեցության էին ենթարկվում ոչ միայն հայոց եկեղեցու, այլ նաև հույն ուղղափառ եկեղեցու, ինչպես նաև կաթոլիկների կողմից: Հայ կաթոլիկ եկեղեցին ևս հակազդում էր միսիոներների գործունեությանը՝ արգելելով իր հետևորդներին ձեռք բերել վերջիններիս հրատարակած Աստվածաշնչի օրինակները: Դուայթն աշխատության մեջ մանրամասն անդրադառնում է միսոներների և հայոց պատրիարքության հետ

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 159, 165-166, 179-182:

հարաբերություններին և վերջինիս դիմադրությանը արևմտահայության շրջանում բողոքականության տարածմանը¹⁷⁰:

Պոլսում բողոքական առաքելության հիմնադրման սկսգբում հայոց պատրիարքը Կարապետ Գ Պալթացին էր (1823-1831 թթ.), որին շուտով հաջորդում է Ստեփանոս Բ Զաքարյանը (1831-1839 թթ., 1840-1841թթ.): Դուայթը նշում է, որ Ստեփանոս պատրիարքը մեղմ ու խաղաղ բնավորության տեր էր և հակված չէր խիստ վերաբերմունքի միսիոներների նկատմամբ: Սակայն պատրիարքի տեղակալ Պողոս սրբազանը ավելի հետևողական էր և փորձում էր վերահսկել միսիոներների գործունեությունը¹⁷¹: Ստեփանոս պատրիարքի բողոքականների նկատմամբ ունեցած հանդուրժող վերաբերմունքի արդյունքում անգամ վերջինս որոշ շրջանակների կողմից մեղադրվում է բողոքական լինելու մեջ¹⁷²:

1838 թ. վերջերին Ստեփանոս պատրիարքի տեղապահ է դառնում Հակոբոս Սերոբյանը, որը կարճ ժամանակով՝ 1839-1840 թթ., ստանձնում է նաև պատրիարքական աթոռը: Վերջինս պատրիարքական աթոռը զբաղեցնում է նաև երկրորդ անգամ՝ 1848-1858 թթ.: Հակոբոսի տեղապահության և պատրիարքության շրջանում հայոց պատրիարքարանի պայքարը բողոքականների դեմ ավելի ընդգծված է դառնում¹⁷³:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 20, 43, 70-74 և այլն:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 34-35:

¹⁷² Նույն տեղում, էջ 109:

¹⁷³ Նույն տեղում, էջ 73-74:

1841 թ. նոր պատրիարք է դառնում Աստվածատուր Բ Կոնստանդնուպոլսեցին, որը պաշտոնավարում է մինչև 1844 թ. : Հաջորդ պատրիարքի՝ Մաթևոս Բ Չուխաճյանի (1844-1848 թթ.) գահակալության շրջանում ավելի լայն պայքար է սկսվում միսիոներների գործունեության դեմ, ուստի պատահական չէ, որ Դուայթը ոչ ավել ոչ պակաս վերջինիս անվանում է «Թուրքիայի բողոքականներին հալածող»¹⁷⁴:

Բողոքականների գործունեությունը օսմանյան իշխանությունների կողմից ևս ընկալվել է որպես օտար ազդեցության տարածում և վերջիններս այս հարցում աջակցել են տեղի ավանդական քրիստոնեական դավանական ուղղությունների պայքարին բողոքականության դեմ: Դուայթը աշխատության մեջ բերում է ամերիկացի միսիոներներին հակազդեցության և նրանց դեմ պայքարի բազում օրինակներ պատրիարքության կողմից:

Սակայն այս ամենը չէր խանգարում, որ ամերիկացի միսիոներները աստիճանաբար թափանցեն Օսմանյան կայսրության խորքերը՝ իրենց խոսքերով «թշնամի երկրի» սիրտը, հատկապես դեպի հայաշատ բնակավայրերը:

Հետաքրքիր է, որ Դուայթի վկայությամբ ամերիկացի բողոքականներին տեղացիները հաճախ անվանում էին մասոններ, լյութերականներ, վոլտեր, բողոքականներ, ինչպես նաև երբեմն ուղղակի անհավատներ¹⁷⁵: Հայոց եկեղեցու կողմից

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 38:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 94:

բողոքականները համարվում էին «ժամանակակից աղանդավորներ»¹⁷⁶:

Դուայթը հաճախ է անդրադառնում նաև Պոլսի հայկական համայնքին, հարուստ ամիրայական դասին, բանկիրներին և նրանց ունեցած հսկայական ազդեցությանը ոչ միայն հայության ներսում, այլ նաև իշխանությունների շրջանում¹⁷⁷: Ներկայացնում է Պոլսի հայոց պատրարքությանը դերը հայոց կյանքում¹⁷⁸: Անդրադառնում է նաև Թուրքիայում գործող միլլեթային համակարգին, համայնքի անդամների կարգավիճակին¹⁷⁹: Որպես ականատես վերջինս անդրադառնում է նաև 1840-ական թթ. սկզբներին Պոլսի հայկական համայնքում սկիզբ առած հակամարտություններին առևտրական ու արհեստավորական դասի մի կողմից և մյուս կողմից համայնքում ազդեցիկ դիրք ունեցող ամիրաների միջև¹⁸⁰: Հայտնի է, որ այս հակամարտության արդյունքում է, որ Ստեփանոս պատրիարքը հեռացվում է պաշտոնից, որին փոխարինում է Աստվածատուր Բ Կոնստանդնուպոլսեցին (1841-1844 թթ.)¹⁸¹:

Դուայթը վկայում է, որ օսմանյան սուլթան Աբդուլ Մեջիդը (1839–1861 թթ.) 1839 թ. նոյեմբերի 3-ին հռչակած

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 187, 189, 268:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 51-52:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 68-71:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 184-186:

¹⁸⁰ Նույն տեղում, էջ 113-114:

¹⁸¹ **Սիրունի Յ.**, Պոլիս եւ իր դերը (1800-1900): Երկրորդ հատոր, Պեյրուֆ, 1969, էջ 306-324:

Նվիրական գրով (Հաթթը շերիֆ, Սրբազան գիր), որով կայսրությունում սկիզբ դրվեց Բարենորոգումների՝ Թանզիմաթի, դարաշրջանին, ներմուծված որոշակի կրոնական ազատություններից ամենից շատ ուրախացել և օգտվել են բողոքական միսիոներները¹⁸²:

Արդեն նշվեց, որ 1844 թ. Պոլսո հայոց Աստվածատուր պատրիարքին փոխարինում է Մաթևոս պատրիարքը: Դուայթը նկարագրում է, որ վերջինիս պատրիարքության սկզբնական շրջանում բողոքականների հետ հարբերությունները այնքան էլ լարված չեն եղել¹⁸³, սակայն դրանք հետագայում սրվում են: 1846 թ. հունվարի 26-ին կիրակնօրյա պատարագից հետո Մաթևոս պատրիարքի կողմից հրապարակվում է դրանից մի քանի օր առաջ ստորագրված բանադրանքի տեքստը, որն ուղղված էր բողոքականների ազդեցության տակ ընկած Վրթանես անունով մի քահանայի դեմ: Բանադրանքի տեքստում հայոց եկեղեցուց հեռացած հոգևորականը համարվում է հերետիկոս, սատանա, հավատացյալներին կոչ էր արվում այսուհետ անգամ չնայել նրա դեմքին, չբարևել, տեղ չտալ սեփական տներում, քանի որ վերջինս հետևում է, այսպես ասած, «նոր աղանդավորների» կեղծ ուսմունքին: Այն, ըստ էության, զգուշացում էր ուղղված հայոց եկեղեցու հետևորդներին հեռու մնալու բողոքականությունից¹⁸⁴: Սրան

¹⁸² **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 89:

¹⁸³ Նույն տեղում, էջ 146-147:

¹⁸⁴ Նույն տեղում էջ 187-188: Պատրիարքական բանադրանքի ամբողջական տեքստը տե՛ս նույն գրքի 267-270 էջերում:

շուտով հաջորդում է պատրիարքի երկրորդ բանադրանքը, որում հստակ ընդգծվում էր, որ նախորդ բանադրանքը չի վերաբերում միայն Վրթանեսին, այլ բոլոր նրանց, ովքեր հետևում են բողոքականությանը կամ ընկել են վերջիններիս ազդեցության տակ¹⁸⁵: Բանադրանքով արգելվում էր բողոքականների հետ անգամ շփում ունենալ, վերջիններիս անգամ հաց կամ կեցության վայր տրամադրել, նրանց հետ առևտուր կամ որևէ գործարք իրականացնել: Բողոքականներն համարվում են հայոց եկեղեցու կործանողներ և ողջ ազգի խայտառակություն: Պատրիարքական բանադրանքի տեքստերն ուղարկվում են նաև այլ հայաշատ բնակավայրեր ու թեմեր¹⁸⁶:

Առաջին հայացքից չափազանց խիստ այս պահանջները պայմանավորված էին բողոքականության հետ մեծացող մրցակցությամբ, այն պարագայում երբ վերջիններս իրենց ազդեցության տարածման համար չէին խնայում իրենց նյութական միջոցները՝ միաժամանակ ստանալով մի շարք մեծ տերությունների անսքող աջակցությունը:

Դուայթը անդրադառնում է պատրիարքական բանադրանքից հետո իրեն հայտնի հալածանքների գրեթե բոլոր դեպքերին՝ փորձելով ցույց տալ հայոց պատրիարքության, այսպես ասած, դաժան վերբերմունքը¹⁸⁷:

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 190-191: Պատրիարքական բանադրանքի ամբողջական տեքստը տե՛ս նույն գրքի 270-271 էջերում:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 193:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 180-225:

Ծանոթանալով նկարագրված դեպքերին հասկանալի է դառնում, որ դրանք փոքր ինչ չափազանցված էին և ներկայացված խտացված գույներով: Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ բողոքականները վայելու էին ԱՄՆ-ի, Անգլիայի և մի շարք այլ երկրների դիվանագիտական ներկայացուցիչների հովանավորությունն ու աջակցությունը, ուստի այդ հալածանքները չէին կարող խիստ տարածում ունենալ: Պետք է նշել, որ հալածանքներն էլ հիմնականում ուղղված էին ոչ թե ամերիկացիների, այլ այն հայերի դեմ, ովքեր հեռացել էին սեփական եկեղեցուց և հաերլ էին բողոքականությանը:

Բողոքականության հետևորդ շատ հայեր պատրիարքի բանադրանքի հրապարակումից հետո նամակով դիմեցին վերջինիս՝ խնդրելով չեղարկել այն, այնուհետև նրանք դիմեցին անգամ կայսրության արտաքին գործերի նախարար Ռեշիդ փաշային, ինչպես նաև անգլիական, պրուսական և ամերիկյան դեսպաններին՝ խնդրելով պաշտպանել իրենց իրավունքները¹⁸⁸: Սակայն եղան այնպիսիները, ովքեր դիմեցին պատրիարքին՝ հրաժարվելով բողոքականությունից և որպես մեղսագործներ հայցեց վերջինիս ներողամտությունն ու բարեհաճությունը հայոց եկեղեցու գիրկը վերադառնալու համար¹⁸⁹:

Պատրիարքի կողմից 1846 թ. փետրվարի 4-ին պատրաստվում է 9 կետից բաղկացած առաքելական դավանանքի հիմնադրույթների վրա հիմնված մի փաստաթուղթ, որը պարտադրվում էր ընդունել

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 203-204:

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 272-274:

բողոքականությանը հետևաված հայերին կամ, այսպես ասած, դարձի եկածներին¹⁹⁰:

Պետք է նշել, որ բողոքականները վայելում էին ոչ միայն մի շարք մեծ տերությունների աջակցությունը, այլ նաև նրանց շնորհիվ նաև աջակցություն էին ստանում նաև «թանգիմաթի» ուղին բռնած թուրքական իշխանություններից: Օրինակ, երբ պատրիարքի կողմից միջնորդություն է ներկայացվում մայարքաղաքից վտարելու 13 հայ բողոքականների, Անգլիայի դեսպան Սթրաֆֆորդ Քաննինգի և եվրոպացի մի շարք այլ դեսպանների ջանքերով դա կանխվում է¹⁹¹:

Ռեշիդ փաշան, Մեծ Մեզիր դառնալուց հետո, արգելում է բողոքականության հետևորդ դարձած հայ առևտրականների նկատմամբ հալածանքները: Անշուշտ այս ամենը ամերիկայն և եվրոպական դիվանագետների ճնշումների արդյունքն էր: Դուայթը սա համարում է Թուրքիայում բողոքականության ազատության հարցի սկիզբը¹⁹²: Վերջինս բողոքականներին պաշտպանող թուրքական կառավարության կողմից հրապարակված առաջին փաստաթուղթը համարում է 1846 թ. հունիսին Ռեշիդ փաշայի նամակը Էրզրումի փաշային տեղի բողոքականների քաղաքացիական իրավունքները չխախտելու վերաբերյալ, քանզի վերջիններս, ըստ այդ գրության, ևս հանդիսանում են սուլթանի հավատարիմ հպատակները¹⁹³:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 274-276:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 205:

¹⁹² Նույն տեղում, էջ 225:

¹⁹³ Նույն տեղում, էջ 226:

Հայտնի է նաև, որ 1846 թ. հունիսի 26-ի հրովարտակով Օսմանյան կայսրությունում թույլատրվում է Հայ Ավետարանական եկեղեցու ստեղծումը: Նույն թվականի հուլիսի 1-ին Պոլսի 40 հայ բողոքականներ, որոնց թվում երեք կին, հավաքվում և ստեղծում են Հայ Ավետարանական եկեղեցի: Դուայթը ևս անդրադառնում է այդ իրադարձություններին: Հավաքին ներկա են լինում ամերիկացի և շոտլանդացի բողոքականներ: Հայ ավետարանական եկեղեցու առաջին հովիվ է ընտրվում Աբիսողում Խաչատուրյանը (Ութունյանը)¹⁹⁴: Շուտով հայերեն լեզվով ընդունվում է Պոլիս հայկական ավետարանական եկեղեցու հիմնադրման վերաբերյալ հայտարարություն, ինչպես նաև դավանանքն ու ուխտը, որոնք էլ հանդիսանում են այդ եկեղեցու հիմնադրման գլխավոր փաստաթղթերը, ուր սահմանվում է եկեղեցու կառուցվածքային և դավանական առանձնահատկությունները¹⁹⁵:

Աբիսողում Խաչատուրյանը երկար չի պաշտոնավարում: 1847 թ, մարտին վերջինս մահանում է և նրան փոխարինում է Սիմոն Խաչատուրյանը¹⁹⁶:

Պոլսու Հայ ավետարանական եկեղեցու հիմնադրումից հետո 1846 թ. ամառվա ընթացքում հայ ավետարանական եկեղեցիներ են հիմնադրվում նաև Նիկոմեդիայում, Ադաբազարում և Տրապիզոնում: Դուայթը, սակայն,

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 228-233:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 277-285:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 249:

խոստովանում է, որ անգամ բողոքական եկեղեցու հիմնադրումից հետո դրա հետևորդների թիվը քիչ էր¹⁹⁷: Սակայն, այնուամենայնիվ, բողոքականությունը սկսում է տարածում գտնել Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի զանազան բնակավայրերում¹⁹⁸:

1846 թ. հետո բողոքականները գործունեության ազատություն էին ստացել: Դուայթը նկարագրում պաշտոնապես Հայ ավետարանական եկեղեցու հիմնադրումից հետո տեղի ունեցած բողոքականներից մեկի թաղման, ինչպես նաև մեկ ուրիշի հարսանիքների արարողությունները, որոնք արդեն տեղի էին ունենում անխոչնդոտ պայմաններում¹⁹⁹:

Արդեն մեկ տարի անց՝ 1847 թ. նոյեմբերի 15-ին, Անգլիայի դեսպան Սթրաթֆորդ Քաննինգի ջանքերով կայսրության բնիկ հայ բողոքականները ճանաչվում են առանձին և անկախ համայնք: Փաստաթուղթը ստորագրվում է Մեծ վեզիր Ռեշիդ փաշայի կողմից, որն էլ Դուայթը թարգմանաբար ներկայացնում է իր գրքում²⁰⁰: Այդ փաստաթղթով բողոքականներին ազատ դավանանքի իրավունք էր տրվում, արգելվում էր հալածանքներ վերջիններիս նկատմամբ: Փաստաթուղթն ուղարկվում է բոլոր նահանգապետերին: Սակայն հայտնի է, որ հայ բողոքական միլիթի վերջնական ճանաչման գործընթացը ավարտվում է

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 232:

¹⁹⁸ **Թութիկյան Վ.**, Հայ ավետարանական եկեղեցին. 1846-1996, Դետրոյթ, 1996, էջ 150-155: **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 256:

¹⁹⁹ **Dwight H.G.O.**, *Christianity Revived in the East...*, էջ 243:

²⁰⁰ Նույն տեղում, էջ 253, 285-286:

1850թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը հատուկ ֆերմանի հրապարակումով²⁰¹:

Այսպիսով, Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի «Արևելքում վերածնված քրիստոնեությունը կամ պատմություն Աստծո գործի Թուրքիայի հայերի շրջանում» խորագրով գիրքը հանդիսանում է կարևոր աղբյուր արևմտահայ իրականության մեջ բողոքականության տարածման պատմության ամբողջական ուսումնասիրման համար: Վերջինս որպես ականատես և իրադարձությունների անմիջական մասնակից հայտնում է հետաքրքրական տեղեկություններ՝ իր հեղինակած աշխատությանը տալով նաև աղբյուրագիտական արժեք: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ սույն աշխատության մեջ իրադարձություններն ու երևույթները երբեմն ներկայացված են սուբյեկտիվ, սեփական ընկալումների պրիզմայով: Այս ամենում անշուշտ կարևոր նշանակություն է ունեցել հեղինակի դավանական պատկանելությունը և գործող քարոզիչ լինելը: Ուստի հեղինակը սեփական կրոնական, դավանական և աշխարհաքաղաքական ընկալումների տեսանկյունից է շարադրում իր մտքերը և տալիս իր գնահատականները:

Հոդվածը տպագրվել է «Հայագիտական հանդեսում», Երևան, 2024, թիվ 2 (65), էջ 185-205:

²⁰¹ **Leon Arpee**, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, 1946, New York, էջ 40:

**EPISODES FROM THE HISTORY OF THE ACTIVITIES OF
PROTESTANT PREACHERS IN WESTERN ARMENIA
(End of the 19th century – beginning of the 20th century)²⁰²**

Abstract

Beginning with the 14th century, Catholic and Protestant preachers appeared in Ottoman Turkey. However, unlike the representatives of other nations, the propaganda of the new doctrine was accepted mainly by the Armenians, which was conditioned by the awful socio-political, economic and spiritual situation of Armenia.

Protestant preachers used the plight of Christians, particularly Armenians, for the realization of their religious-political goals and interests²⁰³. They were the ones who for the first time encouraged the idea among Armenians that Europe and the Pope could support the liberation of Armenia, but only on the condition of accepting Catholicism or Protestantism. It was under their direct

²⁰² *The research was carried out with the financial support provided by the RA Science Committee within the framework of the scientific topic under the code 21T-6A224.*

²⁰³ NAA, fund 1120, inv. 1, file 93, sheet 18.

influence that the Armenian Catholicos traveled to a number of European countries in the 16th-17th centuries.

From the beginning, the Protestant preachers were of the opinion that the Armenian Church operated applying an “idolatrous” system²⁰⁴. However, after long contacts with the people in the Western Armenian reality, their mentality gradually changed and they became closer to the Armenian Apostolic Church.

Starting from the 50s of the 19th century, the Armenian Protestants were recognized as a separate community by the Ottoman state and a separate diocese was established for them. After the Protestant preachers settled in Constantinople, they started to open branches in the provinces as well²⁰⁵. One such branch was also established in Van.

Introduction

In 1872 two Protestant preachers, Physician-Pastor Reynolds and Burnham, founded the American “Port” Company in Van²⁰⁶. Since then, many Protestant figures have been sent to Van by this company. However, none of them could do the work until the end. Some of them left Van prematurely due to personal reasons and others out of desperation. The only exception was Dr. Reynolds and his wife, who settled in Van since 1872 and engaged in the preaching of Protestantism for about 44 years.

The beginning of educational and preaching activities

²⁰⁴ Gazanjian 1950: 293.

²⁰⁵ For more details, read Gevorgyan 2015.

²⁰⁶ Yeramyán 1929: 91-92.

As in other regions, in Van as well, the Protestant preaching began in the field of education. At that time, Van's national-educational work was in a poor state. Within a short period of time, the Protestant preachers started the task of opening female and male schools in Aygestan and the City. At first, the residents of Van were indifferent to their activities. But gradually the preachers, in an attractive way, begin to win the interest and trust of a part of the people.

There were many cases when Protestant preachers contributed to the success of the Armenian school work. Thus, when Van's Yeramyran College was in a difficult financial situation, the English Protestant preacher Grace Kemble wrote a letter in 1895 to the English society and asked to organize a fundraiser for the Yeramyran College²⁰⁷.

Along with the educational work, they also gave a boost to the evangelical-preaching and medical fields. Proficient in Armenian, Reynolds held the position of inspector of the Van school on the one hand, and on the other hand, performed the role of Protestant preacher in the Sunday meetings. At the same time, as a physician, he "ran every day to cure the sick or to send them to Jesus"²⁰⁸. As a result of work, in the 90s of the 19th century, 1-2 families in Van had already officially accepted the Protestant faith²⁰⁹.

But Protestant figures were generally not happy with their

²⁰⁷ Van Yeramyran College: 9-15.

²⁰⁸ Tseruk 1904, N 12, p. 59.

²⁰⁹ Tseruk 1904, N 12, p. 59.

outcome. In 20-22 years of operation, they had barely recruited 22 members, yet thousands of dollars had been spent. “Each time, the preachers complained against the ungrateful behavior of the Van residents, they criticized them, they were saddened to see that despite their efforts and enthusiasm, they do not want to come on the right path.”²¹⁰

Mission of Physician-Pastor Reynolds

It was 1895, when the horror of the massacres and the economic distress in Van reached its peak. In the name of the Van branch of the “Port” company, money was sent from America and Europe (Switzerland, England, Germany) to help the homesick people of Van, to care for and teach 500-600 orphans (boys and girls)²¹¹. Schools were opened in Van, Armenian Valley, Gavash, Shatakh, Archesh²¹². At the same time, Reynolds established a factory in Van and began providing benefits to those in need. That situation continued until 1898. Until then, the protestant preachers who were mocked and reproached become “saints” and “saviors” among the representatives of rural and urban society of Van. As a result, the number of followers of Protestantism reaches 100, and the number of families reaches 10²¹³. Speaking about the activities of Reynolds H. Ter-Mkrtchyan assures that he “slowly resisting the persecutions and scorn of the enlightened people at the time,

²¹⁰ Tseruk 1904, N 12, p. 59.

²¹¹ Geghuni 1900: 5.

²¹² Harutyunyan 2012, N 10, p. 30 and 33.

²¹³ Tseruk 1904, N 12, p. 60.

during the medical visits to the houses, started his preaching work with people, who accepted his preached faith”.²¹⁴

In 1905 Reynolds founds a church-congregation in Van, where he invites David Pakhchoyan²¹⁵ as a permanent preacher. Two American preachers, Armenian preachers and assistants were working under his leadership, but the main work was done by Reynolds²¹⁶. With the help of the “Port” company, he also managed to build an orphanage, a cemetery, a medical center, a pharmacy, a workshop, a vegetable garden, a windmill, and a flower garden on the eastern hill of Aygestan to spread science, enlightenment, and Protestantism.

Highly appreciating Reynolds’ moral, intellectual and material role in the life of the Armenians of Van, on the initiative of the locals, with the participation of the spiritual leader of Van, Archbishop Hovsep Sarachyan, on September 30, 1912, the jubilee dedicated to the 40th anniversary of his activity was held in the newly built oratory of Van. The speakers, Hambardzum Yeramyanyan, the director of Van Yeramyanyan College, Avetis Terzibashyan, the mayor of Van, young preacher Ussher and others appreciated his contribution in the life of the people of Van²¹⁷.

Criticisms against Reynolds were also not few. Thus H. Ter-Mkrtchyan, speaking about preaching of Protestant, notes: “How

²¹⁴ Gorts, November 4, 1908, N 46.

²¹⁵ Gorts, November 4, 1908, N 46.

²¹⁶ Gazanjian 1950: 293.

²¹⁷ Avetaber, November 16, 1912, N 46, p. 1091.

much the poor, oppressed people have benefited from these benefits, let's just say that the officials' profit has always been more than what was distributed, and that profit has been subtracted from the money and benefits to be distributed to the poor"²¹⁸.

Based on the testimonies of political figures from Van Mkryan and Tutunjyan, A-Do singles out anti-Armenian practices by Reynolds, noting that during the 1896 pogroms, he handed the Armenians who took refuge with him into the hands of the Turkish governor of Van²¹⁹.

By the way, a similar reality was also recorded during the 1915 April heroic battle of Van. When Armenian women and children turn in terror to the representatives of the American Protestant mission in Van in the hope of finding safe shelter from Turkish torture, as witness E. Buranyan mentions Dr. Reynolds, who always preached "humanity" among the population, carelessly and without feeling a twinge of conscience rejects and expels them²²⁰.

Nevertheless, the American Protestant preacher Reynolds, who lived and worked in Van for 44 years, highly appreciated the Van-Vasporakan. In his speech at a gathering in London in 1913 he said that Van is so beautiful that it would be a misfortune to die without seeing it.

Fortunately or unfortunately, some of Reynolds' dreams remained unfulfilled. He wanted to establish a higher educational

²¹⁸ Gorts, November 4, 1908, N 46.

²¹⁹ A-Do 1917: 159.

²²⁰ Buranyan 2013: 26.

institution in Van, hoping to find funds for its construction. The Protestant preacher traveled to England and the USA in 1913 and received the support of the “Port” company. But the disaster of 1915 left his goal unfulfilled²²¹. In 1916, after visiting and distributing benefits to the refugees of Yerevan, he died after returning to America. Like Catholicos of All Armenians M. Khrimyan, Reynolds had willed that his remains be moved to Van at the first opportunity. E. Rshtuni wrote about it in a 1925 letter to H. Yeramyán. “Remains have been handed over to me and I hope to take the caravan of Van residents back to the villages and settle there in our beloved Van...”²²²

His wife played a major role in the education of Armenian orphaned girls. When Reynolds was in America in 1915, she did all of her husband’s errands. However, in 1915, during the Great Migration of Van, she died of exhaustion in Tiflis, where grateful Van residents organized his funeral²²³.

The activities of Protestant preachers Greene and H. Allen

Young Green came to Van with Reynolds as his assistant to give impetus to the preaching and educational work. At first, he had bad ideas about the Armenian people of Van. However, communicating with representatives of different segments of

²²¹ For more details about the events of this period, read Harutyunyan, Balyan 2022.

²²² Gazanjian 1950: 295.

²²³ For more detail see Kochnak, 1915, October 23, N 43.

society, he changed his wrong beliefs and got a pro-Armenian orientation. Being against the division of the Armenian Apostolic Church, he attracted the admiration of the Armenian “brothers”, but on the other hand earned the displeasure of the conservative Reynolds, who soon removed him from Van²²⁴.

In 1895 Green assumed the position of secretary of the pro-Armenian committee of New York, which he managed successfully until 1918, always having as his motto "I came from America to Van as a preacher and now from Van I will go to America as a preacher from Van."²²⁵

In 1894 another young Protestant preacher Herbert Allen came to Van, who was the son of former editor of the periodical “The Herald” (Constantinople) Allen and the superintendent of Van school. Born in Kharberd, he spoke Armenian fluently and loved Armenians. The events of 1894 in Sassoon, the 1895-1896 Abdul-Hamid massacres, the death of his paralyzed father, who fell victim to the Kharberd massacre, left a deep trace on his mental condition.

In 1897 Herbert Allen returned to Van from America and at the same time undertook the task of restoring the rights of the Armenian peasants robbed by the Kurds. In the spring of the same year, accompanied by the American vice consul of Van and veterinarian Shahen Shatakhtsyan, H. Allen acquired draught cattle from Payajuk village in Salmast to distribute it among the villagers of Van.

²²⁴ Yeramyan 1950: 282-286.

²²⁵ Yeramyan 1950: 295-296.

Soon, returning to America in 1900, H. Allen founded the periodical “Kochnak of Armenia” (Church Bell of Armenia). He also assumes the positions of the inspector of the American School of Partizak, and then the editor of “The Herald”.

H. Allen died in 1911 at the age of 46, bequeathing the motto²²⁶ “Tell my nation (we are talking about the Armenians - V. H.) to love each other and not stray from the path of truth.” His funeral took place at the initiative of the Armenian people, in the oratory of Van²²⁷.

The role of Clarence Douglas Ussher, Ernes Earo and Creasy

In 1900 physician Clarence Ussher arrived in Kharberd and then Van from America, who diligently started the useful work of free medical care and distribution of medicine to many patients. The love and respect for C. Ussher was so great among the population of Van that when the missionary assembly convened in Karin in 1912 decided to transfer him from Van to Karin, the residents of Van immediately prepared a request and, turning to the participants of the missionary assembly in Karin, asked them to leave him in Van²²⁸.

Clarence Ussher believed that the destruction of the Christian Armenian population of the Ottoman Empire was planned long

²²⁶ Gazanjian 1950: 297.

²²⁷ Avetaber, November 16, 1912, N 46, p. 1090.

²²⁸ Avetaber, November 16, 1912, N 46, p. 1090 pp. 9-15.

before Turkey entered the war²²⁹. According to him, “religious fanaticism played a fleeting role in them (we are talking about pogroms - V. H.), and only after the pogroms started, having nothing to do with that program”²³⁰.

The information of Clarence Ussher, who lived in Van for 18 years, about the April heroic battle of Van is also quite valuable²³¹.

In the summer of 1915, he went to Yerevan with the refugees, taking over the affairs of the Relief Society of the Middle East²³².

Ernes A. Earo, who was a school teacher, inspector of Armenians operating in the missionary circle, and president of the Van Missionary Higher School, also carried out missionary activities in Van.

In 1915 in Van, he greatly assisted orphans and the poor. Later, on December 20, 1915, Earo was given the certificate N 1405 of the American Committee for Emigration Assistance, which gave him the opportunity to live and work in Yerevan as well. The protestant preacher was awarded with the medal of the Armenian government for his works²³³. E. Earo died in 1940.

Creasy also did much in Van, who in 1916 distributed 1,200 head of cattle, as well as beds and clothes to the population in need in the regions of Armenian Valley, Norduz and Gavash alone²³⁴.

²²⁹ Ussher, Knapp 1917.

²³⁰ Somakian 1995: 76-77.

²³¹ Yusaber, 1916, December 24.

²³² Gazanjian 1950: 299.

²³³ NAA fund 50, inv. 1, file 127, sheet 25.

²³⁴ Arev, June 17, 1916, N 131.

On September 18, 1913, during the most intense period of Armenian reforms, Noel Buxton, the Balkanian and later the president of the Anglo-Armenian Committee, accompanied by his brother Harold Buxton and the editor-publisher of the English "Ararat" journal, published in London, Aram Raffi, the son of the famous Armenian novelist Raffi, arrived in Van via Tabriz²³⁵. Buxton's goal was to "study the Armenian life and see the sufferings of the Armenian people."²³⁶

The delegation meets the governor of Van, Tahsin Bey, and visits the Armenian schools of Varag, Aghtamar, and returns to England via Erzurum and Tiflis on September 22.

Arsen Keorkizyan's pro-Armenian activities

Armenian Arsen Keorkizyan, who was born and received his primary education at Van's American Higher School, was also carrying out protestant preaching in Van. He together with G. Petrosyan, founded the City male high school in Van, where after 4 years in office he was sent to "Anatolia" college in Marzvan, then he moved to Germany, where he studied theology at the "Alliance" seminary in Berlin. Returning to Van, in 1912-1915 he served as the deputy supervisor of American schools for boys and girls and pastor of churches. After the emigration of July 1915 until 1917, A. Keorkizyan was a teacher of the school for refugees in Baku and preacher of the local Evangelical Church. In 1917-1918 he served in the Near East Relief Administration as a Home Relief Supervisor.

²³⁵ Ashkhatank, 1913. October 30/ November 12, N 37.

²³⁶ Mshak, 1913. October 12, N 226.

And in 1918, he held the position of pastor of the Armenian Christian Church in Tabriz. During the migration of Van in March 1918, with the assistance of the British military authorities, A. Keorkizyan establishes nutrition stations for the Vaspurakan exiles on the Hamadan-Kermanshah-Baghdad line.

At the end of 1918, he was sent to the British in Baghdad as a representative of the National Council of Tehran to help the 20,000 Armenian refugees sheltered there. Together with Musegh Archbishop Serobyanyan, he founded the “Vaspurakan” and “Araratian” orphanages for boys and girls of AGBU in the desert of Bakuba, which were later moved to Jerusalem²³⁷.

At the beginning of the 20th century, established religious relations with representatives of other churches also existed in Van province. Thus, the leader of the Anglican Church, the Archbishop of Canterbury, presents to the mayor of Van and the representative of Van’s trading society, Petros Gapamachyan, several church-artistic vessels with the inscription “in confirmation of his sincere friendship”²³⁸.

Conclusion

Thus, starting from the 70s of the XIX century, the Protestant preachers, in various regions of Western Armenia, as well as in Van, undertake evangelical-preaching, educational, medical activities, as a result of which a school, a college, an orphanage, a cemetery, a medical center, a pharmacy, a workshop, a vegetable

²³⁷ Gazanjian 1950: 301-302.

²³⁸ Mshak, 1911. January 11, N 4.

garden, windmill and flower garden were built. Protestantism in Western Armenia had both positive and negative consequences. It was obvious that the ultimate goal of the preachers was the ideological transformation of the Western Armenian population. Under the guise of science and enlightenment, the final goal of the foreign doctrine was hidden. However, it should be noted that their activities were also distinguished by many charitable and humanitarian initiatives.

**Հոդվածը պատգարկել է “*Fundamental armenology armenology*”
ամսագրում, 2024 թ., թիվ 1:**

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ 1915 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ (ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)²³⁹

1914 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին տարածվեցին չարագուշակ լուրեր, որոնք արյունոտ գույներով էին պատկերում Վանի նահանգի հայության ողբերգական վիճակը և թուրք-քրդական գազանությունները: Մասնակի սպանություններին հետևեցին խոշոր իրադարձությունները: Ընդհանուր առմամբ՝ 1914 թ. վերջերին Վանի նահանգի գավառներում և առաջին հերթին Սարայում ու Բաշկալեում կազմակերպվեց շուրջ 10 հազ. հայերի կոտորած²⁴⁰: Նահանգի հայության կոտորածների առաջին փուլի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն էր, որ թուրքական կառավարությունն ուներ ցեղասպանության մասնավոր ծրագիր. ոչ միայն թալանել նահանգի հայկական շեն ու խաղաղ գյուղերը և ասպարեզից հեռացնել տեղի դեկավար հայ գործիչներին, այլև ամբողջությամբ բնաջնջել նահանգի հայ ազգաբնակչությանը: Թեև կառավարությունը սկզբում փորձում էր

²³⁹ *Հերագուրությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

²⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.102, թ.42:

կոծկել և նույնիսկ հերքել աղետի մանրամասնությունները, սակայն այն թաքցնել հնարավոր չէր: Ոճրագործներից բաղկացած «Teşkilatı Mahsusa»-ի նորակազմ ջոկատները նահանգային ոստիկանության հետ միասին հայկական գյուղերում դիմեցին ամեն տեսակ բռնարարքների՝ ոչ միայն հայ բնակչությանն ընկճելու և թալանելու, այլև հետապնդելու, արյունալի միջադեպեր ստեղծելու նպատակ, որով հայերին կարելի էր մեղադրել *«փրովորքասիոնի յանցապարտութեամբ»*²⁴¹: Այս ամենը, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Տատրյանը, գալիս են ապացուցելու, որ իրթիհատի ցեղասպանության ծրագրերն իրենց սաղմնային վիճակում գոյություն ունեին արդեն 1914 թ. աշնանը, երբ Օսմանյան Թուրքիան պատերազմի մեջ մտավ Գերմանիայի հրահրումով: Չնայած տագնապալի այս կացությանը, այնուամենայնիվ, արևմտահայ ազգային կուսակցությունները պատրաստ չէին դիմակայելու հայ բնակչությանը սպառնացող վերահաս վտանգին: Զարդերն առանձնանում էին մի կողմից նենգամիտ խաբեություններով, մյուս կողմից անդիմադրելիությամբ, *«որոնց դէմ բողոքի հուժկու ձայն չէր լսում, ըմբոստացած ոգու մարտնչումը չէր երևում»*²⁴²: Խաղության բոլոր ճիգերն ու ջանքերն անօգուտ էին, քանի որ բանսարկությունների հեղինակը կառավարությունն էր, իսկ Վանի

²⁴¹ **Պրոֆ. Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, հայկական ցեղասպանութիւնը յետ-պատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ, Բոստոն, 1995, էջ 47:

²⁴² **Ա.Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թթ., Երեւան, 1917, էջ 191:

կուսակալի փոխանորդ Շեֆիկ Բեյը ձգձգում էր իրադարձությունների զարգացումը՝ սպասելով Ջևդեթի վերադարձին²⁴³:

1915 թ. մարտին Սալմաստում գտնվող Վանի նահանգապետ Թ. Ջևդեթը, որն ինչպես Սալմաստում, այնպես էլ Ուրմիայում մասնակցել էր թուրքական և քրդական ջոկատների հյուսիս-պարսկական արշավանքներին և Բաշկալեի հայերի կոտորածների կազմակերպմանը, իր 600 զինվորներով (ըստ Լորդ Բրայսի՝ 400²⁴⁴, ըստ Օ. Մխիթարյանի՝ 2000 կանոնավոր բանակով, լեռնային և դաշտային թնդանոթներով²⁴⁵, ըստ Հ. Կոսոյանի՝ 150 հեծյալ չերքեզ չեթաներով, որոնց միացել էին 200 հոգուց բաղկացած չեթայական հետևակ խումբը՝ 3 թնդանոթներով²⁴⁶), երբ այդ զորքը կենսական անհրաժեշտություն էր Սալմաստի ռազմաճակատում ռուսական զորքերի դեմ կռվելու համար, «յաղաթական» մոլուցքով Բաշկալեից վերադառնում է Վան, որը ճնշող և սառը տպավորություն է թողնում տեղի հայ ազգաբնակչության վրա: Թալանված և ավերված հայկական գյուղերով անցնելու ժամանակ Թ. Ջևդեթն անտարբեր վերաբերմամբ հանդես բերեց թուրք զինվորների կողմից իրագործված բռնաաղծություններին, որի համար էլ արժանացավ նահանգի հայ ազգաբնակչության ատելությանը: Հայ երիտասարդներից մեկը նույնիսկ փորձեց մահափորձ

²⁴³ Տե՛ս **Կոսոյեան Հ.**, Վան-բերդաքաղաքի ժողովրդային հերոսապատումը, 1915 ապրիլ 7 - մայիսի 3, Թեհրան, 1966, էջ 39:

²⁴⁴ Տե՛ս **Պրայս Լ**, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, կազմեց Վահան Միրազենց, Կ. Պոլիս, 1920, էջ 110:

²⁴⁵ Տե՛ս **Մխիթարեան Օ.**, Վանի հերոսամարտը. Հերոսամարտը 1915 Ապրիլի 7-1915 մայիսի 3, Սոֆիա, 1930, էջ 34:

²⁴⁶ Տե՛ս **Կոսոյեան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիվները, Երևան, 1992, էջ 23-24:

կազմակերպել նրա դեմ, սակայն այն կանխվեց դաշնակցության կողմից²⁴⁷:

1915 թ. մարտի 17-ին Վանի թուրքական պաշտոնեությունն, ինչպես նաև Վանի հայոց հոգևոր առաջնորդ Տ. Եզնիկ վարդապետը, Վանի նահանգի կուսակցական գործիչներ՝ Ա. Վռամյանը, Արամը և մի քանի հայ վաճառականներ՝ հակառակ ժողովրդի ատելությանը, փորձելով մեղմել Թ. Ջևդեթի զայրույթը հայերի նկատմամբ, Կոտուբաշ գյուղում դիմավորում են նրան՝ ձիու ոտքերի տակ զոհաբերելով ոչխար: Ահա թե ինչպես է նկարագրում հանդիպման տեսարանը Ա.-Դոն. «Ջէդէտը երևաց ձիու վրա, խաքի գոյնի չէթայական հագուստով, յետևեց ունենալով 600-ի չափ ընտիր չէրքէզներ և երեք թնդանօթ: Սա ինքնին մի սպառնական ուժ էր, սպառնական հեռագրի մի կէտը: Ջէդէտը իջաւ կառքից, ողջունեց դիմաւորողներին, ինչպէս և Վռամեանին ու Արամին և կառքը նստելով շարժեց: Նրան հետևեցին դիմաւորողները մինչև տուն: Այստեղ Վռամեանը տեսնեց առանձին Ջէդէտի հետ, խօսեց երկար և դուրս եկաւ այն տպաւորութեան տակ, որ յաջողեց իրեն մեղմել Ջէդէտի վերաբերմունքը, վանել նրանից սպառնալիքը: Ու Վռամյանը հեռացաւ լաւատես»²⁴⁸:

Իսկ Ա. Եկարյանը հիշում է. «Հայ ժողովուրդը, բողոքելու նպատակաւ այս հրէշը, փառատոր ընդունելութիւն մը սարքեց ի պատիւ իրեն, մեծ բազմութեամբ մը դիմաւորեց գինքը մերձակայ՝ Կոտուպաշ գիւղին մէջ, քանի մը ոչխարներ մորթուեցան իր ձիուն

²⁴⁷ Տե՛ս **Պրայս Լ.**, նշվ. աշխ., Ա մաս, էջ 110:

²⁴⁸ **Ա.-Դոն**, նշվ. աշխ., էջ 151, նաև **Կոսոյեան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիվները, էջ 24:

ուրբերուն տակ. Ճէվրէթ, առերես, ինքզինքը գոհ և ուրախ կը ցուցնէր...»²⁴⁹:

Նահանագապետի վերադարձից հետո դրությունը Վանում ոչնչով չփոխվեց և նույնիսկ էլ ավելի վատացավ: Թ. Ջևրէթը սկզբում բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեց նահանգի հայ ղեկավարների նկատմամբ, բայց մի քանի շաբաթ անց նա բացահայտեց իր իսկական դեմքը՝ «գառան մորթու» տակից դուրս գցելով իր «գայլի դունչը»: Վասպուրականցիներն ընդհանուր վայրիվերումների մեջ զգում էին, որ Վանի կառավարությունը՝ հանձին Թ. Ջևրէթի, փոխել էր իր վերաբերմունքը հայերի հանդեպ, իսկ «...Վասպուրականի մէջ հայութիւնը իր կատարած բոլոր զոհաբերութիւններով կը նկատուի անվստահելի եւ վնասակար»²⁵⁰:

Վանի դաշնակցական վերնախավը, որն ընթացք էր տալիս ազգային խնդիրներին, և որի վրա էր ծանրացած Վասպուրականի ժողովրդի պաշտպանության պատասխանատվությունը, այս անգամ էլ չկարողացավ կանխատեսել Թ. Ջևրէթի խորամանկ և դավադիր ծրագիրը, որը Օ. Մխիթարյանի բնութագրմամբ «*թուրք պաշտօնատարի մը յատուկ նենգութեամբ, ցոյց տուաւ արտակարգ սիրալիրութիւն*»²⁵¹:

Թ. Ջևրէթը «*կրցաւ պահել իր հոգու թոյնը, մտքի եւ սրտի մաղձը*» և կարողացավ իր «*ցավը*» հայտնել այն աղետների համար, որոնք տեղի էին ունեցել ռուս-թուրքական սահմանին. «*Դէ, պատերազմ է, չի լինիր, - նշում էր նա, - բայց ճշմարիտ հաւատացէք,*

²⁴⁹ Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 184:

²⁵⁰ **Կոստյան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 13:

²⁵¹ **Մխիթարեան Օ.**, նշվ. աշխ., էջ 34:

*սիրտս կտոր կտոր կըլլար անմեղ դժբախտներու համար... Հապա
այն զուլում ւաւերնե՞րը՝ գործած ոռու զօրքի կողմէ. բառ մը գտնե
որակելու...»²⁵²:*

Նա նույնիսկ թուրքական կառավարության հատուկ
շնորհակալությունը փոխանցեց Ա. Վռամյանին և Արամին, որոնք
իրենց հեղինակությամբ և հաշտարարությամբ կարողացել էին
«խաղաղեցնել» Ոստանի, Գավաշի, Թիմարի հայությանը և
«հանգիստ» պահել Վանը: Նահանգապետը «բարեկամական»
վերաբերմունք ցույց տվեց նրանց և խնդրեց նախկինի պես
աշխատել իր հետ միասին՝ նահանգում կարգ ու կանոնը
պահպանելու համար: Կազմվեցին հանձնախմբեր, որոնք
ուղարկվեցին գյուղերը՝ քրդական կողոպուտներին ու ժանդարմների
բռնություններին վերջ դնելու և վեճերը հարթելու համար: Ջևդեթը
միաժամանակ բանակցություններ սկսեց վարել հայ դասալիք
զինվորների հանձնման ուղղությամբ, որպեսզի իբր
դժվարություններ չծագեն թուրք և քուրդ դասալիքներին հավաքելու
ժամանակ²⁵³: ՀՅԴ-ի մարտի 21-ով թվագրված զեկուցագրերից
մեկում կարդում ենք. «Մեր գեներալ նահանգապետ Ջևդեթ թեյը
կարծես թե վարում է խաղաղարար քաղաքականություն: Նա
խոստացել է դադարեցնել հալածանքները: Հայերը խնդրում են
երաշխավորել կյանքի անվտանգությունը՝ միաժամանակ խնդրելով,

²⁵² Կոստյեան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիվները, էջ 24:

²⁵³ Տե՛ս Պրայս Լ., նշվ. աշխ., Ա մաս, էջ 110:

որպեսզի ռազմական դատարանը պարծի Գավաշի պաշտոնյաներին և միլիցիոներներին»²⁵⁴:

Սակայն Ա. Վոսմյանը չէր էլ կարող մտածել, որ Թ. Զևդեթը պատերազմի դաշտից վերադարձել էր իր հետ բերելով Վասպուրականի հայության բնաջնջման ծրագիրը, որը պետք է գործողության մեջ դրվեր ավելի շուտ, քան կամավորների մուտքը Վասպուրական²⁵⁵: Իրականում, Թ.Զևդեթը հետևելով կենտրոնական կառավարության հրահանգներին աշխատում էր ամենից շուտ իր հաշիվները մաքրել Վանի նահանգի հայության հետ՝ նախքան ռուսական զորքերի կողմից նահանգի գրավումը: Դրա համար էլ նա իր նահանգի կայմականներին հրահանգեց ամենափոքր առիթի դեպքում անգամ հարձակվել հայերի վրա: Այն նախատեսում էր կենսագործել ապրիլի 6-ին՝ 24 ժամվա ընթացքում՝ նախքան Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունների վերսկսումը: Կոտորածի «մեկօրյա ջարդի մարտավարությունը»²⁵⁶ մտահղացել էին Թ. Զևդեթը և իրթիհատական կուսակցության Վանի անդամները, որոնք էլ այդ մասին հաղորդել էին Կ.Պոլիս, որտեղից էլ ստացվել էր կոտորածի

²⁵⁴ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918թթ.). օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյան, առաջին հատոր, Երևան, 2011, էջ 173:

²⁵⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ.1267, ց.1, գ.6, թ.1-18:

²⁵⁶ **Դևրիկյան Տ.**, Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923, Երևան, 2005, էջ 51:

գաղտնի հրահանգը²⁵⁷: Վանի թուրք պաշտոնյաների հետ կազմակերպված մի հավաքի ժամանակ Զևդեթը նշում էր. «Մաքրեցինք Արդապատականի (Պարսկաստանի հիւսիսը) Հայերը և Սուրիացիները. հիմա պէտք է միեւնոյն կերպով շարժվինք Վանայ Հայերուն հանդէպ»²⁵⁸, «մենք Ադրբեջանը մաքրեցինք հայերից ու ասորիներից, հիմա պէտք է նոյն ձևով վարվենք Վանի հայերի հետ»²⁵⁹:

Կոտորածի ծրագրի համաձայն 198 հազ. հայություն ունեցող Վանի նահանգի 10 տարեկանից բարձր տարիք ունեցող բնակչությունը պետք է բնաջնջվեր, իսկ կանայք, աղջիկները և երեխաները՝ բաժին հասնեին մահմեդականներին: Թ.Զևդեթը հայերի նկատմամբ տաճած ատելությունը փորձում էր հիմնավորել նրանով, որ իբրև թե Ա. Վռամյանն ու Արամը կապեր էին հաստատել Սալմաստի ուղղությամբ գտնվող հայ կամավորների հետ և նրանց օգնությամբ նախատեսել էին ապստամբություն բարձրացնել օսմանյան պետության դեմ: Իրականում Ա. Վռամյանն ու Արամը ոչ միայն առնչություններ չէին ունեցել կամավորների հետ, քանի որ նրանք՝ թեկուզև ձևականորեն, ոչ միայն դեմ էին կամավորական շարժմանը, այլև մտադրություն անգամ չունեին ապստամբելու

²⁵⁷ Տե՛ս **Վէր. Կէօրիկզեան Ա.**, Վասպուրականի Հերոսամարտը 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7, Յոյս և լոյս, Պէյրուֆ, 1965, էջ 88:

²⁵⁸ Անդ, էջ 89:

²⁵⁹ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինայլանի, հատոր I, Երևան, 2006, էջ 23, նաև հատոր II, Երևան, 2008, էջ 302:

թուրքերի դեմ: Պարզից էլ պարզ էր, որ ոճրագործ նահանգապետի այդ մեղադրանքը շինծու էր և չունեւ փաստական որևէ հիմք:

Նահանգի հայ ազգային որոշ գործիչներ թեև կռահում էին Ջևդեթի այս խորամանկ խաղի նպատակը, սակայն անհասկանալի կլինեւ հաշտության ու խաղաղության առաջարկին դեմ գնալը²⁶⁰: Այդ մասին Հ. Կոսոյանը նկատում է. *«Մէկը կ'աշխատէր ժողովրդի գոյութեան վրանգը հեռու պահել, ժամանակ, օր շահիլ: Միա՛ր՝ դաադրութեամբ յարմար պահուն թակարդի բերել Դաշնակցութեան սիւները, թե գաատ թե՛ քաղաք եւ ասպա մաքրել որջ հաշիւը անգլուփ ժողովրդի հեկ»*²⁶¹:

Այդ պատճառով էլ հայկական կողմն ընդունում է հաշտության կոչը և ամենուրեք, դադարեցվում են զինված ընդհարումները: Ստեղծվում է «խաղաղ» մի ժամանակաշրջան, որը տևում է մոտ մեկ ամիս և որի ընթացքում նահանգապետությունը տենդորեն նախապատրաստվում է հայ բնակչության ոչնչացմանը: Հնչակյան Արտաշես Սուլախյանի կնոջ՝ Կալիփսե Սուլախյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ջևդեթը չէր թաքցնում, որ *«այժմ ամեն մեկն իր սեփական դերն է խաղում բեմի վրա, տեսնենք՝ ով կմեռնի, ով սաղ կմնա»*²⁶²:

Առհասարակ, հայկական կոտորածներն Օսմանյան Թուրքիայում նախատեսված էր սկսել Վան-Վասպուրականից, որի գործադրումն ընդամենը ժամանակի և հնարավորության խնդիր էր:

²⁶⁰ Տե՛ս **Մուրադյան Հ.Մ.**, Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, Երևան, 1983, էջ 31:

²⁶¹ **Կոսոյան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիվները, Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից, էջ 24:

²⁶² **Սուլախյան Կ.**, Թե՛՛ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երևան, 2000, էջ 8:

Վանի հայության ցեղասպանության քաղաքականությունն ի կատար ածելու նպատակով Թ. Ջևդեթի հրամանով անխտիր բանակ զորակոչվեցին զենք կրելու ընդունակ 18-ից ցածր և 50-ից բարձր տարիք ունեցող նահանգի բոլոր թուրք տղամարդիկ, իսկ ապրիլի 1-ին Քեշիշ գյուղից Վան փոխադրվեցին երկու մեծ թնդանոթներ²⁶³: Կարճ ժամանակում իրականացվեց նաև թուրքական զորամասերի և համիդեական հին ու նոր գնդերի վերակազմակերպումը և կենտրոնացումը Վանում ու գավառներում: Նույնիսկ նախատեսվում էր անհրաժեշտության դեպքում պարսկական ռազմաճակատի դատարկումը և Պարսկաստան արշաված թուրքական զորագնդերի օգնությունը, եթե հայերի դեմ ծրագրված քաղաքականությունը հանդիպեր ընդդիմության²⁶⁴: Համալրվում են հին պահակախմբերի և ոստիկանական ուժերի անձնակազմերը, հիմնվում են նոր պահակակետեր, ստեղծվում են պատժիչ արշավախմբեր, խիստ հսկողության տակ է առնվում հայկական գավառների և գյուղերի միջև իրականացվող երթևեկությունը: Դրա հետևանքով էլ Վանն աստիճանաբար կտրվում է շրջաններից ու գյուղերից, շրջանները՝ մեկը մյուսից, իսկ գյուղերն իրարից: Այսպիսով, կոտորածների մռայլ ուրվականը

²⁶³ Տե՛ս «Աշխատանք», Երեւան, 1916 թ. հուլիսի 23, թիւ 24:

²⁶⁴ Տե՛ս Գաղտնի տեղեկագիր Տոկթ. Եօհաննէս Լեփսիուսի (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին և գերման և հայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը, էջ 89, նաև Գերմանիան և Հայաստանը 1914-1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննէս Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինայանի, հատոր II, էջ 303:

տարածվում էր չորս բոլորը ու ցցվում Վան-Վասպուրականի հայության առջև:

Թեև Վասպուրականի հայության ջարդերի ծրագիրը գործողության մեջ էր դրվել մեծ գաղտնապահությամբ, այնուամենայնիվ որոշ տեղերում բարեկամ և հարևան քրդերի շնորհիվ այն բացահայտվեց: Այսպես, Հայոց-Ձորի Պժնկերտ գյուղի բնակիչ Ավդալ աղայի Համզեն, որը Թ.Ջևդեթին ուղեկցող զորքի մեջ էր, տուն վերադառնալիս Կղզի գյուղի Չլանի ջրաղացներում Էրեմերի գյուղի բնակիչ Ահարոն Տ. Մարտիրոսյանին տեղեկացնում է. «Հայեր, ձեր գլխի ճարը տեսե՛ք, Ջէդէտ փաշան Պարսկաստանից եկել է ձեր բոլոր մեծամեծներին կոտորելու»²⁶⁵:

Շատախի Գոմեր գյուղի քուրդ ժանդարմ Բենոն, Շատախի դեպքերի նախօրյակին իր բարեկամ Ազատին է հղում հետևյալ նամակը. «Սիրելի բարեկամ Ազատ, Դուք ինձ մէկ անգամ լաւութիւն էք արած, ես չեմ մոռանայ այդ և այս երկու տողով կուգեմ ձեզ իմացնել: Այս օրեր ձեզի աւելի լաւ պահէք: Գայմազամը վաղը պիտի սկսի հայերից զինուոր հաւաքել, և իմանալով որ հայերը զօրք չը պիտի տան, կառավարութիւնը պատճառ պիտի համարէ այդ և սկսի հայերին կոտորել: Լազգին (խոսքը վերաբերում է Նորդուզի գրավցիների սպանված ցեղապետ Շաքիր աղային - Ա-Դո) այժմ 30 հոգով Հայոց-Ձոր կսպասէ. Վալի բէյ (խոսքը վերաբերում է Ջևդեթին - Ա-Դո) հրահանգած է մնալ այնտեղ, մինչև որ Շատախի խռովութիւնները սկսին և ապա գայ իր հօր վրէժը լուծելու: Կռի համար կանչած և այստեղ հասած են արդէն եզդիներն և ալանցի աշիրէթները, Խումարի պահակախումբն ալ նոյն նպատակով յետ

²⁶⁵ Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 163:

կանչած է: Լուր փած են նաև խալիլանցիներուն, խաւշփանցիներուն, Բէրվարի և Նորփուզ, որ այնպէղին հրացանատրներ ալ գան: Երբ բոլորը հաւաքեն, այն ժամանակ կոհլը կսկսի: Այսպէղի միլիսներից զար մօտակայ քիւրդ գիւղացիներուն ալ զէնքեր բաշխեցին: Ձեր հանդէպ իմ երախտագիտութիւնը կատարելով կը խնդրեմ, որ մեզանից ու Աստուծուց զար ոչ ոք չիմանայ իմ նամակ գրելը»²⁶⁶:

Եվ վերջապէս, Բերկրիի Փիսողլան գյուղի քուրդ Նուրոն, որը դաշնակցութեան հավատարիմ սուրհանդակներից էր և Արճակի դաշնակցական գործիչ Շիրին Հակոբյանի մտերիմը, ապրիլի 3-ին գալով Խառակոնիս հետկային է հաղորդում Շ. Հակոբյանին. «Երեկ Բերկրիի գայմագամ Զիա բէյը իր մօտ կանչելով գիւղերի մոլիթարներին (տանուտերերին – Ա. Հ.) և ոսպիներին խստիւ հրամայեց, որ եթէ հայերին սկսեն կոտորել, ոչ մի մահմեդական չի համարձակի իր մօտ հայ պահել կամ պաշտպանել, նոյնիսկ եթէ հայերը ուզեն հաւաքաւորիս լինել: Ով այս կարգադրութեանը հակառակ գնայ, հայերի վիճակին կենթարկվի»²⁶⁷: Սակայն քուրդ Նուրոյին կոտորածի օրը ստույգ հայտնի չէր²⁶⁸:

Ճիշտ է, հայկական կոտորածներում որոշակի դերակատարում էր հատկացվում քրդերին, սակայն նրանցից շատերը փորձում էին հայերի հետ պայմանավորվել,

²⁶⁶ Անդ, էջ 163-164, նաև «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924 թ., թիւ 9, հուլիս, էջ 128-129:

²⁶⁷ «Աշխատանք», Երեւան, 1916 թ. հուլիսի 23, թիւ 24, նաև Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 164:

²⁶⁸ Տե՛ս «Աշխատանք», Երեւան, 1916 թ. հուլիսի 23, թիւ 24:

հավաստիացնելով, որ «երբ ռուսը գայ դուք մեզ պահեք, երբ թուրք ձեզ վնասէ մենք ձեզ կը պահենք»²⁶⁹:

Վանի նահանգի հայերի կոտորածները հաջողությամբ իրականացնելու համար նահանգապետի կողմից գործի դրվեց թուրք-քրդական հրոսակների կողմից նահանգի հայկական շրջաններն իրար մեջ բաժանելու և հայ ազգաբնակչությանն առանձին-առանձին կոտորելու հետևյալ հրահանգը. Ջևդեթ բեյը պետք է գործեր Վան քաղաքում, Բերկրիի կայմակալ Ջիա բեյը, Կոպ Մահմադի թոռ Ամար բեյը և Բարիոն՝ իրենց 500-600 ձիավորներով՝ Բերկրիում և Վերին Թիմարում, Սարայի կայմակալ Շարաֆ բեյը, Արիֆ բեյը և թակուրցիք՝ Արճակում և Ստորին Թիմարում, Շաքիրի տղան՝ Լազգին՝ Հայոց ծորում, Հյուսեին փաշան՝ Արճեշում և Ալջավազում: Յուրաքանչյուրը մեկ օրվա ընթացքում պետք է իրականացներ իրեն հանձնարարված շրջանների հայերի կոտորածը, որից հետո պետք է անցնեին Նորդուզ, Շատախ, Գավաշ և այլ շրջաններ:

Գաղտնի այս լրատվությունը գավառներից պարբերաբար հաղորդվում էր Վանի հայ ղեկավար շրջաններին, «բայց նրանք այնքան էլ կարևորություն չէին տալիս այս տեղեկություններին»²⁷⁰, և առաջվա պես հույսեր կապելով իթթիհատական ոճրագործ կառավարության հետ բռնել էին նրանց հետ լեզու գտնելու ճանապարհը:

²⁶⁹ Անդ:

²⁷⁰ Ա-Դօ, նշվ. աշխ., էջ 164:

Վան ժամանելուց 10 օր անց՝ մարտի 27-ին (ըստ Հ. Կոստյանի՝ մարտի 30-ին)²⁷¹ Թ.Ջևդեթը բացահայտեց իր ծրագրի մի մասը՝ պահանջելով, որ քաղաքի 18-45 (50) տարեկան բոլոր տղամարդիկ՝ թվով 4000 հոգի, երեք օրվա ընթացքում, զորակոչվեն ու մտնեն թուրքական բանակ՝ որպես ամրաշեն (ամելե) բանվորներ՝ քրդական ու սահմանամերձ վայրերում՝ Արճեշի ու Խնուաի ճանապարհների վրա աշխատելու համար²⁷²:

Վանի ղեկավարությունը չափազանց մտահոգված էին խաղաղության պահպանման հարցում, սակայն միաժամանակ հստակորեն հասկանում էր, որ այն ջարդարարության քաղաքականության սկիզբն էր: Գիտակցելով Թ.Ջևդեթի ոճրագործ մտադրությունը Ա. Վոսմյանը, Արամը և Վանի ազգային առաջնորդարանը նախ փորձեցին հայ երիտասարդությանը զինվորագրել որպես իսկական զինվորներ՝ զենքը ձեռքին՝ պատրաստ կռվելու և մեռնելու հանուն Օսմանյան ընդհանուր հայրենիքի: Բայց, Ջևդեթն ու Կ.Պոլսի կենտրոնական կառավարությունը կտրականապես մերժեցին հայերի օրինական այդ առաջարկը: Ապարդյուն փորձ կատարվեց նույնիսկ փրկանքով (43 օսմ. ոսկի) ազատել երիտասարդների մի մասին: Վերջին փորձը եղավ մասամբ բավարարել Ջևդեթի պահանջը՝ իբրև նոխազ շաբաթը մեկ «զոհաբերելով» 400-500 զորակոչիկ՝ անգնե սահմանամերձ վայրեր մեկնելու համար: Նրանք մտածում էին նաև

²⁷¹ Տե՛ս Կոստյան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիվները, էջ 25:

²⁷² Տե՛ս Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 35:

«գոնե կառավարության պահանջած 4000-ին փոխարեն 7-800 դասայիք եւր դարձնենք»²⁷³:

Միանգամայն այլ էր Վանի հայ երիտասարդության մոտեցումը: Նրանք գտնում էին, որ անզեն զինվորագրումը ոչ միայն ստորացուցիչ էր ազգային արժանապատվության տեսանկյունից, այլև անհանդուրժելի էր թուրքական պետական շահերի առումով, որովհետև «...երիտասարդության համար, խիստ դժուար յանձնառութիւն մ'էր անմոռնչ գնալ Զէվկոյէթեան սպանդանոցը»²⁷⁴: Նրանք քննադատում էին Ա. Վոսմյանի և Արամի զգուշավոր և «պահպանողական» քաղաքականությունը և չէին խուսափում նրանց հիշեցնել 1896 թ. և 1908 թ. դեպքերը, երբ հեղափոխական ղեկավարների նման զգուշավորության հետևանքով զոհվեցին հարյուրավոր մարդիկ և բռնագրավվեց մեծ քանակությամբ ռազմամթերք: Վանի երիտասարդությունը պահանջում էր դիմել զենքի, քան թե նախընտրել «ոչխարային համակերպութիւն և անխուսափելի կոտորած»²⁷⁵:

Ահա լարված այս իրադրության պայմաններում մարտի վերջերին բռնկվում են Շատախի ընդհարումը: Հայտնի էր, որ ամեն տեղ կառավարությունն ինքն էր խռովություններ կազմակերպում՝ հայերին ապստամբության հրահրելու և մեղադրելու նպատակով: Ի վերջո, կառավարությունը ստիպված է լինում այնտեղ ուղարկել հայ և թուրք խառը հանձնաժողով, որին էլ հաջողվում է խաղաղություն

²⁷³ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. յուշեր 1890 էն 1940, Փարիզ, 1947, էջ 158:

²⁷⁴ Կոսոյեան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիվները, էջ 25:

²⁷⁵ Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 36:

հաստատել շրջանում: Սակայն իրականում այն մի փորձ էր Վան քաղաքում կոտորածներ սկսելու, իսկ հաշտության կնքումը՝ մի ծուղակ հայերին ապակողմնորոշելու մտայնությամբ:

Մինչ Ջևդեթը շարունակում էր իր հարաբերությունները հայ ղեկավար շրջանների հետ և իր «եղբայրական» երաշխիքներն էր տալիս Ա. Վռամյանին, ապրիլի 1-ին նրա հրամանով Վանի հայկական թաղերի մեջ գտնվող Համուդ աղայի զորանոցը, որ մինչ այդ դատարկ էր, միանգամից սպառազինվեց և այնտեղ տեղավորվեցին Ջևդեթի հետ Բաշկալեից եկած 150 չերքեզները, ռազմաճակատից բերված 2000 հոգուց բաղկացած միլիի (ազգային Ա. Հ.) կանոնավոր զորամասերը, տարբեր տեղերից հրավիրված քուրդ հեծյալ և հետևակ հերոսակախմբերը: Բացի այդ, տեղական կառավարությունը պաշտոնապես գինում է քաղաքի և արվարձանների 15-80 տարեկան մահմեդական տղամարդկանց²⁷⁶: Պատմական վավերագրերը հաստատում են, որ իշխանություններն ընդհանուր առմամբ Վանի հայության դեմ է կենտրոնացնում շուրջ 6000 զինյալներ՝ չհաշված աշխարհագորը, 12 թնդանոթ և 2 գնդացիր²⁷⁷:

Չբավարարվելով դրանով, Ջևդեթը՝ Վանի ոստիկանապետ Վեֆիկ բեյի միջոցով հրամայում է 20-45 տարեկան զինվորացու բոլոր հայերին և 18-20 տարեկան նորակոչիկներին երեք օրվա ընթացքում ներկայանալ հաշվառման՝ հակառակ դեպքում սպառնում էր, որ «անսաստողները» մահվան կդատապարտվեն,

²⁷⁶ Տե՛ս Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 38:

²⁷⁷ Տե՛ս Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեւիինգ ամեակի առթիւ. 1915-1930, Վենետիկ - Ս.Ղազար, 1930, էջ 30:

իսկ նրանց ընտանիքները կաքսորվեն Բաղդադ և Սիրիա: Այդ մասին Վանի երիտասարդներից մեկը՝ Պ. Բագրունին հիշում է. «Ժողովուրդը չափէն աւելի քան է կատարած իրողութիւնները տեսնելով: Ախոռիկի, Աւզարիկի, Հասան-Թամրանի, Հազարայի, ինչպէս և թուրք բանակին մէջ գտնուող հայ զինուորներու ջարդէն ետք այլևս ամէն ինչ պարզ է, կուզի նոյն վիճակը ստեղծել նաև հայութեան կենրոնի-Վանի մէջ և Վանի հայութեան երիտասարդ շրջաններու մէջ յուզումը և ջղագրգռութիւնը վերին աստիճանի է: Որոշած ենք ընդառաջ չերթալ կառավարութեան և նոյնիսկ առաջնորդարանի կողմէ եղած յորդորներուն ու յայտարարութեանց, քանի որ պաշտօնապէս ստոյգ մահաւան գիրկն է, որ պիտի տանին մեզ»²⁷⁸:

Ելնելով ստեղծված ոչ հուսադրող իրավիճակից և զգաստանալով մանավանդ Շատախի դեպքերից հետո, Վանի հայությունն ազգային մարմիններից ու կուսակցական ղեկավարներից պահանջում է վերսկսել ընդհատված ընդհանուր խորհրդակցությունները: Արդյունքում որոշում է ստեղծել 14 հոգուց բաղկացած միջկուսակցական մի մարմին՝ Քաղաքական ժողով, որի քննությանն է հանձնվում Վանի հայ ազգաբնակչության բոլոր խավերի ու հոսանքների խնդիրները: Այդ մարմնի մեջ են մտնում Վանի բոլոր դասերի և խավերի, ազգային մարմինների և առաջնորդարանի աչքի ներկայացուցիչները, ՀՅԴ, Սահմանադիր ռամկավար և ՍԴ հնչակյան կուսակցությունների պարագլուխները, այդ թվում՝ ռամկավարներից՝ Հովսեփ Գույումճյանը,

²⁷⁸ Ա.Դո, նշվ. աշխ., էջ 154, Կոստյեան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիվները, էջ 24:

Ռուբեն Հովնանյանը, դաշնակցականներից՝ Իշխանը, Արամ Մանուկյանը, Գևորգ Չիտեցյանը, հնչականներից՝ Հրանտ Գալիկյանը, Խաչատուր Ջրբաշյանը, վաճառականների՝ Ավետիս Թերզիբաշյանը և ուրիշներ:

1915 թ. ապրիլի 1-ին Քաղաքական ժողովը Այգեստանի Նորաշեն թաղամասի ս. Աստվածածին եկեղեցում մի խորհրդակցություն է հրավիրում Վանի առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետ Ներկարարյանի ղեկավարությամբ և քննում փախստական զինվորների հարցը: Միաձայն որոշվում է շարունակել իշխանությունների համար առիթներ չստեղծելու քաղաքականությունը և գոհացում տալ կուսակալի պահանջներին: Նախատեսվում է մի նոր պատվիրակություն (քաղկացած՝ Ա. Թերզիբաշյանից, Գ. Չիտեցյանից և Ա. Վռամյանից) ուղարկել պատրվակ որոնող կուսակալի մոտ, կրկին անգամ փորձել ու համաձայնության եզրեր գտնել նրա հետ, բավարարել նրա պահանջները և երաշխավորությամբ ու մաս-մաս օսմանյան բանակին ամրաշեն զինվորներ տալ, որոնք պետք է մեկնեին Արճեշ և աշխատեին ճանապարհների շինարարության վրա *«թէկուզ նրանք դահճի ձեռքը մատնին»*²⁷⁹: Վահե Թաշճյանը կատարելով միանգամայն ճիշտ հարցադրում նշում է. *«Այս պայմաններուն մէջ պե՛րք էր շարունակել ամէլիները անգէն վիճակով ուղարկել ռազմաճակատ»*²⁸⁰:

²⁷⁹ Ա.-Դօ, նշվ. աշխ., էջ 154, **Կոստյեան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիվները, էջ 24

²⁸⁰ **Թաշճեան Վ.**, Իշխանը. Վանա Իշխանի կեանքն ու գործունեութիւնը, Երեւան, 1994, էջ 178:

Քաղաքական ժողովը Վանի առաջնորդական տեղապահ եզնիկ վարդապետին հանձնարարում է ապրիլի 2-ին հրապարակել մի կոչ, որով 18-45 (50) տարեկանները պետք է ցուցակագրվեն և կատարեն իրենց քաղաքացիական պարտքն օսմանյան հայրենիքի հանդեպ: Կոչում մասնավորապես նշվում էր. «Հայ հասարակության, Օսմանեան պետության ներկայ պատերազմին մէջ, կառավարության վերջին կարգադրության համաձայն, հայոց զինուորական ծառայութիւնը երկրագործական աշխատութեան և ճամբաներու շինութեանց յարկացուած ըլլալով եւ ձմեռուան եղանակին սոյն աշխատութիւնն թոյլատրու չլինելու եւ այլն կարգ մը պարճառներով, հայ զինուորացուներէն մէկ մասը իրենց պարտականութեան գլուխ չէին գտնուած: Արդ՝ երկրագործական եւ ճամբայի աշխատութեանց եղանակը արդէն սկսած եւ մանաւանդ, վստահ, որ կառավարութիւնը և ազգը ամէն միջոցներ խորհած են պաշտպանելու զինուորներու կեանքը, պատիւը և տունը մնացած ընտանիքը, ջերմապէս կը յորդորենք, որ մեր ազգայինք ժամ առաջ ընդ առաջ երթան կառավարութեան պատուէրին եւ փութան կատարել իրենց քաղաքացիական պարտականութիւնը:

1915, Ապրիլ 2

Վան-առաջնորդարան

Աղոթարար

Առաջն. փոխ. Վանայ

Եզնիկ վրդ. Ներկարարեան»²⁸¹:

²⁸¹ «Աշխատանք», Վան, 1915 թ. ապրիլի 4, թիւ 15=214, նաև Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԱ հատոր, Պէյրութ-Յունուար, 2015, էջ 296:

Ըստ էության, կոչը խաբեություն էր և դավաճանություն սեփական ժողովրդի նկատմամբ: Քաղաքական ժողովը և մասնավորապես իշխող դիրք գրավող դաշնակցությունը, աչքաթող անելով ժողովրդի հորդորները, շարունակ շեշտում էր հարմարվելու, համակերպվելու սկզբունքը և բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ էր համարում խոհականություն ունենալ, բավարարել կառավարության պահանջները և ժամանակ շահել:

Ակամայից հարց է առաջանում՝ հանուն ինչի՞ համար էր դաշնակցության և առաջնորդարանի այդ նվաստացումն ու համակերպումը, ու՞ր մնացին նրանց կողմից սերնդե-սերունդ ներարկված

հեղափոխական-հայրենասիրական դաստիարականությունը և ներշնչանքը, ո՞ր օրվա համար էին այն զենքերն ու զինամթերքը, որ նրանք պահում էին իրենց աչքի լույսի պես: Այս առիթով «Վարագ»-ը նկատում է. *«Ուրիշ ի՞նչ մեծ նուաստացում եւ յիմարտփին՝ քան նեւրել կամ թաքցնել զէնքերը ու երթալ անզէն կոտորուիլ իբրեւ թրքական բանակի ամրաշէն բանուոր: Ամենախիստ զգուշութիւնը մի՞թե երբեմն ամենամեծ անզգուշութիւնը չէ: Ինչու չիշել 1896-ի եւ չխրապուել անկէ երբգործը նոյն թուրքին հեւր է: Ինչո՞ւ մոռնալ 1908-ը...»*²⁸²:

Եվ վերջապես ամենակարևորը. եթե դաշնակցությունն իրոք 1912 թ. մայիսի 5-ից իր կապերը խզել էր իրթիհատի հետ, ապա ինչո՞ւ չէր ապստամբում: Որքանո՞վ էր ճիշտ հուսահատական նրա փորձերը հնարավորինս ժամանակ շահելու և նվազագույն զոհերով դուրս գալու մարտավարությունը, երբ երիտթուրքերն արդեն

²⁸² «Վարագ», բացառիկ, նուիրված Մեծ Եղեռնի եւ Վանի հերոսամարտի 50-ամեակի տարեդարձներուն, 1915-1965, 1965թ. ապրիլ, թիւ 49, էջ 102:

գործողության մեջ էին դրել արևմտահայության ցեղասպանության քաղաքականությունը:

Ըստ էության այլ կերպ էր մտածում Վանի երիտասարդությունը, որը հանդիսանալով դաշնակցության հիմնական ուժը, դեմ էր «խոհեմության» կարգախոսին և կոչ էր անում ինքնապաշտպանության: Նա ըմբոստացավ իր ղեկավարության վարած զգոնության քաղաքականության դեմ, հանդես բերեց արիություն և դիմադրական պայքարի կորով, նշելով, որ *«սարեր, ձորեր անարգ խայտառակ մահուան փոխարէն հոս նամուտվ կը մեռնինք»*²⁸³: Նրանք վստահ էին, որ *«կառավարութիւնը դաւեր է լարում, նա անվերջ դէպքեր է սրտեղծում և ջարդերի պատրաստութիւններ է տեսնում»*, հետևաբար *«չպիտի խաբւենք, կառավարութեանը վստահիլ այլևս յանցանք է, ինչ լինելու է, թող լինի»*²⁸⁴: Սակայն կացությունը ծանր էր, քանի որ դրված էր մի ամբողջ ժողովրդի գոյության խնդիրը և յուրաքանչյուր առիթ կարող էր ահավոր ջարդերի տեղիք դառնալ: *«Յամադիլ և շարունակել զիջումներու ճանապարհը, - գրում է Օ. Մխիթարյանը, - յիմարութիւն մըն էր, որ վայել չէր ոչ Դաշնակցութեան և ոչ ալ Վանի ռազմունակ երիտասարդութեան»*²⁸⁵ :

Կոչն իրականացնելու համար ընտրվում է հատուկ մասնախումբ, որը պետք է սկսեր 18-45 տարեկանների ընդհանուր ցուցակագրումը և ապրիլի 6-ին զինվորացուների առաջին խմբին՝ շուրջ 500 հոգու՝ Ա. Թերզիբաշյանի ու Հ. Գույումճյանի

²⁸³ Կոստյեան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 25:

²⁸⁴ Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 43:

²⁸⁵ Անդ:

ուղեկցությամբ հանձներ կառավարությանը²⁸⁶: Սակայն, այս և նմանատիպ այլ կոչերն ու զիջումներն էլ արդյունք չունեցան, քանի որ կուսակալը անվերապահորեն պահանջում էր, որ զինվորական հաշվառման տակ գտնվող Այգեստանի և Քաղաքամեջի 4000 հայ զինվորներն առանց երաշխիքի ներկայանային «ծառայության»²⁸⁷: Ինչպես Հ. Մորգենթաուն է մատնանշում, զորակոչիկներին ուղղակիորեն ցանկանում էին կոտորել՝ հայ բնակչության ցանկացած դիմադրություն գլխատելու համար²⁸⁸:

Քաղում հարցերի պատասխանը ստանալու ակնկալիքով Վանի երիտասարդությունը 1914 թ. ապրիլի 2-ին Այգեստանում գտնվող «Աշխատանք»-ի խմբագրատանը հանդիպում ունեցավ Իշխանի, Արամի և Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, Վանի դաշնակցության Արևմտյան բյուրոյի անդամ Ա. Վոամյանի հետ: Հատկանշական է ժողովի ժամանակ Ա. Վոամյանի տված բացատրությունն իր, Արամի և Իշխանի վրա բարդված մեղադրանքների առիթով. *«Դուք կը խօսիք կառավարութեան դատադրութեան մասին: Այո՛, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ Այգեստանէն-Քաղաք տանող ճամբուն վրայ: Գիտեմ, որ այն 500 ամելէները, զոր մենք խոստացեր ենք տալ առաջին առթիւ, դէպի անստորոգ ապագա մը, թերեւս դէպի մահը կ'առաջնորդենք, բայց... մենք չպիտի սկսենք, մենք չպիտի տանք ազդանշանը: Եւ,*

²⁸⁶ Տե՛ս **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 185:

²⁸⁷ Ըստ միս Նեփիի՝ 3000 զինվոր: Տե՛ս **Դերկոմս Պրայս Ճ.**, Անգղիական կառավարութեան կապոյտ գիրքը Հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ.Պոլիս, 1919, էջ 71:

²⁸⁸ Տե՛ս **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau's story*, New-York, 1926, p. 298.

վերջապէս, մենք համոզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր զիջումներուն և խաղաղասիրական ձգտումներուն՝ օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն: Այդ օրերը մօտեցած են... Բայց մեր ամբողջ նպատակն է քիչ զոհերով ազատիլ այս վիթխարի հարուածէն... Թո՛ղ Վռամեան մը չըլլայ, թո՛ղ Իշխան մը սպանուի, թո՛ղ 500 ամելներ անսպոյգ կամ անխուսափելի մահուան ենթարկուին, թո՛ղ ամբողջ գաւառ մը նոյնիսկ հողի ու սուրի տակ ոչնչանայ... Բայց թո՛ղ փրկուի մեծամասնութիւնը, թո՛ղ կարենայ ճողոպրիլ հայութիւնը իբրև ազգային հաւաքականութիւն... Միայն վերջին թուական, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ և թշնամիի սուրը կը երկարի ամբողջ հայ ազգի պարանոցին առհասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք ևս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան զէնքին և պաշտպանէք ինքզինքնիդ ու ձեր ազգութիւնը...»²⁸⁹:

Հ. Կոստյանը փորձելով արդարացնել Վանի դաշնակցական գործիչների գործելակերպը նշում է. «Մեր առաջնորդները կ'ըմբռնէին Զէվրէթի խաբկանքները, ինչպէս նաեւ անոր պահանջներուն աստուղը, բայց իրենց կեանքի գնով անգամ կողմնակից էին համաձայնութեան, հաշտութեան բոլոր միջոցներու սպառման: Զոհել ինչ որ կարելի է, ժողովրդի գոյութիւնը գէթ մէկ օր, մէկ ժամ անգամ երկարացնելու համար, - այս էր իրենց տեսակէտը»²⁹⁰:

Սակայն 500 զինվոր գիտակցված և կամավոր կերպով զոհաբերություն տալը տեղի չի ունենում Բերդակի դեպքի

²⁸⁹ Մխիթարեան Օ., նշվ. աշխ., էջ 36-37:

²⁹⁰ Կոստյան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 25-26:

պատճառով, իսկ դրանից հետո դաշնակցությունը «բացում է աչքերը» և հաշվի նստում Վանի մյուս կուսակցությունների, ազգային մարմինների ու խմբերի հետ՝ հասկանալով, որ պետք է դիմել ինքնապաշտպանության: Արդյունքը լինում է այն, որ Քաղաքական ժողովը որոշում է գումար հավաքել և այն բաշխել կուսակցությունների մեջ գենք գնելու նպատակով²⁹¹:

1915 թ. ապրիլի 2-4-ին Վանում դեռ բաց էին դպրոցները, Խաչ-փողոցի, Արարքի խանութները և քաղաքի շուկան, որի պաշտպանության և հսկողության, ինչպես նաև գիշերային անցուղարձին հետամուտ լինելու համար 1914 թ. նոյեմբերից կառավարության թույլտվությամբ և կարգադրությամբ կազմվել էր 15 հոգուց բաղկացած պահակախումբ՝ ոստիկանապետի գլխավորությամբ²⁹²: Սակայն կուսակալը նոր զորամասեր է մտցնում քաղաք, դրանք տեղավորում զորանոցներում, Չիտեյանների տանը (ուր այդ օրերին գտնվում էր ֆրանսիական հյուպատոսությունը, իսկ ավելի վաղ այն հանդիսանում էր Վանի նահանգապետերի բնակարանը), որի արդյունքում Քաղաքամեջի ու շրջանների հետ հարաբերությունները դժվարանում են: Երկրի համար այդ վճռական ժամին Թ.Ջևդեթը դեռ փորձում էր խաբել Ա. Վռամյանին, նրա միջոցով էլ վան-վասպուրականցիներին և սպասում էր հարմար առիթի: Նա փորձում էր հավաստիացնել, որ կատարվող զորաշարժերն արժեք չունեն, որ ինքը հայերի նկատմամբ ունի բարյացակամ վերաբերմունք և շարունակելու է իր հոր՝ ալբանացի Թահիր փաշայի հայասեր քաղաքականությունը:

²⁹¹ Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 188:

²⁹² Տե՛ս **Կոստյեան Հ.**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 28:

Սակայն նա իր հաշիվների մեջ սխալվում է, քանի որ Վանի հայությունը, առանձնապես նրա երիտասարդությունը, միշտ արթուն էր և աչալուրջ հետևում էր դավադիր նահանգապետի բացահայտ և ծածուկ բոլոր գործողություններին:

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍՎՋԲԻՆ²⁹³

Հոգևոր-կրոնական հարաբերությունները

Օսմանյան սահմանադրության հռչակումը նոր իրավիճակ ստեղծեց Վանի նահանգի հոգևոր-կրոնական հարաբերությունների զարգացման ոլորտում: Զավեն ծ.վրդ. Տեր-Եղիյանի առաջնորդության շրջանը (1908 թ. օգոստոսից մինչև 1909 թ. հոկտեմբեր)²⁹⁴ զուգադիպեց օսմանյան հեղաշրջման առաջ բերած խանդավառ ոգևորության առաջին միամյակին, երբ դեպքերի ժամանակակիցներից մեկի, Վանի հասարակական և մշակութային նշանավոր գործիչ՝ Հ. Երամյանի բնութագրմամբ «անկեղծ հաւատացեալներէն զաւր նաև սկեպտիկներս կը տարուէինք ոսկեղէն անուրջներով օրօրուելու»²⁹⁵:

²⁹³ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

²⁹⁴ Աղաւնունի եպս. Մ., Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 140:

²⁹⁵ Երամեան Հ., Յուշարժան Վան-Վասպուրականի, Կ. Բ., Ալեքսանդրիա, 1929, Կ.Բ., էջ 120:

Զավեն ծ.վրդ. Տեր-Եղիյանն իր ուղղակի և անուղղակի մասնակցությունն է բերում Վանում կատարվող կրոնաքաղաքական համընդհանուր անցուդարձերին և կարողանում է համազգային գործի կազմակերպման մեջ իր համար անձնուրաց գործակիցներ դարձնել նույնիսկ իր հակառակորդներին: Այս հարցում նրան մեծապես օժանդակում է Վան այցելած Էրզրումի հոգևոր առաջնորդ Տեր Սմբատ եպիսկոպոս Սահատեթյանը, որը Վանի առաջնորդի արմաշական դպրոցակիցն էր:

Զավեն ծ.վրդ. Տեր-Եղիյանն իր կարճատև կառավարման շրջանում Աղթամարի վանքի հասույթներով իրականացնում է Վանի դպրոցների՝ մասնավորապես Վանի ս.Գրիգոր վանքի իգական որբանոց-դպրոցի խնամատարությունը:

Զավեն ծ. վրդ. Տեր-Եղիյանի առաջնորդության շրջանը համընկավ նաև 1908 թ. հոկտեմբերի 30-ի Էջմիածնում Մատթեոս Իզմիրլյանի կաթողիկոսական ընտրության շրջանի հետ, որին մասնակցելու համար Վանի թեմից աշխարհական պատգամավոր է ընտրվում Պետրոս Գափամաճյանը, իսկ թեմի առաջնորդի կողմից առաջնորդական ներկայացուցիչ է նշանակվում Արարքի եկեղեցու հոգևորական՝ Մեսրոպ ավագ քահանա Ճանիկյանը²⁹⁶:

Միաժամանակ, նորընտիր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ շնորհավորական նամակներ են ուղարկվում

²⁹⁶ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1908 թ. հոկտեմբերի 28, թիւ 238, նաև **Տեր-Մկրտիչեան Ե.**, Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1967, էջ 298:

Էջմիածին՝ Լիմ անապատի փոխվանահայր Մակար վրդ. Հովհաննիսյանի²⁹⁷, Պետրոս Գափամաճյանի²⁹⁸, Վանի առաջնորդական տեղապահ՝ Զավեն ծ. վրդ. Տեր-Եղիյանի և ուրիշների անունից:

Վանի նահանգում գործում էին նաև կրոնական հաստատված փոխհարաբերություններ այլ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Այսպես, Անգլիկան եկեղեցու առաջնորդ՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսը և Վանի վաճառականության ներկայացուցիչ Պետրոս Գափամաճյանին է նվիրում մի քանի եկեղեցական-գեղարվեստական անոթներ՝ *«ի հաւաստիք նրա մատուցած անկեղծ բարեկամութեան՝ արքեպիսկոպոսութեան ասորի միսիօնարութեան»* մակագրությամբ²⁹⁹:

Ընդամենը 14 ամիս պաշտոնավարելուց հետո Տեր Զավեն ծ.վրդ. Եղիյանը տեղափոխվում է Վանից և ընտրվում է Տիգրանակերտի հոգևոր առաջնորդ: Նրա մեկնումից հետո տեղապահի պաշտոնը ժամանակավորապես վարում է Մեսրոպ ավագ քահանա Ճանիկյանը, ով իր համակրելի բնավորության շնորհիվ բարյացակամ ընդունելություն է գտնում ինչպես կառավարության, այնպես էլ հայ և թուրք շրջանակների կողմից:

²⁹⁷ Տե՛ս Մատենադարան, Մատթևոս Իզմիրյան կաթողիկոսի արխիվ, ց. 34, թղթ. 14, վավ. 527:

²⁹⁸ Տե՛ս անդ, վավ. 552:

²⁹⁹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911 թ. յունուարի 11, թիւ 4:

Նրանից հետո՝ 1910 թ. հուլիսին Վանի նահանգի հոգևոր առաջնորդ է նշանակվում Թավրիզի և Ամերիկայի երբեմնի թեմական առաջնորդ, պոլսեցի Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը³⁰⁰, որն անխոնջ գործում է մինչև 1913 թ. հոկտեմբեր՝ աչքի ընկնելով իր փորձառնությամբ և հայրական անբիծ նկարագրով³⁰¹: Նա քանդել է տալիս Վանի շուկայում գտնվող «*Հայոց գորանոց*» կոչվող ընդարձակ կալվածքը, որի հասույթները պատկանում էին առաջնորդարանին և նոր նախագծով կառուցում է երկհարկանի մի նոր առաջնորդարան, որին նվիրում է իր անձնական ողջ կարողությունը՝ 300 օսմանյան ոսկի:

Հովսեփ եպիսկոպոսի օրոք ազգային-հոգևոր գործերից աստիճանաբար հեռացվում են Վանի «ջոջերը»՝ Գ. Ճիտեջանը, Ժ. Միրզախանյանը, Պ. Գափամաճյանը, Ա. Թերզիբաշյանը և ուրիշները, և նրանց տեղը գրավում են երիտասարդները՝ հատկապես դաշնակցականները, որոնք անփորձ էին կառավարչական գործերի մեջ:

Վանի նահանգում, ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդական ազգաբնակչության շրջանում պատկառելի

³⁰⁰ Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը ծնվել է 1849 թ. Կ.Պոլսում: 1890 թ. վարդապետ ձեռնադրվելուց հետո նա որպես հոգևոր հովիվ մեկնում է Ամերիկա: 1896 թ. նա նշանակվում է Թավրիզի հոգևոր առաջնորդ: 1900 թ. Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը կրկին մեկնում է Ամերիկա, որտեղ 1904 թ. ընդգրկվում է Մ. Խրիմյանի առաջարկությամբ Եվրոպա մեկնած հայկական հարցի պատվիրակության կազմի մեջ: Տե՛ս «Աշխատանք» Իզմիր, 1913 թ. հոկտեմբերի 30 /նոյեմբերի 12, թիվ 37:

³⁰¹ Տե՛ս **Գագանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), Պոսթոն, 1950, էջ 94:

ականաճանք և հարգանք էր տաժում սուրբ Գեղարդը: Այդ մասին Հ. Երամյանը հիշում է. «Ամէն անգամ, երբ մարախ կամ որևէ համաճարակ կուգար, Հոգեաց վանքէն Գեղարդը քաղաք փոխադրելով՝ կրօնական հանդիսաւորութեամբ եկեղեցիները կը պարզփոխէին: Հաւատաւոր ժողովուրդը անխտիր կը դիմէր ի համբոյր Գեղարդին և համաճարակը կը մեղմանար ու կ'անհետանար: Արդ, երբ Նորաշէնու եկեղեցիէն Գեղարդը հանդիսաւոր թափորով Յայնկոյսներու եկեղեցին կը փոխադրուէր, Պողպարէդարի կամ Համուրաղենց զօրանոցի հրամանաւարն ընդ առաջ ելլելով թափորին, խնդրեց որ Գեղարդը զօրանոցին մէջ ալ հանուի կամ բացուի: Հայ զինուորներու օրինակով նաև շատ մը իսլամներ երկիւղածութեամբ և հաւատքով կը համբուրեն մասունքը և՛ իրենց իսկ թուրքերու վկայութեամբ՝ այդ օրէն հիւանդութիւնը կը կորսնցնէ իր թափը և քանի մը օրէն կ'անհետի զօրանոցէն: Այսպէս նաև շատ անգամ հաւատաւոր թուրքերը կը դիմէին հայ քահանային և աւետարան կարդալ կուտային իրենց հիւանդներուն վրայ: Շատերը ևս մերազնեից հաւատքով կը դիմէին հայոց նշանաւոր ուխտաւորեղիները և բուժուած ետ կը դառնային՝ իրենց իսկ խոստովանութեամբ: Այդ հաւատքն ու խոստովանութիւնը չափիի արգիլէին սակայն առհասարակ բոլոր իսլամները՝ վերջին պատերազմի ատեն մեր բոլոր սրբութիւնները պղծելէ և ուխտաւորեղիները քար ու քանդ ընելէ՝ առանց խղճահարութեան»³⁰²:

³⁰² Երամեան Հ., նշվ. աշխ., հ.Բ, էջ 154:

1910 թ. դեկտեմբերի 11-ին մահացավ Ամենայն հայոց հայրապետ Մատթեոս Բ կաթողիկոսը՝ «*Երկաթե Պապրիարքը*»³⁰³: Նրա անակնկալ մահվան գուժը Վան հասավ 1910 թ. դեկտեմբերի 17-ին և սաստիկ հուզում ու մեծ ցավ պատճառեց նահանգի հայության շրջանում: Մահվան առիթով ընդհատվեցին Վարագի դպրոցի դասերը: 1910 թ. դեկտեմբերի 19-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքի պատվերով Վանի բոլոր եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգստյան աղոթքներ, իսկ Արարք թաղի եկեղեցում տեղի ունեցավ պաշտոնական սգո հանդես, որին ներկա էին Վանի խուռն բազմությունը, կուսակալի փոխանորդը, ոստիկանապետը, ռուսական հյուպատոսի թարգմանը, ամերիկյան և գերմանական միսիոներները: Մատուցված հանդիսավոր պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ, որից հետո ելույթ ունեցողներից՝ ուսուցիչ Արտաշես Սուլախյանը դրվատանքի խոսքեր ուղղեց հանգուցյալ վեհափառին: Առաջնորդական նախկին փոխանորդ Մեսրոպ ավագ քին. Ճանիկյանն էլ հատկանշեց նրա զորեղ անհատականությունը, տոկուն կամքը և հայրենասիրությունը³⁰⁴:

Վանում ներքաղաքական լարվածության պայմաններում 1913թ. սեպտեմբերի 16-ին Վանի առաջնորդական փոխանորդ Տ. Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանը տնից եկեղեցի գնալու ժամանակ ենթարկվում է երկու անձանոթների հարձակման և

³⁰³ Տե՛ս **Костандян Э.А.**, Царское правительство и выборы католиков всех армян, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1991, թիվ 3, էջ 158:

³⁰⁴ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911 թ., յունուարի 9, թիւ 3, յունուարի 11, թիւ 4:

դաժան ծեծի, որի շարժառիթը Արարուց թաղական խորհրդի անդամ ընտրված մի հայի մասին եղած ամբաստանության գործի քննությունն էր³⁰⁵: Նա մահացավ 1913 թ. հոկտեմբերի 2-ին Վանի Ամերիկյան հիվանդանոցում, իսկ Ազգային վարչության ջանքերով հոկտեմբերի 5-ին Վանի Նորաշեն եկեղեցում կազմակերպվեց նրա թաղում, որին ներկա էին Վանի կուսակալ Հասան Թահսինը, կառավարական պաշտոնյաները, Վանի հյուպատոսությունների ներկայացուցիչները և ժողովուրդը³⁰⁶:

Եկեղեցական կյանքը

Վան-Վասպուրականի երբեմնի տարածքը հայտնի էր իր նշանավոր եկեղեցիներով ու վանքերով, որոնք տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Վանի սանջակ՝ 130 եկեղեցի և 25 վանք, Լիմ-Կտուցի շրջան՝ 32 եկեղեցի, Աղբակի (Բաշկալե) շրջան՝ 23 եկեղեցի և 7 վանք, Աղթամարի կաթողիկոսություն՝ 263 եկեղեցի և 6 վանք, Խիզանի եպիսկոպոսություն՝ 69 եկեղեցի և 16 վանք³⁰⁷:

Հ. Ոսկյանի հաշվարկներով Վան-Վասպուրականի վանքերն ու եկեղեցիներն ունեին հետևյալ պատկերը՝ Ռշտունիք՝ 32 վանք և եկեղեցի, Վան-Տոսպ՝ 14³⁰⁸, Գնունեաց և Առբերանի՝ 14, Վանա լճի կղզիներ՝ 5, Արճիշահովիտ,

³⁰⁵ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1911 թ., հոկտեմբերի 12, թիւ 226:

³⁰⁶ Տե՛ս «Կոհակ», Կ.Պոլիս, 1913 թ. հոկտեմբերի 27/9, թիւ 66, էջ 580-581:

³⁰⁷ Տե՛ս **Ղազարեան Հ. Գ.**, Յեղասպան թուրքը, Պէյրուս, 1968, էջ 215-216:

³⁰⁸ 20-րդ դ. սկզբին միայն Վան քաղաքն ուներ 12 եկեղեցի, որոնցից 5-ը՝ Այգեստանում, 7-ը՝ Քաղաքամիջում, Տե՛ս **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904 թ., թիւ 12, էջ 40:

Քաջբերունի և Արծկե՝ 17, Արտազ՝ 1, Նախճավան՝ 4, Գողթն՝ 14, Անձնացյաց, Բողունիք և Երվանդունիք՝ 20, Աղբակ՝ 6, Մոկք, Խիզան և Շատախ՝ 42, Սալնաձոր՝ 3: Ընդամենը՝ 172 վանք-եկեղեցի³⁰⁹:

Ըստ այլ հաշվարկների՝ Վանի նահանգում կար 537 վանք-եկեղեցի³¹⁰:

Ներկայացնենք որոշ վանքերի վիճակը³¹¹:

Աղթամարը Մայր Աթոռ ս. Էջմիածնի բարոյական իրավասությանը ենթակա կաթողիկոսական աթոռներից մեկն էր, որը հաստատվել էր 1114 թ. և ունեցել է 57 կաթողիկոսներ: Ըստ Մ. Օրմանյանի Աղթամարի կաթողիկոսությունը բաղկացած էր երկու առաջնորդարաններից՝ Աղթամարի և Խիզանի եպիսկոպոսություններից: Աղթամարի կաթողիկոսական աթոռին էին ենթարկվում Գավաշի, Շատախի և Կարճկանի կազաները (գավառակներ): Այն ուներ 130 թաղ, 203 եկեղեցի, 70.000 հայ և 500 բողոքական բնակչություն³¹²: Ըստ Տ.Չիթունու՝ Աղթամարի

³⁰⁹ Տե՛ս **Դկտ. Ոսկեան Հ.** հ., Վասպուրական-Վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 139-379, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 385-571, 673-738, Գ մաս, Վիեննա, 1947, էջ 745-918:

³¹⁰ Տե՛ս **Կարապետյան Ա.**, Հայ մշակութային արժեքների Եղեռնը Արևմտյան Հայաստանում, Երևան, 2004, էջ 5:

³¹¹ Վանի որոշ վանքերի նկարագրությունը տե՛ս **Պալեան եպիսկոպոս Տ.**, Հայ վանորայք, Ս. Էջմիածին 2008, էջ 262-269:

³¹² Տե՛ս **Օրմանեան Մ. արքեպիսկոպոս, նախկին պատրիարք**, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը, Կ.Պոլիս, 1912, էջ 208:

եպիսկոպոսությանն էին ենթարկվում 193 եկեղեցիներ և 40 վանքեր: Աղթամարի աթոռի մաս կազմող Խիզանի եպիսկոպոսությունն ընդգրկում էր Խիզանի կազան և ուներ 64 թաղ, 69 եկեղեցի և 2.500 հայ ազգաբնակչություն: Ըստ Չիթունու՝ այն ուներ 109 եկեղեցի և 16 վանք³¹³:

Ա. Սաֆրաստյանը նկատի ունենալով, որ Վանի նահանգն ուներ հոծ հայ ազգաբնակչություն, ենթադրում է, որ այնտեղ եկեղեցիների թիվը պակաս չէր կարող լինել Էրզրումի նահանգում եղած մոտ 250 վանքերից և եկեղեցիներից³¹⁴: Իսկ Տ. Չիթունու հավաստմամբ՝ Աղթամարի կաթողիկոսության ենթակայության տակ էր գտնվում 358 եկեղեցի և վանք³¹⁵:

Աղթամարի Ա. Իսաչ եկեղեցին ոչ միայն Վասպուրականի, այլ նաև Արևմտյան Հայաստանի ամենահարուստ վանքերից մեկն էր: Այն աչքի էր ընկնում իր եկեղեցական բազմատեսակ և թանկարժեք սպասներով, անոթներով, ոսկեղեններով, կաթողիկոսական ականակուռ թագերով, արծաթյա գավազաններով, ոսկյա, արծաթյա սկիհներով, ոսկեհյուս շուրջառներով, ոսկեքանդակ գոտիներով, կաշեկազմ ձեռագրերով, տպագրված թանկարժեք Մաշտոցներով, Նարեկներով, Ավետարաններով,

³¹³ Տե՛ս **Չիթունի Տ.**, Յուշիկք Հայաստանի (vade-mecum d' Armenie), Կ. Պոլիս, 1919, էջ 64-65:

³¹⁴ Տե՛ս **Սաֆրաստյան Ա. Խ.**, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիները (1912-1913 թթ.), Էջմիածին, 1965 թ., թիվ Ա, հունվար, էջ 42:

³¹⁵ Տե՛ս **Չիթունի Տ.**, նշվ. աշխ., էջ 64-65:

ժամագրքերով, որոնք զարդարված էին գույնզգույն գոհարեղեններով և արծաթաքանդակ նկարներով:

Աղթամարի կաթողիկոսների իրավասությունը տարածվում էր բազում գավառների, քաղաքների, գյուղերի և վանքերի վրա: Այն ուներ մշակելի դաշտեր, անդաստաններ, մեծ քանակությամբ շարժական և անշարժ գույք³¹⁶: Վանքն ուներ 5-6 աղորիներ (ջրաղացներ), 3-4 անմշակ մնացած այգիներ, 11 արտեր, մի քանի մարգագետիններ, 200 գլուխ ոչխարներ: Աղթամարն ուներ նաև իրեն ենթակա բազմաթիվ վանքեր, որոնցից տարեկան ստանում էր 50 ղուրուշից մինչև 10 ոսկի «մուքաթա» (տուրք- Ա. Հ.)³¹⁷: Այդ վանքերից էին՝ Նարեկա վանքը, Ոստան գավառի ս.Նշան և Սպիտակ (Սևակու) գմբեթավոր վանքը և այլն:

Վանքերից զատ Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա էին նաև Հայոց ծորի և Ռշտունյաց գավառի մոտ 40 գյուղեր³¹⁸: Տարբեր առիթներով և տարբեր ժամանակներում վանքը ստացել էր թանկարժեք սպասներ, անոթներ, ձեռագրեր և եկամուտներ: Վանքի ուխտագնացության օրը Խաչվերացի տոնն էր, երբ բազմաթիվ ուխտավորներ այնտեղ էին հավաքվում իրենց ուխտը նշելու և նվերներ ընծայելու համար³¹⁹:

³¹⁶ Տե՛ս «Փորձ», Թիֆլիս, 1879 թ., թիվ IV, ապրիլ, էջ 62, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1909 թ., նոյեմբերի 13/26, թիվ 132:

³¹⁷ Տե՛ս «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1909 թ., նոյեմբերի 13/26, թիվ 132:

³¹⁸ Տե՛ս Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ.508, ց.1, գ.268, թ.12:

³¹⁹ Տե՛ս **Շէրենց Գ.**, Սրբաւայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց Վանօրէից և ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 121, նաև **Սրուանձտեանց Գ.**, Մանանայ, Կ.Պոլիս, 1876, էջ 398:

1895 թ., երբ Վանի բոլոր վանքերն ավերվեցին, բացառություն կազմեց միայն Աղթամարը: Քրդերը չհամարձակեցին կողոպտել վանքը, քանի որ *«ուխարի կու գային այնտեղ և նուէրներ կը բերէին»*³²⁰:

1895 թ. հասարակական կարծիքի և էջմիածնի ճնշման տակ Աղթամարի կաթողիկոսությունը կորցրեց իր երբեմնի դերն ու նշանակությունը, և այնտեղ նշանակվեց կաթողիկոսական գահի տեղապահ՝ նախ եպիսկոպոսական, իսկ ապա նույնիսկ վարդապետական աստիճանով: Վերջին տեղապահը Արսեն վարդապետ Մարգարյանն էր՝ կաթողիկոսական փոխանորդի տիտղոսով, որը վերաշինեց եկեղեցին և վերաբացեց դպրոցը³²¹:

ՀԿԸՄ կենտրոնը 1914 թ. աշնանը ցանկանում էր վերանորոգել Աղթամարի տաճարի փլատակ զանգակատունը և Նարեկացու գերեզմանը, սակայն սկիզբ առած պատերազմական գործողություններն ի չիք դարձրեցին այդ նպատակները³²²:

³²⁰ **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժումների օրերէն. յուշեր 1890 Էն 1940, Փարիզ, 1947, էջ 164-165:

³²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.427, ց.1, գ.18, թ.9, նաև **Ակինեան վ. Ն. հ.**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920, էջ 192: Ի դեպ, Ե. Լալայանը Մ. Մաքսուդյանին գրած իր նամակներից մեկում հայտնում էր, որ ինքը 1915 թ. Վանում գտնված ժամանակ մի ձեռագրից ընդօրինակել էր Աղթամարի կաթողիկոսության պատմությունը: Տե՛ս **Աղամյան Ա. Հ.**, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների, 1965, թիվ 8, էջ 71-77:

³²² Տե՛ս Ոսկեմատեան. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արծաթեա Յոբելեան 1906-1931, Ա հատոր, Բարիզ, 1935, էջ 116:

Վասպուրականցիների շրջանում մեծ ժողովրդականություն էր վայելում նաև Վարազա վանքը: 1855 թ. սկսած, երբ Մկրտիչ Խրիմյան վարդապետը վանքի մեջ սկսեց իր անդրանիկ մշակութային գործունեությունը, Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանը Վարազա վանքը դուրս բերեց Վանի ազգային առաջնորդարանի իրավասությունից, որի «երևելիները»... վանքը իրենց համար ամարանոց դարձուցած էին» և այն ուղղակիորեն ենթարկեց Կ. Պոլսի պատրիարքարանին՝ դրանով նրա գործունեությունը զերծ պահելով կամայականություններից: Այն «միակն էր, որուն «խնամակալութան» Հ.Յ. Դաշնակցութիւնը «տենչալով տենչայր... բայց պիտի չկարենար իրագործել իր այդ տենչը»³²³:

Մ. Խրիմյանն «այդ խեղճ ճգնարանի մէջ» կենդանի շարժում ստեղծեց իր հիմնած տպարանով, հրատարակած «Արծուի Վասպուրականի»-ով և իր բացած ժառանգավորաց (հետագայում՝ «Երկրագործական») վարժարանով: Այդ վանքում էր, որ նա դաստիարակեց ժողովրդին նվիրված մի ազգընտիր սերունդ, որի ներկայացուցիչներն իբրև քարոզիչ, մատենագիր, վարդապետ, քահանա և ուսուցիչ մտան ժողովրդի մեջ: Դրանց թվում էին՝ Գ. Սրվանձտյանը, Ա. Թոխմախյանը, Ա. Տեր-Սարգսենցը (Տնկանց), Ղ. Փիրղալեմյանը, Դանիել վարդապետը, Ա. Միրախորյանը, Ա. Աղվանյանը և ուրիշներ:

Սակայն 1885 թ. Մ. Խրիմյանի աքսորից հետո կառավարությունը փակեց տպարանը, վարժարանը,

³²³ Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 219:

բռնագրավեց մամուլը, բանտարկեց վարդապետներից շատերին և թուրքերենով սկսեց հրատարակել «Վան» պաշտոնաթերթը:

1896 թ. այրվեցին Վարագի ս. Խաչի և ս. Գրիգորի վանքերը և դրանց կից գործող դպրոցները, ջարդուփշուր արվեցին բոլոր խաչքարերը և պատկերները, իսկ շարժական սրբությունները՝ սկիհը, խաչը, եկեղեցական զգեստները թալանվեցին³²⁴:

Վանի 1896 թ. դեպքերից հետո՝ մինչև 1915 թ., Պատրիարքարանի ցուցումով վանքը կառավարվում էր 5 հոգաբարձուների միջոցով³²⁵: 1909 թ. մայիսին Վանի նահանգի Ազգային վարչությունը՝ հակառակ օսմանյան սահմանադրության, կազմալուծելով հոգեբարձուների հին կազմը, ընտրում է նորը, որի երկու անդամները նշանակվում են Քաղաքային ժողովի անդամներից³²⁶:

Վարագա վանքը զբաղվում էր երկրագործությամբ, տավարաբուծությամբ, շերամապահությամբ, մեղվաբուծությամբ, թռչնապահությամբ, ոչխարաբուծությամբ և ծառաստանների մշակությամբ: Միայն 1909 թ. վանքի տարածքում տնկվել էր 6000 թթենի³²⁷:

³²⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.184, թ.56-57:

³²⁵ Տարբեր տարիներին վանքի հոգաբարձուներ են եղել Պ. Գափամաճյանը, Ա. Աղվանյանը, Ռ. Շատվորյանը, Ա.Թերզիբաշյանը, Ի. Հյուսյանը, Մ. Ճիտեցյանը, Մ. Երամյանը և Հ. Ժամագործյանը: Տե՛ս **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 220:

³²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.421, ց.4, գ.18, թ.1-2:

³²⁷ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. սեպտեմբերի 11, թիւ 199:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ 1909 թ. Վարազա վանք է այցելում Վանի նահանգապետ Բեքիր Սամին, որը վանքին նվիրում է ինկուբատոր³²⁸: Իր հերթին, ծագումով նախիջևանցի ազնվական, հայազգի Կարասուլովը վանքի հետագա բարգավաճումն ապահովելու համար վանքին նվիրաբերում է նաև մեծ գումար³²⁹:

1915 թ. քրդերը հրկիզում են Վարազա վանքը և հրո ճարագ դարձնում վանքի նշանավոր 300 ձեռագրերը, որոնց ցուցակը մինչ այդ կազմել էր Երվանդ Լալայանը³³⁰: Բարեբախտաբար, 1915 թ. հուլիսյան Մեծ գաղթի ժամանակ հաջողվեց փրկել Վարազա վանքի հարստությունների հիմնական մասը: Այդ մասին Ա. Եկարյանը հիշում է. *«Պատրաստուեցայ մեկնելու, ինձմէ առաջ էջմիածին ճամբայ հանելով Վարազայ վանուց մարենադարանը, եկեղեցական անօթները ու վանքին վերաբերող բոլորն արժէքաւոր առարկաները՝ կանոնաւորապէս ցուցակագրուած և սնւրուկներու մէջ տեղաւորուած, ութը ֆուրկօններով, Վանի առժամանակեայ հոգևոր հովիւ Օհաննէս վրդ.-ի պատասխանատուութեամբ և վստահելի զինուորներու պաշտպանութեամբ: Այս առարկաներուն մէկ հատը հաւաքած էր Արամը, իր կարծարև մուտքին ի Վան, բայց ռուսական յանկարծական նահանջին պատճառաւ չկրնալով հետը տանիլ,*

³²⁸ Տե՛ս **Свящ. Бекгульянц Р.**, По Турецкой Армении, Впечатления от поездки летомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914, с.18-19.

³²⁹ Տե՛ս անդ., с.20.

³³⁰ Տե՛ս **Պատկերագիրք**. Պատասխան 100 տարի անց, Երևան, 2015, էջ 150:

ծգել տրուած էր ջրհորի մը մէջ և մենք պատահաբար գտած ու դուրս հանած էինք...»³³¹:

Անկայուն վիճակ էր տիրում նաև ս. Բարդուղեմեոս վանքում, որը հեռու էր գտնվում Վանի Ազգային վարչության ուշադրությունից³³²:

Լիմը ենթակա էր էջմիածնի կաթողիկոսությանը և ուներ բազմանդամ միաբանություն: Այն իր տրամադրության տակ ուներ 16 գյուղ³³³, այդ թվում՝ Զանիկը, Տառապեքը, Նորշենը, Հատըռը, Նորավանցը, Գոմսը, Շահկելտին, Խժիկը, Համուկը, Բերգարիպը³³⁴: Նրա գերիշխանության տակ էին գտնվում Տիրամոր, Աստվածածնի և էջմիածնի ս.Սահակի վանքերը³³⁵: Լիմն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, անտառներ, այգիներ, 4 ջրանցք և խանութներ: Այն օգտվում էր այլ և այլ (կաթի, պսակի) տուրքերից³³⁶: Իր հերթին, Լիմը ենթարկվում էր պետական ծանր հարկատվության, որը կազմում էր տարեկան 1000, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 2000 ղուրուշ: Եվ քանի որ այդ գումարն այնքան էլ հեշտ չէր վճարել, շատ վանահայրեր

³³¹ Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 270:

³³² Տե՛ս ՀԱԱ, ֆ.421, ց.4, գ.11, թ.8:

³³³ Տե՛ս «Արարատ», էջմիածին, 1898 թ., սեպտեմբեր, թիւ 9, էջ 400:

³³⁴ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1882 թ., յուլիսի 4, թիւ 20, էջ 312-313:

³³⁵ Տե՛ս **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղևորութիւն ի Հայաստան գաւառս Արևելեան Տաճկաստանի. տեղագրութիւնք սարէն և ձորէն, հնէն և նորէն» պիտանի գիտնոյ, մասն Ա, Կ.Պոլիս 1884, էջ 280, նաև «Արեւելք», Կ.Պոլիս, 1901 թ., նոյեմբերի 6/19, թիւ 4785:

³³⁶ Տե՛ս «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912 թ., XXII գիրք, թիւ 1, էջ 91-92, **Շէրենց**, նշվ. աշխ., էջ 13, 78, «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1911 թ., էջ 4366-4368, «Փորձ», Թիֆլիս, 1879 թ., թիվ IV, ապրիլ, էջ 62-63, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910 թ., թիվ 24, էջ 369:

ենթարկվում էին տանջանքների, կամ էլ իրենց պաշտոններից զրկվում էին իբրև հետադուր³³⁷:

Լիմը բոլոր ժամանակներում համարվում էր անապատ, որի պատճառով էլ կղզու միաբաններն ազգային կյանքով և գրականությամբ այնքան էլ չէին հետաքրքրվում³³⁸: Հ. Սարգիսյանը խոսելով Լիմի միաբանների մասին՝ գրում է. «Եկեղեցիք կղզեացոյ նորաշէն են, որ աւելի քան զերկերիւր ամաց, և տաճարաւորք երկոքեան և նմանաձեք իրերաց...: Խաչվառք խորանացն ոսկեզօծք և փառահեղք և ամենայն սպասքն մաքուրք և վայելուչք և կարգ աստուածային պաշտամանցն անթերի և անխափան, նա և առաւելութեամբ իսկ. զորոյ զնմանն չէ ուրեք տեսանել՝ ի Հայաստան աշխարհի: Կարգ սաղմոսերգութեանցն որպէս կարգեալ սահմանեցաւ ՚ի նախնեաց՝ ՚ի սոսա անթերի կարարի, եօթնիցս յաւուրն պաշտել անխափան զժամերգութիւն և գուր զանոնս սաղմոսացն բաժանեալ ՚ի նոսա...»³³⁹:

Հ. Ոսկյանն ավելացնում է, որ «անոնց մէջ քիչ չէին անհաւաններ, որոնք անգամ մը ինքզինքնին կղզիին կամաւոր կալանաւորեալներ հռչակած, այն տեղ ապրած ու հոն մեռած էին առանց դիմացի երկրին հողին վրայ ուրք կոխելու»³⁴⁰:

³³⁷ Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Լրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա, հ. Ա (Նոր Հայաստան), Վենետիկ, 1806, էջ 155-156:

³³⁸ Տե՛ս **Ակիսեան վ. Ն. հ.**, Մովսէս Տաթևացի. Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 189

³³⁹ **Սարգիսեան Ն. հ.**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ-ՌՅԺԳ, 1864, էջ 278:

³⁴⁰ **Դկտ. Ոսկեան Հ. հ.**, նշվ. աշխ., Ա մաս, էջ 51:

Նրանք հրաժարվել էին մսեղեն կերակուրներից և ըմպելիքներից՝ բավարարվելով միայն կանաչեղենով և ջրով, չունեին մահճակալ և փափուկ անկողին, իսկ նրանց զգեստը խոշոր էր, անպաճույճ և ցփսեա:

Կանանց մուտքը Լիմ անապատ խստիվ արգելված էր: Նույնիսկ անմորուս պատանիները չէին կարող այնտեղ մտնել: Ինչպես Հ. Ոսկյանն է մատնանշում նրանք պետք է կղզու դիմաց գտնուող «Դրսի տան» մեջ մնային, մինչև որ «անոնց կզակը մազով պափուկ: Ապա կը մտնէին կղզին, ուր երիցագոյններու առաջնորդութեան տակ կրօնաւորական կեանքի սկզբունքները կը սորվէին և ժամասացունան, գիտութեան ու գրչագրութեան արուեստին մէջ կը հրահանգուէին»³⁴¹:

1916 թ. ռուսական մամուլի մեջ հաղորդումներ հրապարակվեցին այն մասին, որ թուրքերի կողմից կողոպտվել էին Լիմ անապատի 300 մագաղաթե ձեռագրերը և 800 կտոր պղնձե հին առարկաները:

Կտուց անապատը ժամանակին ենթարկվում էր Աղթամարի, իսկ հետո՝ Էջմիածնի կաթողիկոսությանը: Այն չունեի Լիմի չափ բազմանդամ և հաստատուն միաբանություն, սակայն սակավաթիվ էլ չի եղել (40-50 ճգնավոր)³⁴²: Չնայած միաբանները գրական և ժողովրդական ցայտուն գործունեություն չեն ծավալել, սակայն իրենց անբասիր վարքով

³⁴¹ Անդ:

³⁴² Տե՛ս «Փորձ», Տիփսիս, 1879 թ., ապրիլ, թիւ IV, էջ 62, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911 թ., XXI գիրք, էջ 93:

և կենցաղով արժանացել են հայ ժողովրդի համակրանքին: Կտուցի թեմի մեջ էին մտնում Մարմետ, Խավենց, Ամենաշատ, Եկմալ, Զիրաշեն, Ալիւր, Դուլաշեն և Աննավանք գյուղերը³⁴³: Այն իր շուրջն ուներ 1500-2000 օրավար մշակելի հող, 200 կալվածներ, Ավանցի մեջ 40 ճաշկ³⁴⁴ ջուր, անտառ, այգի, արոտատեղի, ձիթհանք, ջրաղաց, Վանի, Էդիրնեի, Ռոտոստոյի և Թիֆլիսի մեջ տներ, պանդոկներ, խանութներ, անասնապահական տնտեսություն, 300 գլուխ ոչխար, 108 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր և էշեր: Վանքի ընդհանուր եկամուտը կազմում էր 300 օսմանյան լիրա (2600 ռուբ.)³⁴⁵:

Վանքը դրամական և նյութական այլ և այլ տեսակի նպաստներ էր ստանում տոնական օրերին և հավատացյալներից օգնություն խնդրելու միջոցով, որով հոգացվում էր միաբանների պետքերը, վերանորոգվում էին շենքերը, վճարվում էին տուրքերը և հետ բերվում թալանված իրերը³⁴⁶: Կանանց մուտքը կղզի բացարձակ արգելված էր:

Ճիշտ է 1848 և 1896 թվականներին Կտուցի անապատը ենթարկվել էր քրդերի հափշտակություններին և կողոպուտին³⁴⁷, սակայն այն ուներ աշխույժ հոգևոր-

³⁴³ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1882 թ., յուլիսի 4, թիւ 20, էջ 313:

³⁴⁴ Այգին ջրելու ժամանակամիջոց (Վանի բրբ.):

³⁴⁵ Տե՛ս «Աշխատանք», Վան, 1911 թ., թիւ 50, էջ 734-735:

³⁴⁶ Տե՛ս **Դկտ. Ոսկեան Հ. հ.**, նշվ. աշխ., Ա մաս, էջ 83:

³⁴⁷ Տե՛ս **Շէրենց Գ.**, նշվ. աշխ., էջ 73, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912 թ., XXII գիրք, թիւ 1, էջ 87, **Սարգիսեան Ն. հ.**, նշվ. աշխ., էջ 278, **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., մասն առաջին. Ասիա հ. Ա, (Նոր Հայաստան), էջ 155, **նույնի՝** Ստորագրութիւն, Հին Հայաստանեայց... ըստ հին և ըստ միջին

մշակութային կյանք: Այնտեղ գործում էր դպրոց՝ 14 աշակերտով³⁴⁸: Հ.վ.Հյուսյանը նկատում է, որ 1915 թ. ջարդերի ժամանակ եկեղեցու ունեցվածքի ամենաընտիր մասը՝ եկեղեցական բոլոր հնություններով և սրբություններով բաժին հասավ թուրքերին «շնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես և կամակոր Ստեփան աբեղային...»³⁴⁹:

Հայոց առաջնորդարանի տվյալներով՝ Վանի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի նախօրյակին Վանի նահանգում գործում էր ընդամենը 35 վանք ու եկեղեցի, որից 16-ը՝ Վան քաղաքում, 5-ը՝ Թիմարի, 1-ը՝ Արճակի, 1-ը՝ Բերկրիի, 4-ը՝ Արճեշի, 2-ը՝ Ալջավազի, 5-ը՝ Կարճկանի և 1-ը՝ Աղբակի գավառներում³⁵⁰: Թեմի հոգևոր-եկեղեցական հաստատություններից երկուսը՝ Կտուց անապատը և Այուրի վանքը վանական համալիրներ էին:

Եզրակացություն

Երիտթուրքական հեղաշրջումը և օսմանյան սահմանադրության հաստատումը նոր իրավիճակ ստեղծեցին Վանի նահանգի հոգևոր-կրոնական և եկեղեցական հարաբերությունների ոլորտում:

դարուանուանեալ ժամանակաց, հանեալ ի գրոց մերոց նախնեաց և այլոց ազգաց... Մեծ Հայք (Հին Հայաստան), Վենետիկ, 1822, էջ 227, նաև «Գեղունի», Վենետիկ Ս.Ղազար, 1905 թ., թիւ 1-10, էջ 69:

³⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ.421, ց.4, գ.14, թ.10-14:

³⁴⁹ **Տէր-Վարդանեան Գ.**, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան, 2004, էջ 114:

³⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.25, թ.31, նաև ֆ. 421, ց.4, գ.23, թ.1-6: